

Գ.Սաֆարյան, Ա. Եսայան

Հոռմեական իրավունք

Ուսումնական ձեռնարկ բուհերի համար

Ուսումնական ձեռնարկը հրատարակություն է երաշխավորել ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ

Գառնիկ Հրաչիկի Սաֆարյան – իրավ. գիտ. դոկ., պրոֆեսոր

Արմեն Կարլենի Եսայան - իրավ. գիտ. դոկտոր

Հոմեական իրավունք: Ուսումնական ձեռնարկ: Երևան, 2011, 117 էջ

Ուսումնական ձեռնարկում համակարգված ձևով շարադրված է հոմեական իրավունքը դասընթացի հիմնական ինստիտուտները և ռեցեպցիան միջնադարյան Եվրոպայում:

Ուսումնական ձեռնարկում ներկայացված է նաև Հոմեական իրավունքի դասընթացի ծրագիրը:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է իրավաբանական բուհերի և իրավաբանական ֆակուլտետների համար:

Բովանդակություն

Ներածություն	4
Գլուխ 1 Հոմեական իրավունքի նշանակությունը, համակարգը և պատմական զարգացման հիմնական ուղենիշները	
1.1. Հոմեական իրավունքի տեսական և գործնական նշանակությունը.....	5
1.2. Հոմեական իրավունքի պատմական զարգացման հիմնական ուղենիշները.....	13
1.3. Հոմեական իրավունքի համակարգը.....	19
Գլուխ 2 Հոմեական իրավունքի աղբյուրները և համակարգումը (օրինակարգումը)	
2.1. Հոմեական իրավունքի աղբյուրները.....	21
2.2. Հոմեական իրավունքի համակարգումը.....	29
Գլուխ 3 Հանրային իրավունքի զարգացման հիմնական ինստիտուտները	
3.1. Պետականության ձևավորումը և զարգացումը Հին Հռոմում.....	33
3.2. Թագավորության ժամանակաշրջան.....	34
3.3. Հանրապետության ժամանակաշրջան.....	37
3.4. Միապետության ժամանակաշրջան.....	47
3.5. Քրեական իրավունքի և քրեական դատավարության հիմունքները.....	50
Գլուխ 4 Հոմեական մասնավոր իրավունքի հիմնական ինստիտուտները	
4.1. Քաղաքացիական դատավարության բնորոշ գծերը.....	54
4.2. Անձի իրավական դրության հիմունքները.....	59
4.3. Ընտանեկան իրավունք.....	65
4.4. Գույքային իրավունք.....	70

4.5. Պարտավորական իրավունք (ընդհանուր մաս).....	75
4.6. Պարտավորությունների տեսակներ.....	79
4.7. Ժառանգման իրավունք.....	83
Գլուխ 5 Հոռմեական իրավունքի Եվրոպայում.....	87
Գլուխ 6 Հունա-հոռմեական (բյուզանդական) իրավունքի աղերսը հայ իրավունքի	105
Հավելված.....	113
Օգտագործված գրականության ցանկ.....	114

Ներածություն

Համաշխարհային իրավական մշակույթի մեծագույն արժանիքներից է հռոմեական իրավունքը, որը զգալի նշանակություն ունեցավ հետագա դարերի իրավական ինստիտուտների, կատեգորիաների և հայեցակարգերի ձևավորման ու զարգացման վրա: Այն հանդիսանում է արդի դարաշրջանի հիմնական իրավական համակարգերից մեկի՝ ռոմանա-գերմանական իրավական համակարգի ձևավորման հիմքը: Հռոմեական իրավունքի շատ ինստիտուտներ, սկզբունքներ և հայեցակարգեր մինչև այժմ էլ շարունակում են իրենց կենսագործունեությունը՝ որոշակի փոփոխություններով ու խմբագրություններով հանդերձ:

Հռոմեական իրավունքը, որպես ուսումնական դասընթաց, երկար ժամանակ ուսումնասիրվում է հաստատությունների իրավաբանական ֆակուլտետում: Այս առումով, գտնում ենք, որ սույն ուսումնական ձեռնարկը որպես դասընթաց, օգտակար կլինի ուսանողության ասպիրանտների և դասախոսների համար:

Գլուխ 1

Հռոմեական իրավունքի նշանակությունը, համակարգը և պատմական զարգացման հիմնական ուղենիշները

1.1. Հռոմեական իրավունքի տեսական և գործնական նշանակությունը

Հին Հռոմի իրավունքը համաշխարհային պատմության փայլուն և նշանակալից էջերից է: Հասունացած, դասական հռոմեական իրավունքը մարդկային մտքի հանճարեղ նվաճումներից է:

Հռոմեական իրավագիտության ծագման ու զարգացման բարդ գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «հին» բառը այդ երկրի անվան հետ գործածելը կրում է զուտ խորհրդանշական բնույթ: Դա բացատրվում է ամենից առաջ նրանով, որ այն ամենը, ինչ ստեղծել են հին հռոմեական իրավաբանները, հաջողությամբ օգտագործվում է այսօր շատ երկրներում:

«Հռոմեական իրավունքի բացատրիկությունը,- նշում է պրոֆ. Ա. Ի. Կոսարևը,- արդյունք է հռոմեական հասարակության, նրա մշակույթի, ինչպես նաև ապրանքա-դրամական հարաբերությունների աննախընթաց զարգացման»¹:

Հայտնի է, որ մարդկության մշակութային ժառանգության զգալի մասը իր արմատներով գալիս է հին հույների ստեղծագործական ոգուց: Հռոմեացիները, իրենց հերթին, կարևոր դեր խաղացին հին հունական մշակույթի տարածման գործում: Խոնարհվելով հին հույների քաղաքակրթության առջև՝ նրանք յուրացրեցին այն և համարյա առանց վերապահումների փոխանցեցին եվրոպական միջնադարին: Միաժամանակ Հռոմը իր էական ներդրումն ունեցավ եվրոպական քաղաքակրթության մեջ՝ հին հունական օրենսդրության հիման վրա ստեղծելով հռոմեական իրավունքը: Մեզ հասած հին հռոմեական իրավունքի աղբյուրները վկայում են, որ հռոմեական իրավաբաններն իրենց տեսական աշխատություններում օգտագործել են հույն մտածողների բնական-իրավական գաղափարները, նրանց ուսմունքները պետության և իրավունքի, ինքնիշխանության, կառավարման խառը ձևի և այլնի մասին:

¹ Косарев А. И. Римское частное право. Учебник. - Издательское объединение «ЮНИ-ТИ», М., 1998, с. 8.

Այն, որ հին հռոմեական իրավական միտքը գտնվել է հին հունական համապատասխան հայեցակարգերի նշանակալի ազդեցության տակ, ապացուցվում է բազմաթիվ փաստերով: Այսպես, երբ մ. թ. ա. V դ. կեսերին պլեբեյները պահանջեցին գրավոր օրենսդրություն, ապա Հունաստան ուղարկվեցին հռոմեական դեսպանորդներ՝ հունական օրենսդրության և հատկապես Սոլոնի օրենքների հետ ծանոթանալու համար:

Հայտնի է, որ այդ ծանոթության արդյունքներն օգտագործվել են հին հռոմեական իրավունքի կարևորագույն աղբյուրի՝ «12 աղյուսակների օրենքների» մշակման ընթացքում: Ընդ որում, «12 աղյուսակների օրենքները» հռոմեական իրավունքի առաջին կանոնակարգումն է: Բազմաթիվ դարերի ընթացքում դրանք համարվել են իրավունքի հիմնական աղբյուր Հռոմում: Այդ օրենքներն իրենց անվանումը ստացել են այն առիթով, որ գրվել են 12 տախտակների վրա և փակցվել են քաղաքային հրապարակում: Ըստ մեզ հասած տվյալների՝ բոլոր երիտասարդ անձինք, որ ընդունվում էին քաղաքացիների շարքերը, պետք է անգիր իմանային այդ օրենքները: Գտնում էին, որ առանց դրա հնարավոր չէր կատարել քաղաքացու պարտականությունները, հատկապես դատական հարցերում: Կարևոր է նշել, որ «12 աղյուսակների օրենքները» իրենց հիմքով սովորության իրավունքի գրառում էին:

Դրանց կարիքը ամենից շատ զգում էին պլեբեյները: Այդ օրենքների օգնությամբ նրանք պաշտպանվում էին պատրիկ դատավորների կամայականություններից: Իրավունքի համակարգումը տվյալ դեպքում նրանց համար համարվում էր փաստական փուլ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում պատրիկների հավասարվելու պլեբեյական պայքարում:

Հետաքրքիր է, որ այդ օրենքները մեզ չեն հասել: Դրանք հայտնի են միայն որոշ դրվագներով, որոնք պահպանվել են հին հեղինակների, մասնավորապես իրավաբանների ստեղծագործություններում: Հատկապես արժեքավոր տվյալներ դրանց մասին կան Յիցերոնի, Ուլպիանոսի, Գայոսի աշխատություններում: Հռոմեական իրավունքի աղբյուրների մեջ հատուկ տեղ է զբաղեցնում մ.թ. II դարի իրավաբան, հանրահայտ «Ինստիտուցիաների» հեղինակ Գայոսի ստեղծագործությունը, որը հետագայում դարձավ դասագիրք հռոմեական իրավաբանական դպրոցի համար: Այն պատահաբար հայտնաբերել է պատմաբան Նիբուրը 1816 թ. իտալական Վերոնա քաղաքում: Գայոսի «Ինստիտուցիաները» գտնվում էին աստվածաբանական

բովանդակություն ունեցող աշխատության տեքստի տակ:

Համաձայն մեզ հասած ավանդության՝ Նիբուրը շուտ է տվել թանաքամանը, այնուհետև, ձեռագրի վրայից մաքրելով թանաքի հետքերը, հայտնաբերել է Գայոսի աշխատությունը:

«Ինստիտուցիաները» իրավագիտության ընդհանուր հիմունքներին նվիրված համառոտ դասագիրք էր, և կազմվել էր հռոմեական իրավաբան Գայոսի ավելի հին դասագրքի հիման վրա: Մեզ հասած աղբյուրները վկայում են այն մասին, որ կայսրությունում կար երկու բարձրագույն իրավաբանական հիմնարկություն՝ Կոնստանդնուպոլսում և Բեյրութում: Ուսումը նշված հաստատություններում տևում էր հինգ տարի և, համաձայն 533 թ. կայսերական կոնստիտուցիայի, հանգում էր հետևյալին՝ 1-ին կուրսում ուսումնասիրում էին «Ինստիտուցիաները» և դիգեստների առաջին հինգ գրքերը, 2-րդից մինչև 5-րդ կուրսը՝ դիգեստները (մինչև 36-րդ գիրքը ներառյալ), իսկ 5-րդ կուրսում դասավանդվում էր Հռատինիանոս կայսեր օրենսգիրքը (կայսերական որոշումների ժողովածու, որը ստացել է «Կոնստիտուցիաներ» անվանումը):

Հռոմեական իրավաբանները հնարավորություն ունեին օգտագործելու նաև կայսրության այլ ժողովուրդների իրավական զարգացման արդյունքները: Դրանցից ամենից հաջողված իրավական ինստիտուտները խորը ուսումնասիրությունից և վերախմաստավորումից հետո ձևափոխվում ու հարմարեցվում էին հռոմեական իրականության պահանջներին: Այդպիսի շատ ինստիտուտներն այնքան էին փոփոխվում և լրացվում հռոմեական իրավաբանների ջանքերով, որ ակնհայտորեն կորցնում էին իրենց ինչպես սկզբնական ձևը, այնպես էլ՝ բովանդակությունը: Արդյունքում՝ դրանք հաճախ ներկայացվում էին որպես հռոմեական հեղինակների ստեղծագործություններ: Այսօրվա ուսումնասիրողը կարող է հայտնագործել այդ հարդարանքը միայն այն դեպքում, եթե նա լավ ծանոթ է հին հռոմեական իրավունքի աղբյուրների և կայսրության տարբեր մասերում ապրած ժողովուրդների իրավական հուշարձանների հետ:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ հռոմեական իրավաբանները չեն սահմանափակվել միայն իրենց նախորդների դրույթների հասարակ ընկալմամբ, այլ կիրառել են դրանք ստեղծագործաբար և զարգացրել՝ հաշվի առնելով հռոմեական իրականության առանձնահատուկ ընկերային-քաղաքական պայմանները և

խնդիրները: Օրինակ հին հունական մտքին բնորոշ քաղաքականության և իրավունքի փոխկապվածության գաղափարը իր հետագա զարգացումն ու նոր արտահայտությունը ստացավ հռչակավոր հռոմեական իրավաբան Ցիցերոնի՝ պետության, որպես հանրային-իրավական ընդհանրության, մեկնաբանման մեջ: Իսկ հունական սոփեստների պատկերացումները ազատ անհատի մասին հռոմեական իրավաբանները օգտագործեցին, ըստ էության, նոր հայեցակարգի՝ իրավաբանական անձի հասկացության մշակման ընթացքում:

Անշուշտ, հին հռոմեական մտքի ակնառու նվաճումներից էր ինքնուրույն գիտության իրավագիտության ստեղծումը: Խորը ուսումնասիրելով անցյալի փորձը՝ հռոմեական իրավաբանները մշակեցին քաղաքական-իրավական խնդիրների լայն համալիր՝ նվիրված պետության և իրավունքի ընդհանուր տեսության, ինչպես նաև առանձին իրավաբանական դասընթացների ոլորտին:

Հատկապես մեծ են նրանց նվաճումները քաղաքացիական, պետական, վարչական, քրեական և միջազգային իրավունքի ոլորտներում, որոնց հիմնական դրույթները և ինստիտուտները այժմ էն ընկնում համակարգման ներդաշնակությամբ, ձևակերպումների հստակությամբ և կոնկրետությամբ, իրավական նորմերի շարադրման տրամաբանականությամբ և դիպուկությամբ:

Հռոմեական իրավաբանների կարևորագույն վաստակը կարելի է համարել նաև այն, որ նրանք իրենց աշխատություններում տեսականորեն արտացոլեցին այն նորը՝ հին հունականից տարբերվող պատմական և ընկերային-քաղաքական իրականությունը, որում նրանք ապրում և գործում էին: Մնալով գոյություն ունեցող կարգերի գաղափարախոսական պաշտպանը նրանք միաժամանակ տեսական առումով իրենց ստեղծագործությամբ էական ներդրում ունեցան պետության և իրավունքի մասին ուսմունքների պատմության մեջ և, դրանով իսկ, մեծ ազդեցություն թողեցին իրավական ուսմունքների հետագա զարգացման վրա:

Հայտնի է, որ հռոմեական իրավագիտությունն իր ծաղկմանը հասավ, այսպես կոչված, «դասական» շրջանում, այսինքն՝ ուշ հանրապետության դարաշրջանում:

Արդեն առաջին կայսրերը ձգտում էին ձեռք բերել ազդեցիկ իրավագիտության պաշտպանությունը և ըստ հնարավորին այն ծառայեցնել իրենց շահերին: Այդ նպատակով ականավոր իրավաբանները Օգոստոս կայսեր կառավարման ժամանակներից արդեն հատուկ իրավունք էին ստացել պատասխան տալու կայսեր

անունից: Այդպիսի պատասխաններն ունեին մեծ հեղինակություն և աստիճանաբար (պրինցեպի իշխանության ուժեղացմանը զուգընթաց, որը սկզբում օրենսդիր չէր) դարձան պարտադիր դատավորների համար: Ավելի ուշ՝ III դարից, իրավաբան-դասականների առանձին դրույթներ սկսեցին վկայակոչվել որպես օրենքի տեքստ: Նրանցից ականավորներն էին՝ Գայոսը, Պապինիանոսը, Պավելը, Ուլպիանոսը և Մոդեստիանոսը: Նրանք հռոմեական իրավագիտության գագաթներն էին:

Վալենտինիանոս 3-րդի հատուկ օրենքով 426 թ. այդ հինգ իրավաբանների դրույթներին տրվեց օրինական ուժ:

Հռոմեական իրավաբանների գործունեությունն առավելապես ուղղված էր իրավական պրակտիկայի պահանջների բավարարմանը և գործող իրավունքի նորմերը փոփոխվող հասարակական հարաբերությունների պահանջներին հարմարեցնելուն: Միաժամանակ կոնկրետ գործերով արված մեկնաբանություններով և պատասխաններով, ինչպես նաև գիտական թեքում ունեցող աշխատություններով իրավաբանները մշակում էին մի շարք ընդհանուր տեսական դրույթներ:

Ճիշտ է՝ իրավական ընդհանուր սկզբունքների ու բնորոշումների ձևակերպմանը հռոմեական իրավաբանները մոտենում էին բավականին զգույշ՝ նախընտրելով կոնկրետ իրավական հարցերի մանրամասն մշակումը և միայն դրա հիման վրա անելով այս կամ այն ընդհանրացումը: Այստեղից էլ գալիս է հռոմեական իրավագիտության մեջ տարածված ասույթը. «Ամեն մի բնորոշում վտանգավոր է»:

Հռոմեական իրավաբանները ի ծնե դիալեկտիկներ էին: Մեր կարծիքով, հենց այդ հանգամանքը նրանց թույլ տվեց առաջ ընկնել ժամանակներից, անել հայտնագործություններ իրավագիտության մեջ, որոնք, անցնելով դարեր, հասան մեզ հանճարեղ կռահումների տեսքով: Օրինակ, Ուլպիանոսի՝ իրավունքի բաժանումը մասնավորի և հանրայինի: Կամ՝ «չկա հանցագործություն առանց դրա մասին նշված օրենքի» ձևակերպումը, որն հանդիսանում է մեր ժամանակների քրեական օրենսդրության հիմնարար սկզբունքներից մեկը: Դեռ հնում հռոմեացիները հասկացան, որ հանցավորությունը բարդ սոցիալական երևույթ է, և նրա վերացումը պահանջում է ամենից առաջ այդ չարիքը ծնող պատճառների ոտումնասիրում: Այդ առիթով բնութագրական է Գայոսի՝ մի ավագակի գործով դատավարության ընթացքում արած եզրակացությունը: Ավարտելով իր խոսքն՝ ի պաշտպանություն

ավագակի՝ նա նշել է. «Այսօր դատարանի գլխավոր խնդիրը հանգում է ոչ այնքան այս հանցագործությունը խստորեն պատժելուն, որքան մեր հասարակության մեջ դրա տարածմանը նպաստող պատճառների վերհանմանը»:

Հանցավորության կանխման խնդիրը շոշափվում էր նաև Սենատում՝ իրավաբանների ելույթներում, որտեղ պարբերաբար ամփոփվում էր արդարադատության մարմինների գործունեությունը:

Հռոմեական իրավաբանների առանձին ասույթներ նաև այսօր միտք են արթնացնում, դրդում են մեզ փնտրելու այն ոսկե միջինը, որն ընկած է բարոյականի և իրավականի միջև: Մի՞թե մեզ չի ստիպում խորհելու հռոմեական իրավաբանների հետևյալ, հայտնի ասույթը. «Բախտը շատերին է ազատում պատժից, սակայն պատժվելու վախից ոչ ոքի չի ազատում»:

Հռոմեական իրավագիտությունը իրավաբանների մեջ դաստիարակում էր այնպիսի արժեքավոր որակներ, ինչպես՝ նվիրվածությունը մասնագիտությանը, ազնվություն, սկզբունքայնություն: Հայտնի են դեպքեր, երբ հռոմեական իրավաբանները չեն դավաճանել իրենց խղճին նույնիսկ այն ժամանակ, երբ այդ պահանջել են արքաները: Այդպիսին էր, օրինակ, ականավոր հռոմեական իրավաբան Պուպինիանոսը, որը կարևոր պաշտոններ է զբաղեցրել կայսր Սեվերիանոսի և նրա հաջորդ՝ Կարակալայի օրոք: Մերժելով կայսեր հրամանը՝ հիմնավորել իր եղբոր՝ համակառավարիչ Գետոսի, զազանաբարո սպանության արդարացիությունը՝ նա հայտարարել է, որ սպանության արդարացումը բուն սպանությունից բարդ է, որի համար և մահապատժի է ենթարկվել:

Իհարկե, սխալ կլիներ ենթադրել, որ հռոմեական իրավաբանների աշխատությունները չէին ծառայում տիրող դասակարգի շահերին: Իր ոգով և բնույթով պահպանողական հռոմեական իրավագիտությունը բոլոր միջոցներով արդարացնում էր սոցիալական անհավասարությունը ստրկատիրական հասարակության մեջ:

Հռոմում բարձրագույն կատարելության է հասնում իրավական ձևը, իրավաբանական տեխնիկան, որոնց շնորհիվ իրավունքի նորմերը ձեռք են բերում հստակություն, ձևակերպումների պարզություն, կոնկրետություն, որոշումների հիմնավորվածություն: Հռոմեական դասական իրավունքը ընդհանրապես իրավական մշակույթի մնայուն արժեք է:

Շնորհիվ հռոմեացի իրավաբանների գործունեության և նրանց բարձր մարդկային որակների՝ Հին Հռոմում ստեղծվում է իրավունք, որը բնութագրվում է տարատեսակ իրավական ինստիտուտների ճկուն մշակմամբ, պատշաճ վարքագծի կանոնների մանրամասնություններով, փաստարկման պարզությամբ, ձևակերպումների ճշտությամբ, բարձր իրավաբանական տեխնիկայով: Այդ տեսակետից հատկապես աչքի են ընկնում մասնավոր սեփականության ինստիտուտը, ժառանգական և միջազգային իրավունքները:

Հետագայում այդ բարձր իրավական մշակույթը որոշիչ ազդեցություն ունեցավ միջնադարյան և ժամանակակից եվրոպական երկրների իրավունքների վրա, իր արտացոլումը գտավ աշխարհի մնացյալ պետությունների իրավական համակարգում: Հարց է ծագում, թե ինչո՞ւ հենց Հին Հռոմում իրավական գիտությունը հասավ իր ծաղկմանը: Ինչպիսի՞ պայմաններ և նախադրյալներ կային դրա համար այստեղ: Այդ հարցի պատասխանները բազմաթիվ են: Սակայն դրանցից մեկը կարելի է համարել վճռական:

Վիթխարի է հռոմեական իրավունքի գիտական նշանակությունը: Իրավաբանական տերմինները և հասկացությունները, որոնք մշակվել են Հին Հռոմում իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության արդյունքում (օրինակ, հանրապետություն, սահմանադրություն, օրենսգիրք, վինցիկացիա և պայմանագրերի բազմաթիվ տեսակներ և այլն) չեն կորցրել իրենց տեսական և գործնական նշանակությունը ու մինչև այժմ էլ կիրառվում են աշխարհի գրեթե բոլոր երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության, իրավական համակարգերում:

Կարծում ենք, որ հռոմեական իրավական մշակույթի ծաղկման գլխավոր պատճառը պետք է փնտրել այն մեծ ուշադրության մեջ, որ դրսևորում էր պետությունը գիտելիքների այդ ճյուղի նկատմամբ: Հռոմեական պետությունը հատուկ ուշադրություն էր դարձնում ոչ միայն իրավագիտության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծմանը, այլև անցկացնում էր ամենօրյա կազմակերպական-տեխնիկական և դաստիարակչական բնույթի գործունեություն՝ երկրում ընդունված օրենքները կյանքում կենսագործելու համար: Հատուկ նշանակություն էր սրվում բնակչության շրջանում իրավական գիտելիքների քարոզչությանը, նրան՝ հասարակական կյանքը կարգավորող բոլոր իրավական

ակտերի հետ ծանոթացնելուն: Հետաքրքիր է, որ երկրի օրենքները պարտադիր կարգով փակցվում էին հրապարակային վայրերում, որպեսզի բնակչությունը ծանոթանա դրանց բովանդակության հետ: Այսպես, հայտնի է, որ պետությունը չսահմանափակվեց միայն «12 աղյուսակների օրենքների» մշակմամբ և ընդունմամբ, այլ նաև կազմակերպեց նրա իմաստավորված կենսագործումը կյանքում: Դրանք փակցվեցին Հռոմի կենտրոնական հրապարակում, որպեսզի բոլոր քաղաքացիները ծանոթանան դրա բովանդակության հետ: Սահմանվեց նաև հետևյալ խիստ կանոնը՝ Հռոմի քաղաքացի կարող էր դառնալ միայն նա, ով քննություն էր հանձնել աղյուսակների իմացության վերաբերյալ: Դա արվում էր հատուկ նպատակով, մարդը, որ կատարել է հակաիրավական արարք, չէր կարող այն պատճառաբանել օրենքների չիմացությամբ:

Հռոմեական իրավունքի աստիճանական զարգացմանը, նրա «դասական ավարտվածությանը» նպաստեցին նաև այլ հանգամանքներ և գործոններ: Կասկած չկա, որ դրանցից մեկն էլ ապրանքային հարաբերությունների բարձր մակարդակն էր ուշ հանրապետության և պրինցիպատի շրջանում: Մեծ նշանակություն ուներ նաև կայսրության «համաշխարհային» բնույթը, որն անհրաժեշտ դարձրեց ինչ-որ մակարդակում բազմաթիվ և տարբեր իրավական համակարգերի հաշտեցումը, համակարգեր, որոնք պատմականորեն ծագել էին, գոյություն ունեին նվաճված երկրներում:

Մեր կարծիքով, կարևոր է նաև այն հարգանքը, որ կար ականավոր իրավաբանների անվան ու կարծիքի նկատմամբ: Հատուկ նշանակություն էր տրվում վերը նշված իրավաբանների աշխատություններին ու խորհրդատվություններին: 426 թ. օրենքով սահմանվեց, որ հռոմեացի մյուս իրավաբանների հայացքները և ցուցումները կարող են հաշվի առնվել, եթե դրանք չեն հակասում առաջին հնգյակի մեջ մտնող իրավաբանների կարծիքներին: Պապինիանոսի կարծիքը ճանաչվեց «մեկին հաղթող, սակայն երկուսին զիջող»:

Դժվար չէ նկատել, որ Հին Հռոմում իրավունքը և իրավունքի գիտական մեկնաբանումը կազմում են մեկ միասնություն, ականավոր իրավաբանի կոնկրետ գործով արված խորհրդատվությունը կարելի էր վկայակոչել ինչպես օրենք: Հենց միայն դա անսահման հնարավորություններ էր բացում իրավագիտության՝ որպես կենսականորեն կարևոր գիտության, զարգացման ու կատարելագործման համար:

Եթե ամբողջ ասվածին ավելացնենք նաև հռոմեական իրավունքի հազարամյա զարգացումը, որի հետևանքով տեղի ունեցավ նրա հարստացումը և կատարելագործումը, ապա մենք կստանանք պատասխանը այն հարցի, թե ինչու այն դուրս եկավ իր դարաշրջանի սահմաններից, վերածնվեց՝ դառնալով հիմք շատ երկրների իրավական համակարգերի համար: Եվ հենց վերոնշվածով է պայմանավորված հռոմեական իրավունքի պատմական և ժամանակակից նշանակությունը:

1.2. Հռոմեական իրավունքի պատմական զարգացման հիմնական ուղենիշները

Հռոմեական իրավունքը՝ Հին Հռոմի ստրկատիրական պետության համապարտադիր նորմերի համակցություն է, որն իր գազաթնակետին հասավ «պրինցիպատի» ժամանակաշրջանում (I-III դարեր): Մակայն, սկզբնական շրջանում աշխարհիկ իրավունքը, ինչպես բոլոր ժողովուրդների մոտ, այնպես էլ Հին Հռոմում, սահմանազատված չէր կրոնական նորմերից և, հետևաբար, կրում էր կրոնական բնութագիր: Զարգացման սկզբնական աստիճանի վրա, նախնադարյան-համայնական կարգերից հասարակության կազմակերպման հանրային իշխանության (պետականության) անցման ժամանակաշրջանում, կրոնը շարունակում էր պահպանել իր բացառիկ դերն ու նշանակությունը Հին Հռոմի բնակչության մասնավոր և հասարակական կյանքում²: Հռոմում կրոնը անջատված չէր պետությունից, այլ միաձուլված էր նրա հետ: Քրմերը նույն պաշտոնատար անձինք էին և որոշակի գործառույթներ էին կատարում: Հին Հռոմում քրմերի կոլեգիաները բավականին տարածված էին, որտեղ գլխավոր դերը կատարում էր պոնտիֆիքսների (pontifices) կոլեգիան: Պոնտիֆիքսներն ունեին բարձրագույն հսկողություն կրոնական ծեսերի ճիշտ կատարման վրա, լուծում էին կրոնական և ընտանեկան ոլորտի վիճարկելի հարցերը, զբաղվում էին օրացույցի կազմմամբ, վարում էին տարեգրությունը: Կոլեգիայի նախագահը՝ մեծ պոնտիֆեքսն էր (pontifex maximus), որը նաև Հռոմի քրմապետն էր: Կրոնական տեսանկյունից մեծ պոնտիֆեքսը հռոմեական պետության Pater familias-ն էր³: Հին Հռոմի թագավորության շրջանում

² См. и История Древнего Рима. В серии «Библиотека всеобщей истории». Издательство «Полигон». М., 1998, с. 163-165; **Немировский А. И.**, История Древнего Мира. Античность. Учебник для вузов. В двух частях. Часть I, М., 2000, с. 185-187.

³ История Древнего Рима, с. 164.

(753-509 թթ. մ.թ.ա.) սկսում է սահմանազատվել աշխարհիկ իրավունքը (jus-ը) աստվածային պատվիրաններից՝ fas-ից⁴: Սկզբնական շրջանում fas-ը բավականին լայն բնագավառ էր կարգավորում՝ միջազգային հարաբերություններ, հանցագործության և պատժի, ամուսնության, որդեգրման, տարբեր պայմանագրերի կնքման հարցերը⁵: Հետագայում՝ Հանրապետության ժամանակաշրջանից սկսած (509 թ. մ.թ.ա.), այդ բոլոր հարցերը ենթակա էին աշխարհիկ օրենսդրության՝ jus-ի կարգավորմանը:

Հռոմեական իրավական մշակույթում իրավունքը (jus) ուներ տարբեր իմաստներ⁶: Իրավունք կարող էր նշանակել համակեցության ընդհանուր կանոնները՝ ի տարբերություն բարոյականությանը և սովորույթին: Իրավունք կարող էր նշանակել որոշակի հասարակական և պետական դրություն՝ ի տարբերություն անիրավչության: Եվ, վերջապես, իրավունքը կարող է մերվել առավել ընդհանուր հասկացության՝ իրավակարգի հետ:

Այդ նույն տերմինով՝ jus-ով, կարող է նշանակել նաև իրավական նորմերի համակցություն, որոնք տարբերվում են ըստ իրենց աղբյուրի աստվածային իրավունք և մարդկային իրավունք, ըստ իրենց ձևական բնույթի՝ գրված իրավունք և չգրված իրավունք, ըստ պատմական նշանակության՝ հին իրավունք և նոր իրավունք: Jus-ը նշանակում էր նաև սուբյեկտիվ իրավունք՝ որևէ մեկի իրավունքը, արտահայտելու իր կամքը՝ կտակի, գույքի նկատմամբ կամ խնամակալից հրաժարվելը և այլն: Չնայած իրավունքի վերոնշյալ բազմազան նշանակությանը և նրանում արտահայտված հարկադրականությանը, ըստ հռոմեական իրավաբանների, իրավունքը պետք է համապատասխանի նաև մի շարք հիմնական չափանիշներին: Այդպիսի հիմնական չափանիշներից է համամարդկային նպատակահարմարությունը. «Իրավունքը ստեղծված է ոչ թե եզակի անհատների, այլ համընդհանուր նշանակության համար»: Այնուհետև, իրավունքը պետք է արտահայտի հասարակական համաձայնության յուրահատուկ չափը՝ այս կամ այն հարցերի վերաբերյալ. «Բոլոր իրավունքները ստեղծվում են համաձայնությամբ, կամ անհրաժեշտությամբ, կամ էլ ամրագրվում են սովորույթով»: Եվ, վերջապես, անտիկ

⁴ Տե՛ս **Покровский И. А.**, История римского права. Санкт-Петербург, 1998, с. 53.

⁵ Տե՛ս **Омельченко О. А.**, Римское право. Учебник. М., 2000. с. 9.

⁶ Տե՛ս Там же, с. 9-10.

փիլիսոփայության ազդեցության շնորհիվ՝ իրավունքի բովանդակության մեջ ներարկվեցին արժեքային պատկերացումներ. «Ամրագրված իրավունքի էությունն է՝ ազնիվ ապրել, չվիրավորել ուրիշին, յուրաքանչյուրին հատուցել ըստ արժանվույն», որը բնական իրավունքի կարևորագույն կանխադրույթներից է:

Ի տարբերություն աստվածային իրավունքի և բնական իրավունքի, գրված իրավունքի հիմնական չափանիշը համարվում էր նրա կոնկրետ արտահայտությունը՝ իրավական նորմերի տեսքով, որոնք կիրառվում էին իրավական պրակտիկայում:

Որպես ամբողջական պատմական երևույթ, հռոմեական իրավունքն իր ձևավորման և զարգացման ընթացքում անցել է հետևյալ փուլերը,

- ա) վաղ ժամանակաշրջանի իրավունք (VIII-III դդ. մ.թ.ա.),
- բ) մինչդասական իրավունք (III դարի կեսից մինչև I դ. մ.թ.ա.),
- գ) դասական իրավունք (I դ. մ.թ.ա. մինչև III դ. մ.թ.)
- դ) հետդասական իրավունք (IV-VI դարեր)⁷:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունի նաև այլ դասակարգում, որն ըստ էության չի տարբերվում վերոնշվածից: Այսպես, համաձայն Բեռլինի և Օքսֆորդի համալսարանների պրոֆեսոր Ֆրից Շուլցի, հռոմեական իրավունքը և իրավագիտությունը անցել են հետևյալ փուլերը.

- 1) հին (արխայիկ) ժամանակաշրջան (5-3-րդ դդ. մ.թ.ա.),
- 2) հելլենիստական ժամանակաշրջան (2-1-դդ. մ.թ.ա.),
- 3) դասական ժամանակաշրջան (1-3-րդ դդ.),
- 4) բյուրոկրատական ժամանակաշրջան (4-6-րդ դդ.)⁸:

Առաջին շրջանը բնութագրվում է որպես հռոմեական իրավունքի ձևավորման ժամանակաշրջան: Վաղ շրջանի հռոմեական իրավունքի սկզբունքներն ու ինստիտուտները գտնվում էին նահապետական-համայնական կարգերի սոցիալ-հոգեբանական սովորույթների և ավանդույթների ազդեցության ներքո, անխզելիորեն կապված էին պոնտիֆիքսների գործունեության հետ և օժտված էին շեշտված

⁷ Ску Хвостов В. М, Истории римского права. М., 1910, с. II, 148, 355; Покровский И. А., История римского права. Санкт-Петербург, 1998, с 121, 277-364, 365-375; Косярев А.И. Римское частное право, М., 1998, с. 21; Савельев В. А., Римское частое право. - Проблемы истории и теории. М., 1995, с. 5; Дождев Д. В., Римское частное право, М., 1996, с. 13; Харитонов Е. О., Основы римского частного права. Ростов н/Д. Изд.-во «Феникс», 1999, с. 36 և այլն:

⁸ Schutz F., Geschichte der romischen Rechtswissenschaft. Weimar: Bohlaus (1901-XXVIII).

կրոնական երանգավորումներով: Այդ շրջանում սկսվում է աշխարհիկ և հոգևոր իրավունքների աստիճանաբար սահմանազատումը ու պետական օրենսդրության ստեղծումը, որի սկիզբը հանդիսացան 12 տախտակների օրենքները (450-449 թթ. մ.թ.ա.): Տասներկու տախտակների օրենքների տեքստը մեզ չի հասել: Նրանց բովանդակությունը վերականգնում են հռոմեական պատմիչների և իրավագետների աշխատությունների հիման վրա: Էությանբ նրանք իրենցից ներկայացնում էին սովորության իրավունքի նորմերի գրառում: Այդ օրենքները Հռոմեական կայսրության մեջ հսկայական դեր խաղացին: Պատմիչ Տիտոս Լիվիոսի վկայությամբ՝ Տասներկու տախտակների օրենքները հիմնական աղբյուր հանդիսացան հռոմեական հանրային և մասնավոր իրավունքի ձևավորման համար:

Վաղ ժամանակաշրջանի հռոմեական իրավունքը աչքի էր ընկնում շեշտված դասային աստիճանակարգվածության հատկանիշով, այսպես կոչված, քվիտորական իրավունքը, ոչ միայն սահմանազատում էր Հռոմի քաղաքացիներին օտարներից, այլև կրում էր դասակարգային բնույթ՝ Հռոմի քաղաքացիների միջև: Քվիտորական իրավունքը ընտանիքի հորը (*pater famillies*) օժտել էր անսահմանափակ իշխանությամբ: Նա կարող էր իր զավակներին ստրկության վաճառել: Տասներկու տախտակների օրենքներն արտացոլում էին հռոմեական հասարակության սոցիալական հարաբերություններն այն ժամանակ, երբ անցում էր կատարվում դեպի ստրկատիրությունը: Զարգանում էր նաև մասնավոր սեփականությունը, սակայն համայնական սեփականությունը դեռևս արգելակում էր մասնավոր սեփականության արմատավորումը հասարակական կյանքում⁹:

Հռոմեական իրավունքի զարգացման երկրորդ փուլը անցումային, նախադասական իրավունքի շրջանն է (III դ. մ.թ.ա. - I դ. մ.թ.ա.): Իրավունքի առաջխաղացման նախապայմանը եղավ հռոմեական համայնքի ունիֆիկացումը, պատրիկների և պլեբեյների սկզբունքային տարբերությունների վերացումը: Մ.թ.ա. 3-րդ դարում, երբ նորից ուժեղացավ պայքարը պատրիկների և պլեբեյների միջև, դիկտատոր ընտրված Քվինտոս Հորտենսիոսը անցկացրեց մի օրենք, որով պլեբսի տրիբունային ժողովներում ընդունված որոշումներն օրենքի ուժ էին ստանում և այլևս ենթակա չէին Սենատի հետագա հավանությանը: Այդ օրենքով, փաստորեն, ավարտվում էր պատրիկների և պլեբեյների դարավոր պայքարը: Այդ պայքարի

⁹ Տե՛ս և История Древнего Рима. Санкт-Петербург, 1998, с. 114-115.

հետևանքով հասարակական կառուցվածքում տեղի են ունենում որակական փոփոխություններ: Պատրիկները զրկվում են իրենց երբեմնի արտոնություններից: Իրենց գոյությունը պահպանած պատրիկական տոհմերը պլեբեյների վերնախավի հետ միասին կազմում են սոցիալական նոր, արտոնյալ դաս՝ նոբիլիտետ (ազնվականություն)¹⁰:

Հռոմեական իրավունքի զարգացման այդ շրջանում, համապետական օրենսդրությանը զուգահեռ, սկսվում է վերելք ապրել դատարանների և մագիստրատների իրավաստեղծ գործունեությունը, որի հետևանքով աշխարհիկ օրենսդրությունը գործնականորեն ազատվում է պոնտիֆիքսների իրավագիտությունից և կրոնական մեկնաբանություններից: Հին ձևական իրավաբանական պրակտիկային փոխարինում է իրավական հարցերում արդարության հաստատման հայեցակարգը, որը հնարավորություն է տալիս դատարանին ավելի ճկուն և ժամանակի պահանջներին համապատասխան որոշումներ կայացնելու: Դրա հետևանքով ձևավորվում է երաշխավորված հայցերի համակարգ և պրակտիկա, որոնք ներառում են նյութական իրավունքի վրա հիմնված կոնկրետ պահանջներ: Իրավունքի պահանջների վրա հսկայական ազդեցություն են գործում հունական փիլիսոփայությունը և իրավական դոկտրինաները¹¹: Այդ ժամանակաշրջանում է ձևավորվում նաև հռոմեական իրավագիտության փայլուն ավանդույթներից մեկը՝ դատական պերճախոսությունը:

Հռոմեական իրավունքի զարգացման երրորդ փուլը դասական իրավունքն է (I դ. մ.թ.ա. - III դ. մ.թ.): Հին Հռոմի երկարատև սոցիալական ճգնաժամի (I դ. մ.թ.ա. - I դ. մ.թ.), հանրապետական կարգերի հաստատման պայմաններում տեղի է ունենում հանրային իրավունքի սկզբունքների ձևավորումը՝ որպես մեկ միասնական իրավունք¹², որն արտահայտում է հռոմեական ժողովրդի ինքնիշխանությունը և դրա իմաստավորումը նոր միապետական կարգերի տեսանկյունից: Միաժամանակ ձևավորվում է քրեական իրավունքը՝¹³ իրավական պաշտպանության իր ինքնուրույն

¹⁰ St' u Истoрия Древнего Рима. Учебник для вузов по спец. «История». Под редакцией В. И. Кузишино, М., «Высшая школа», 2000, с. 58.

¹¹ St' u Истoрия политических и правовых учений. Древний мир. Отв. ред. В. С. Нерсесянц, М., «Наука», 1985, с. 272-310.

¹² Հռոմեական հանրային իրավունքի մասին մանրամասն տե՛ս **Mommsen T.**, Romisches Staatsrecht, I, II, III, 1887-1888, **Виллемс П.**, Римское государственное право, 1888-1890.

¹³ Հռոմեական քրեական իրավունքի մասին մանրամասն տե՛ս **Mommsen T.**, Romisches Strafrecht, 1899.

օբյեկտներով և կիրառման սկզբունքներով:

Հռոմեական կայսրության ընդարձակման պայմաններում հասարակական կառուցվածքում, որպես կայսրության սոցիալական հենարան՝ ձևավորվում է ազատ քաղաքացու ընդհանուր իրավական կարգավիճակը, քաղաքացիա-իրավական հարաբերություններում՝ ազատ քաղաքացիների հավասարությունը, ինչպես նաև քաղաքացիա-իրավական ինստիտուտների՝ սեփականության, տիրապետման, գործարքների, իրավական պահանջների (հայցերի) աննախընթաց զարգացումը: Այդ շրջանում է վերելք ապրում հռոմեական իրավագիտությունը և դատական պրակտիկան¹⁴:

Եվ, վերջապես, գաղափարական-փիլիսոփայական առումով հռոմեական իրավագիտությունը և իրավական պրակտիկան զգում են ստոիցիզմի փիլիսոփայության հսկայական ազդեցությունը¹⁵: Դա արտահայտվում է նույնիսկ վերափոխված մասնավոր իրավունքի սկզբունքների և ինստիտուտների վրա:

Հռոմեական իրավունքի զարգացման չորրորդ շրջանը (IV-VI դարեր մ.թ.) բնութագրում է հռոմեական իրավունքի բովանդակության փոխակերպումը նոր սոցիալական և քաղաքական պայմաններում: Եթե մինչ այդ հռոմեական իրավունքը համարժեք բավարարում էր անտիկ հասարակության իրավական պահանջները, ապա նոր սոցիալական և քաղաքական պայմաններում որոշակիորեն փոխվում են հռոմեական իրավունքի աղբյուրները, դրանց իրավաբանական նշանակությունը: Միապետական օրենսդրության զարգացման հետևանքով խիստ սահմանափակվեց մագիստրատների և դատարանների իրավաստեղծ գործունեությունը և, դրա արդյունքում, որպես իրավունքի հիմնական աղբյուր սկսեց հանդես գալ **օրենքը**, այսինքն՝ հռոմեական իրավունքի զարգացման այդ փուլում տեղի ունեցավ, այսպես կոչված, «իրավունքի պետականացում»: Դրա հետևանքով դատական պրակտիկան նույնպես հանդիսացավ պետական վարչարարության անբաժան մասը: Այդ պայմաններում իրական պատմական գործոնը եղավ միապետական իշխանության **իրավական քաղաքականությունը**, որն իր ազդեցությունն ունեցավ իրավական սկզբունքների և ինստիտուտների վրա: Այդ ժամանակաշրջանում հռոմեական

¹⁴ Մանրամասն տե՛ս Ապիյան Ն. Ս., Հռոմեական իրավունքը և նրա ծաղկման պատճառները: - Հանդես Երևանի համալսարանի, թիվ 1, 1998, էջ 53-54:

¹⁵ St u История политических и правовых учений. Древний мир, с. 288-291.

իրավունքի վրա զգալի ազդեցություն է ունենում նաև քրիստոնեությունը, որը ենթադրում էր վերախմաստավորել նախկին իրավունքի շատ սկզբունքներ և կանխադրույթներ: Իր հերթին, հռոմեական իրավունքը զգալի ազդեցություն ունեցավ կանոնական իրավունքի ձևավորման և զարգացման վրա¹⁶:

1.3. Հռոմեական իրավունքի համակարգը

Հռոմեական իրավունքի համակարգը ձևավորվել է երկարատև իրավական պրակտիկայի և իրավագիտության մշակումների շնորհիվ ու տարբերվում է ժամանակակից իրավունքի ճյուղային համակարգից: Հռոմեական իրավական ինստիտուտների և նորմերի դասակարգման որակական հատկանիշը իրավունքի բաժանումն է մասնավորի (*jus privatum*) և հանրայինի (*jus publicum*)¹⁷:

Հանրային իրավունքը, ըստ հռոմեացի նշանավոր իրավաբան Ուլպիանոսի, «վերաբերում էր հռոմեական պետության իրավական դրությանը (*ad statum rei Romanae spectat*), իսկ մասնավոր իրավունքը վերաբերում է «առանձին անձանց շահերին» (*ad singulorum utilitalem*):

Այսպիսով, հանրային և մասնավոր իրավունքի միջև եղած տարբերության չափանիշը, Ուլպիանոսի կարծիքով, իրավունքով պաշտպանված շահերի բնույթն է:

Մասնավոր կամ քաղաքացիական իրավունքի գործունեության բնագավառը Հին Հռոմում չափազանց լայն էր: Քաղաքացիական-իրավական էին համարվում նաև այնպիսի հարաբերություններ, որոնք այլ իրավական համակարգերում դասվում էին հանրային-իրավական հարաբերությունների շարքը: Օրինակ, գողությունը հռոմեական իրավունքում համարվում էր մասնավոր իրավախախտում (*delictum privatum*) և այլն:

Հանրային իրավունքի համար գոյություն ունեի հետևյալ սկզբունքը՝ «հանրային իրավունքի նորմերը չեն կարող փոփոխվել առանձին անձանց համաձայնությամբ» (*jus publicum privatorum pactis mutari non potest*): Իրավաբան Ուլպիանոսի կարծիքով հանրային իրավունքը կարգավորում է կրոնական պաշտամունքի հարցերը, քրմերի իրավական դրությունը, մագիստրատների իրավունքներն ու պարտականությունները:

¹⁶ Տե՛ս **Омельченко О. А.**, Всеобщая история государства и права. Учебник в 2-х т. Издание второе, исправленное и дополненное. Т. I. М., ТОН-ПРИОР, 1999, с. 416.

¹⁷ Տե՛ս Բարսյան Լև, Հռոմեական մասնավոր իրավունք, Երևան, 2000, էջ 20-22:

Հանրային իրավունքը՝ արտահայտելով հռոմեական ժողովրդի շահերը, սահմանում էր պետության և նրա մարմինների իրավական դրությունը, տարբեր դասերի իրավական վիճակը, ինչպես նաև կարգավորում էր հանցագործության և պատժի հարցերը: Դրա համար էլ, ավանդաբար այդ բնագավառում ներառված էին այնպիսի ինստիտուտներ և սկզբունքներ, որոնք ամրագրում են երկրի պետական իշխանության կառուցվածքը, պետական մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունները, ֆինանսա-հարկային ոլորտի հարցերը և այլն: Այստեղից էլ՝ հանրային իրավունքին բնորոշ են իմպերատիվ նորմերը, որոնք սահմանում են որոշակի պարտադիր վարքագծի կանոններ և որոնցից շեղումն անթույլատրելի է:

Հռոմեական մասնավոր իրավունքի բնագավառը ներառում էր այնպիսի նորմեր և ինստիտուտներ, որոնք կարգավորում էին քաղաքացիական ոլորտի հարաբերությունները և այդ նորմերին բնորոշ էր դիսպոզիտիվությունը, որը հնարավորություն էր տալիս անձին ինքնուրույն որոշելու իր հարաբերությունները մասնավոր բնագավառում: Անձն իրավունք ունի ինքը որոշելու իր հարաբերությունների բնույթն ու ծավալը ուրիշների հետ՝ ամուսնա-ընտանեկան, սեփականության, ժառանգության, պարտավորական հարաբերություններում և այլն:

Ժամանակի ընթացքում մասնավոր իրավունքում ձևավորվեց իրավունքի ինստիտուցիոնալ կառուցվածքը՝ անձինք, գույք և հայցեր: Իրավունքի ինստիտուցիոնալ կառուցվածքը աննշան փոփոխությամբ (անձինք, գույք, պարտավորություններ) ընդօրինակեց 1804 թվականի ֆրանսիական քաղաքացիական օրենսգիրքը:

Գոյություն ունի նաև իրավական նորմերի շարադրման, այսպես կոչված, պանդեկտային համակարգը, որը ձևավորվել է 16-րդ դարում, գերմանացի իրավաբանների կողմից¹⁸: Այդ համակարգը բաղկացած է մեկ ընդհանուր և չորս հատուկ բաժիններից: Ընդհանուր մասում խոսվում է մասնավոր իրավունքի սուբյեկտի, օբյեկտի, պարտավորությունների ծագման, փոփոխման ու դադարման և մասնավոր իրավունքի պաշտպանության (հայցերի) մասին: Հատուկ մասը բաղկացած է մասնավոր իրավունքի առանձին ինստիտուտներից, գույքային իրավունք, պարտավորական իրավունք, ամուսնա-ընտանեկան իրավունք և ժառանգական իրավունք:

¹⁸ St' u Римское частное право (конспект лекций). М., Издательство «ПРИОР», 2000, с. 4.

Պանդեկտային համակարգն ավելի կատարյալ է և բնորոշ է ժամանակակից իրավական համակարգերին:

Գլուխ 2

Հոմեական իրավունքի աղբյուրները և համակարգումը (օրինակարգումը)

2.1. Հոմեական իրավունքի աղբյուրները

Ընդհանրապես իրավունքի աղբյուրի, այդ թվում՝ հին և միջնադարյան, հասկացության հիմնահարցը իրավագիտության ամենակնճռոտ հարցերից է, որի հետազոտությունն ունի ինչպես պատմաճանաչողական, այնպես էլ գիտատեսական զգալի նշանակություն:

Այս կապակցությամբ դեռևս խորհրդային շրջանի հայտնի գիտնական Ս. Ֆ. Քեչեքյանը նշել է, որ «իրավունքի աղբյուրի հարցը իրավունքի տեսության ամենաչպարզաբանվածներից մեկն է»¹⁹:

Այսպես, դատելով իրավունքի աղբյուրների մասին՝ 19-րդ դարի ռուս հայտնի իրավաբան Գ. Ֆ. Շերշենիչը գրում է. «Տարատեսակ այն ձևերը, որոնցով արտահայտվում է իրավունքը, վաղուց ի վեր իրավունքի աղբյուրներ են կոչվում: Սակայն, այդ տերմինն իր տարիմաստության պատճառով, նվազ պիտանի է: Դրանով հասկացվում են.

ա) այն ուժերը, որոնք իրավունք են ստեղծում, օրինակ, երբ ասում են, թե իրավունքի աղբյուր պետք է համարել աստծո կամքը, ժողովրդի կամքը, իրավագիտակցությունը, արդարության գաղափարը, պետական իշխանությունը,

բ) այն նյութերը, որոնք դրված են այս կամ այն օրենսդրության հիմքում, օրինակ, երբ ասում են, հոմեական իրավունքը իրավունքի աղբյուր է ծառայել գերմանական իրավունքի համար, կամ՝ գիտնական Պոտյեի աշխատությունները՝ Նապոլեոնի քաղաքացիական օրենսգրքի համար, Լիտվական ստատուսը՝ Ալեքսեյ Միխայլովիչի օրենսգրքի համար,

գ) այն պատմական հուշարձանները, որոնք գործող իրավունքի նշանակություն

¹⁹ Кечекьян С. Ф., О понятии источника права,- Ученые записи. МГУ, Вып. 116, кн. I, М., 1946.

են ունեցել, երբ խոսում են այնպիսի աղբյուրների մասին, ինչպիսիք են՝ «Corpus juris civilis»-ը «Ռուսական պրավդան» և այլն,

դ) գործող իրավունքի ճանաչման միջոցները, օրինակ, երբ ասում են, թե իրավունքը կարելի է իմանալ օրենքից»²⁰:

Նույն ժամանակաշրջանի մեկ այլ ռուս նշանավոր իրավաբան Վ. Ի. Սերգենիչը նշում է, որ «որպես իրավունքի աղբյուր կարելի է հասկանալ այն ուժերը, որոնք ստեղծում են իրավունք: Այդ տեսակետից իրավունքի աղբյուր կարող է լինել, օրինակ, օրենսդրությունը որպես օրենքի ստեղծման ուժ: Սակայն իրավունքի աղբյուրի տակ կարելի է հասկանալ որպես այդ ուժի արդյունք, տվյալ դեպքում, նաև ինքը՝ օրենքը»²¹:

Իրավունքի արդի տեսության համաձայն, «Իրավունքի աղբյուրները կամ ձևերը իրավական նորմերի պաշտոնական արտահայտման և ամրապնդման ձևերն են, որոնք գործում են տվյալ պետությունում»²²:

Հռոմեական իրավունքին նվիրված մասնագիտական գրականությունում որպես հռոմեական իրավունքի աղբյուրներ հասկացվում են «այն բոլոր փաստաթղթերը, - նշում է իտալացի հայտնի գիտնական Սանֆիլիպպոն, - որոնք շատ թե քիչ ուղղակիորեն մեզ են հայտնում հռոմեական իրավական նորմերի մասին: Այստեղ խոսքը վերաբերում է և, այսպես կոչված, գրական աղբյուրներին՝ արձանագրություններին, պատմիչներին, տարեգիրներին, բանաստեղծների աշխատություններին և այլն: Սակայն խոսք կարող է գնալ նաև, այսպես կոչված, իրավաբանական աղբյուրների (և դրանք մեզ համար առավել արժեքավոր են, քանի որ հատուկ աղբյուրներ են) մասին, որպիսիք են՝ օրենքների տեքստերը, իրավաբանների աշխատությունները, պաշտոնական օրենսգրքերը, մասնավոր փաստաթղթերը (պապիրուսները, կավե ամանները և այլն)»²³:

Հռոմեական իրավունքին նվիրված իրավաբանական գրականության մեջ

²⁰ **Шершеневич Г. Ф.**, Общая теория права. М., 1911, с. 368-369.

²¹ **Сергеевич В. И.**, Лекции по истории русского права, СПб., 1889 -1890, с. 5.

²² **Мицкевич П. В.**, Источники (формы выражения) российского права. Историко-теоретический очерк. - Закон: создание и толкование. Под ред. А. С. Пиголкина. - М.; Снарк, 1998, с. 6; նաև **Лазарев В. В., Липень С. В.**, Теория государства и права. Учебник для вузов. - 2-е изд. испр. и доп. - М.: Снарк, 2000, с. 207 և այլն:

²³ **Санфилиппо Чезаре.** Курс римского частного права. Учебник. Перевод с итальянского. Под общей редакцией докт. юрид. наук Д. В. Дождева. М., Издательство БЕК, 2000, с. 21; Տե՛ս նաև **Скрипилев Е. А.** Основы римского права. Конспект лекций. М., 1989, с. 20-21, **Բարսյան Լև**, Հռոմեական մասնավոր իրավունք, էջ 24-30:

«իրավունքի աղբյուր» տերմինը օգտագործվում է տարբեր նշանակությամբ.

1) որպես իրավական նորմերի բովանդակության աղբյուր,

2) որպես իրավական նորմի կազմավորման ձև և

3) որպես իրավունքի ճանաչման (իրավահայտ) աղբյուր: Խոսելով հռոմեական իրավունքի աղբյուրների մասին՝ անհրաժեշտ է միմյանցից տարբերել «իրավունքի աղբյուր» և «իրավահայտ աղբյուր» հասկացությունները: Առաջինը պարունակում է իրավական նորմի բովանդակություն և ժամանակին եղել է գործող իրավական նորմ (օրինակ, 12 աղյուսակների օրենքները), իսկ երկրորդը՝ իրավական նորմի բովանդակություն չի պարունակում, այլ որոշակի տեղեկություններ է տալիս ժամանակին գործող իրավունքի մասին (օրինակ, արձանագրությունները, պատմիչների երկերը և այլն):

Հռոմեական իրավունքի զարգացման առաջին շրջանում (մինչև 5-րդ դարը մ.թ.ա.) իրավունքի միակ աղբյուրը համարվում էր սովորույթը (*mores*) կամ չգրված իրավունքը (*jus non scriptum*): Սովորույթը իրավունքի ամենասկզբնական ու ամենահին աղբյուրն է եղել, իսկ սրա գործող հետևանքը սովորութեական իրավունքը: Ամեն մի սովորույթ չի կարող իրավունքի աղբյուր լինել, այլ միայն այն սովորույթները, որոնք հասարակական հարաբերություններում անընդմեջ և երկարատև գործադրվելու հետևանքով ձեռք են բերում հասարակության համար համապարտադիր իրավանորմի ուժ: Սովորութեական նորմերը հռոմեական իրավունքում արտահայտվում էին հետևյալ տերմիններով, *mores maiorum* (նախնիների սովորույթ), *usus* (սովորույթային պրակտիկա), *commentary pontificum* (պոնտիֆիքսների մեկնաբանություններ), *commentary magistratum* (մագիստրատների մեկնաբանություններ), իսկ միապետության ժամանակաշրջանում կիրառվում էր *consuetudo* (սովորույթ) տերմինը:

Հանրապետության շրջանում (509-27 մ.թ.ա.) ձևավորվում է գրավոր օրենսդրությունը (*leges*): Օրենքը (*lex*) ընդունվում է ժողովրդական ժողովի կողմից: Հասարակության զարգացմանը զուգընթաց գրավոր օրենքը մեծ նշանակություն ձեռք բերեց: Մեզ հայտնի առաջին գրավոր օրենքներից են 12 աղյուսակների օրենքները (451-449 թթ. մ.թ.ա.)²⁴:

²⁴ S^u Памятники римского права. Законы XII таблиц. Институции Гая. Дигесты Юстиниана. - М., «Заркало», 1997.

Տասներկու տախտակների աղյուսակը հիմք դրեց, այսպես կոչված, քվիտորական (*jus Quiritium*) կամ քաղաքացիական իրավունքին (*jus civile*): Քվիտորական իրավունքին էին պատկանում բոլոր այն օրենքները, որոնք ընդունվում էին ժողովրդական ժողովների կողմից: Տասներկու տախտակներն արտահայտում էին հռոմեական ազգային իրավունքը²⁵: Տասներկու տախտակներում իրավական նորմերը, որպես կանոն, կրում էին ոչ թե դիպվածային (կազուսային), այլ ընդհանուր բնույթ, այսինքն՝ դրանք կոչված էին կարգավորելու տիպային, համանման հարաբերություններ:

Տասներկու տախտակների օրենքների մոտավորապես 140 իրավական դրույթներ դասավորված են հետևյալ կամակարգով.

Դատարան կանչելու մասին (I աղյուսակ), Հայցերի քննարկում (II աղյուսակ), Պարտային ստրկության մասին (III աղյուսակ), Մանցիպացիայի կարգի մասին (IV աղյուսակ), Կտակի և ընտանեկան հարցերի մասին (V աղյուսակ), Հողի օգտագործման մասին (VI աղյուսակ), Գողության մասին (VII աղյուսակ), Անձնական վիրավորանքի մասին (VIII աղյուսակ), Քրեական պատիժների մասին (IX աղյուսակ), Թաղման և ծեսերի կարգի մասին (X աղյուսակ), Քաղաքում հանրային գործերի մասին (XI աղյուսակ), Արտոնություններ չխնդրելու մասին (XII աղյուսակ)²⁶:

Տասներկու տախտակների օրենքները դեռևս պահպանում էին պատրիկների և պլեբեյների միջև ամուսնության հին արգելքը: Ավանդության համաձայն, 445թ. մ.թ.ա. տրիբուն Կանուլեի օրենքով վերացվեց այդ խտրականությունը և պատրիկներին պլեբեյների միջև ամուսնությունները օրինական ուժ ստացան: Մյուս կարևոր գրավոր օրենքներից արժանի է հիշատակման Պետելիոսի օրենքը (*Lex Poetelia*) 326թ. մ.թ.ա., որով վերացվեց պարտային ստրկությունը:

Ժամանակի ընթացքում ձևավորվեցին հռոմեական օրենքների երկու տեսակ՝ *Lex*-ը՝ որպես ժողովրդական ժողովի կողմից ընդունված որոշում, որն ուներ բարձրագույն իրավաբանական ուժ և, *Plebisticum*՝ հռոմեական համայնքի պլեբեյական մասի հրամանագիրը կամ կարգադրությունը: Դիկտատոր ընտրված Քվինտոս Հորտենսիոսի օրենքով (258թ. մ.թ.ա.) պլեբսի տրիբունային ժողովների

²⁵ Տե՛ս *Скрипилев Е. А.*, Основы, римского права. Конспект лекций. М., 2000, с. 21.

²⁶ Տե՛ս *Никольский Б.В.*, Система и текст XII таблиц. Исследование по истории римского права. СПб., 1897.

ընդունած որոշումներն օրենքի ուժ էին ստանում և այլևս Սենատի հաստատման կարիքը չկար:

Ընդհանրապես, ըստ հռոմեական իրավունքի, օրենք էր համարվում այն որոշումը, որը պահպանում էր որոշակի ընթացակարգ և համապատասխան բովանդակություն. «Օրենքները կարգադրագրեր պարունակող ընդհանուր բնույթի որոշումներ են՝ առաջարկված մագիստրատների կողմից՝ ընդունված ժողովրդական ժողովի և հաստատված Սենատի կողմից»²⁷:

Օրենքը, որպեսզի հեղինակություն ունենար, պետք է բխեր այն նախաձեռնող, օրինականորեն ընտրված մագիստրատի իրավասությունից: Հռոմեական օրենքները այդպես էլ կոչվում էին՝ իրենց նախաձեռնողների անուններով (օրինակ՝ Կանուլեի օրենքներ, Լիցինիոսի և Սեքստիոսի օրենքներ, Պետելիոսի օրենք, Հորտենսիոսի օրենք և այլն):

Օրենքը պետք է բովանդակեր անհրաժեշտ տարրեր. 1) ներածություն, 2) *rogatio* կամ տեքստը, որը պետք է բաժանվեր գլուխների և այլն, 3) *sanctio*, որտեղ նշվում էր օրենքի խախտման հետևանքների մասին: Ընդունված օրենքը ենթակա էր հրապարակման ի լուր ամենքի, որի համար հատկացվում էին հատուկ, մարդաշատ տեղեր: Օրենքն ընդունվում էր միայն ամբողջությամբ կամ ամբողջությամբ մերժվում էր: Օրենքի մասնակի փոփոխությունները, որոնք առաջարկված չէին օրինագծի հեղինակի մագիստրատի կողմից, հռոմեական պրակտիկան չէր ընդունում:

Միապետության առաջին շրջանում՝ պրինցիպատի ժամանակ, օրենսդրական ակտեր հանդիսանում էին Սենատի որոշումները՝ *Senatus consultum*: Սենատի ակտերը պարունակում էին միայն ընդհանուր դրույթներ և պրետորներն իրենց էղիկտներով պետք է դրանք իրականացնեին²⁸:

Հռոմեական դասական իրավունքի ժամանակաշրջանում (1-3-րդ դդ.) Սենատի որոշումները (սենատուս կոնսուլտ) համարվում էին հռոմեական օրենսդրության հիմնական ձևը, որը քողարկվում էր այն հին բանաձևով, ըստ որի «սենատը միայն կարծում է, խորհուրդ է տալիս և միջնորդում է» (*conset, videtur, placet*): Սենատը օժտված չէր օրենսդրական նախաձեռնության իրավունքով և նրա որոշումները՝ սենատում միապետի գրավոր կամ բանավոր առաջարկությունների

²⁷ Омельченко О.А., Римское право. Учебник. М., 2000, с. 27.

²⁸ *St' u* Римское частное право. Под ред. проф. И. Б. Новицкого и проф. И.С. Перетерского. - М, «Юность», 1996, с. 30-31.

օրենսդրական ձևակերպումն էր (բառացիորեն՝ «կայսեր ճառը՝ արտասանած Մենատում»):

Հռոմեական իրավունքի մյուս աղբյուրը կայսեր հրովարտակներն էին, որոնք կոչվում էին սահմանադրություններ (կոնստիտուցիաներ): Գոյություն ունեւր կայսերական սահմանադրության չորս տեսակ.

ա) էդիկտներ (edictum), որոնք կայսեր որոշումներն էին և համապետական բնույթ ունեւին:

բ) Մանդատներ (mandatum), որոնք կայսեր հրահանգներն էին պետական աստիճանավորներին տրվող:

գ) Դեկրետներ (decretum), կայսրի՝ վիճարկելի հարցերը լուծելիս կայացրած որոշումներն էին:

դ) Պարզաբանումներ (rescriptum), որոնք տրվում էին կայսեր կողմից զանազան հարցումների առթիվ: Բացարձակ միապետության շրջանում (284-476թթ.) կայսերական սահմանադրությունները կոչվեցին օրենքներ *leges*:

Ըստ իրավագորության աստիճանի կայսեր հրամանագրերը լինում էին՝ համընդհանուր (*constitutions generates*) և անհատական (*constitutions personales*): Առաջինները հավասարազոր էին օրենքին և դրանց էին պատկանում՝ էդիկտները և մանդատները: Սակայն միապետի իշխանության դադարումից հետո (մահվան, զահրնկեց անելու դեպքում և այլն) ենթադրվում էր, որ այդ ակտերն ուժը կորցրած կլինեն:

Միապետի անհատական ակտերն էին՝ ռեսկրիպտները և դեկրետները, որոնք, որպես կանոն, ուղղված էին կոնկրետ անձանց կամ կոնկրետ հարցի լուծմանը, որոնց գործողությունը իրավունքի տեսանկյունից մշտական էր, այսինքն՝ չէր դադարում միապետի իշխանությունից հետո:

Իրավունքի հաջորդ աղբյուրը պրետորական կամ մագիստրատների իրավունքն էր (*jus honorarium*): Պրետորի (*praetor*) պաշտոնը հիմնադրվել է 367 թ. մ.թ.ա. և նրա պաշտոնավարման ժամկետը մեկ տարի էր: Յուրաքանչյուր տարի, երբ պրետորը ստանձնում էր պաշտոնը, ձևակերպում և հայտարարում էր իր ծրագիրը (*edictum*), որով պետք է դեկլարվեւր դատական գործառնություն (*jus dicero*)

իրականացնելիս²⁹: Պրետորը օրենսդիր չէր և չէր կարող փոփոխել *jus civile*-ի նորմերը («պրետորը չի կարող ստեղծել իրավական նորմեր»): Սակայն, օգտվելով իր իշխանությունից (*imperium*), պրետորն իր էդիկտում խոստանում էր լրացնել *jus civile*-ի բացերը և իր կողմից ընդունված որոշումներով՝ կարգավորել այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում կամ մասամբ են կարգավորվում *jus civile*-ի նորմերով: Ձևականորեն պրետորական էդիկտը պարտադիր էր միայն այն մագիստրատի համար, ով ընդունել էր և ուժի մեջ էր միայն մեկ տարի, այսինքն՝ մագիստրատի պաշտոնավարության ժամանակահատվածում: Այստեղից էլ Ցիցերոնը այդ էդիկտը անվանում էր «մեկ տարվա օրենք» (*lex annua*): Ժամանակի ընթացքում պրետորների իրավաբանական գործունեությունը ավելի է ընդարձակվում և նշանակալի հեղինակություն է ստանում, որի հետևանքով ձևավորվում է իրավական նոր համակարգ՝ *jus honorarium* (մագիստրատների իրավունք) կամ՝ *jus praetorium* (պրետորական իրավունք): Պրետորների գործունեությունը շատ լավ է ընդհանրացրել հռոմեական նշանավոր իրավաբան Պապինիանոսը. «Պրետորական իրավունքը՝ պրետորների կողմից ներմուծված իրավունք է հասարակական օգուտի համար, որպեսզի ամրապնդի քաղաքացիական իրավունքը (*jus civile*), լրացնի և ճշգրտի այն»³⁰:

125-138 թթ. կայսր Անդրիանոսը իրավաբան Յուլիանոսին առաջարկեց համակարգել պրետորական էդիկտները: Յուլիանոսի կողմից մշակված վերջնական տարբերակը ստացավ «Մշտական էդիկտ» (*Edictum perpetuum*) անվանումը և հայտարարվեց անփոփոխելի: Դրանից հետո քվիտորական և պրետորական իրավական համակարգերի հակադրությունը կորցրեց իր վաղեմի նշանակությունը, չնայած որ նրանց տարբերությունը ձևականորեն պահպանվեց մինչև Հուստինիանոս կայսեր օրոք կատարված կոդիֆիկացիան (6-րդ դ.):

Քաղաքային պրետորի (*praetor urbanus*) կողքին մոտավորապես 240 թ. մ.թ.ա. հաստատվում է երկրորդ պրետորի պաշտոնը՝ օտարերկրացիների հարցերով (*praetor peregrinus*), որի դատական գործառնությունն (*juris dictio*) էր Հռոմի քաղաքացիների և օտարերկրացիների միջև ծագած վեճերի լուծումը: Այդ դեպքերում

²⁹ St' u Санфилиппо Чезаре. Курс римского частного права. Учебник. Перевод с итальянского. Под общей редакцией Д. В. Дождева. - М., «БЕК», 2000, с. 14.

³⁰ Санфилиппо Чезаре, նշվ. աշխ., էջ 15:

praetor peregrinus-ը վիճարկելի հարցը լուծում էր ոչ թե առանձին ազգային իրավունքի (դիցուք՝ jus, civile-ի) համաձայն, այլ ժողովուրդների իրավունքի (jus gentium) սկզբունքներին համապատասխան: Եվ դա շատ ճկուն իրավական համակարգ էր, հիմնված բնական բանականության (naturalis ratio) և բարեխղճության վրա:

Ի տարբերություն պրետորական իրավունքի (jus honorarium), ժողովուրդների իրավունքը չէր հակադրվում jus civile-ին, այլ գործում էր զուգահեռաբար, մինչև քաղաքացիական իրավունքի մեջ ձուլվելը:

Իրավունքի աղբյուրի նշանակություն ունեն նաև հռոմեական իրավաբանների աշխատությունները և նրանց պրակտիկ գործունեությունը³¹: Յիցերոնի աշխատություններում հռոմեական իրավաբանների իրավաստեղծ և իրավակիրառ գործունեությունը բնութագրվում է հետևյալ տերմիններով.

respondere - մասնավոր անձանց իրավաբանական հարցերի պատասխաններ,

cavere - անհրաժեշտ ֆորմուլաների ձևակերպումը գործարքների կնքման ժամանակ,

agere - դատարանում կողմերին իրավաբանական օգնություն ցույց տալը (հայցապահանջների ձևակերպումը և այլն):

Հին ժամանակներում իրավաբաններ համարվում էին քրմերը (պոնտիֆիքսները), հետագայում այդ գործունեությամբ սկսեցին զբաղվել նաև աշխարհիկ մարդիկ: Իրավաբանները բարձր պաշտոններ էին զբաղեցնում պետական կառավարման ապարատում: Իրավաբանների իրավաստեղծ գործունեությունը առավելագույնս դրսևորվեց պրինցիպատի ժամանակաշրջանում (1-3-րդ դդ.): Առավել հեղինակավոր իրավաբաններն էին Գայոսը, Պապիանոսը, Ուլպիանոսը, Մոդեստինը, Պավլիոսը, որոնց տեսակետները պարտադիր բնույթ ունեին՝ համաձայն 5-րդ դ. առաջին կեսին ընդունված մեջբերումների մասին օրենքի:

Հռոմեական իրավաբանների աշխատությունները ընդունված է դասակարգել հետևյալ խմբերի.

1) Աշխատություններ՝ նվիրված քվիտորական իրավունքին, որոնք կոչվում են «libri ad Sabinum»:

2) Պրետորական էդիկտի պարզաբանումներ (libri ad editum):

³¹ Մանրամասն տե՛ս Shulz F. Geschichte der romischen Rechtswissenschaft, Weimar, 1961.

3) Դիգեստներ, որոնք միավորում էին քվիտորական և պրետորական իրավունքը ու դրանց մեկնաբանությունը:

4) Հռոմեական իրավունքի դասագրքեր, մասնավորապես Գայուսի Ինստիտուցիաները:

5) Իրավաբանների կազմած «Հարցեր» և «Պատասխաններ» ժողովածուները:

Հռոմեական իրավագիտությունը խոշոր ազդեցություն ունեցավ ոչ միայն հռոմեական իրավաստեղծ, այլ նաև իրավակիրառ գործունեության կատարելագործման և զարգացման վրա:

2.2. Հռոմեական իրավունքի համակարգումը (օրինակարգումը)

Արդեն հռոմեական իրավունքի պատմական զարգացման դասական շրջանում իրավունքի աղբյուրների ընդհանրացման և ունիֆիկացիայի անհրաժեշտություն առաջացավ, որը թելադրվում էր ինչպես ապրանքա-առևտրային տնտեսության զարգացմամբ, այնպես էլ հասարակական-քաղաքական անցուղարձերով:

Իրավական նորմերի համակարգման անհրաժեշտությունն առավել հրատապ դարձավ միապետության ժամանակաշրջանում, քանի որ միապետական կառավարման ձևը պահանջում էր նաև միասնական իրավաստեղծ և իրավակիրառ քաղաքականություն վարել: Հռոմեական իրավագիտության զարգացումը մեր թվարկության առաջին դարերում խթանեց նաև իրավական նորմերի մասնավոր համակարգման գործընթացը և առանձին իրավաբանական աշխատությունների երևան գալուն: Այսպես, 2-3-րդ դարերում մասնավոր իրավաբանի կողմից կազմվեց կայսր Մարկ Ավրելիոսի որոշումների համակարգված ժողովածուն՝ 20 գրքերով: Նույն ժամանակաշրջանում հրապարակվեց նաև պրետորական էդիկտների պաշտոնական ժողովածուն:

IV դարի սկզբներին կազմվեց Գրիգորիանոսի օրենսգիրքը (Codex Gregorian us), որտեղ ներառվեցին 196-295 թվականների կայսերական սահմանադրությունները: Այդ օրենսգրքի բնօրինակը մեզ չի հասել և այն հայտնի է այլ իրավական հուշարձաններից: Օրենսգիրքը բաղկացած է 14 գրքերից, որոնք բաժանված են տիտղոսների: Գրեգորիանոսի օրենսգիրքը պաշտոնական ճանաչում էր ստացել և գործել էր մինչև Հուստինիանոսի ժողովածուի ուժի մեջ մտնելը:

Երկրորդ օրենսգիրքը, որը լրացնում էր առաջինին, կոչվում էր Հերմոգենիանոսի օրենսգիրք (Codex Hermogenianus): Օրենսգիրքն ընդգրկում է 191-

365 թվականների մոտ 120 կայսերական սահմանադրություններ: Այդ երկու օրենսգրքերը մասնավոր կողիֆիկացիաներ էին, որոնք ստացել էին պաշտոնական ճանաչում:

Առաջին պաշտոնական կողիֆիկացիան կատարվեց կայսր Թեոդոսի կողմից (Codex Theodosianus) 428 թ.: Այդ օրենսգրքը բաղկացած է 16 գրքերից: Օրենսգրքում առաջին անգամ տեղ գտան միայն գործող իրավական ակտերը:

Հռոմեական իրավունքի համակարգման գործընթացն իր գագաթնակետին հասավ Հռոմի արևելյան կայսրության՝ Բյուզանդիայի կայսր Հուստինիանոսի օրոք (527-565 թթ.): Միապետի անմիջական մասնակցությամբ կատարվող քաղաքական և իրավական բարեփոխումները իրականացան իրավունքի՝ մինչ այդ իր նմանը չունեցող ծավալուն համակարգման շնորհիվ, որն արտահայտում էր արևելյան հռոմեական քաղաքակրթության և իրավագիտության բարձր մակարդակը՝ հռոմեական իրավական մշակույթի սահմաններում³²: Համակարգման աշխատանքներն իրականացնելու համար 528 թվականին կազմվեց պետական հանձնաժողով՝ 10 հոգուց բաղկացած, որը գլխավորում էր հայտնի իրավաբան Տրիբոնիանոսը: 529 թվականի ապրիլին հանձնաժողովը հրապարակեց կայսերական սահմանադրությունների ժողովածուն՝ 12 գրքից: Հրապարակումից հետո՝ մինչ այդ եղած ժողովածուները և օրենսգրքերը կորցրին իրենց իրավաբանական ուժը: Այդ նախնական աշխատանքներից հետո, 530 թվականի դեկտեմբերին կազմվեց մի նոր հանձնաժողով՝ 16 հոգուց բաղկացած, որը դարձյալ դեկավարում էր Տրիբոնիանոսը: Հանձնաժողովը կատարեց հսկայական աշխատանք՝ ուսումնասիրելով և ծաղկաքաղ անելով հռոմեացի իրավաբանների ավելի քան 1500 աշխատություն և 533 թվականի դեկտեմբերին հրապարակեց Դիգեստները (Digesta) կամ Պանդեկտները (Pandectae): Իսկ մինչ այդ, 533 թվականի նոյեմբերին հրապարակվել էր «Ինստիտուցիաները», որը կազմվել էր իրավաբան Գայուսի «Ինստիտուցիաների» օրինակով:

Խոշոր կողիֆիկացիոն աշխատանքը զուգորդվում էր հասարակական-քաղաքական պայմաններին համապատասխան՝ միապետական իշխանության նոր իրավա-քաղաքական հայեցակարգի մշակմամբ, որի շնորհիվ 534 թվականին

³² Համակարգման մասին մանրամասն տե՛ս Римское частное право. Под ред. проф. И. Б. Новицкого и проф. И. С. Петерского. - М., «Юрист», 1996, с. 40-44. **Перетерский И. С.** Дигесты Юстиниана. Очерки по истории составления и общая характеристика. М., 1956.

իրապարակվեց կայսերական սահմանադրությունների վերամշակված օրենսգիրքը (Codex):

Այսպիսով, իրավունքի պատմության մեջ մեզ հայտնի առաջին խոշոր կողիֆիկացիոն աշխատանքը, որը տևեց 528 թվականից մինչև 534 թվականը, հաջողությամբ պսակվեց:

Օրենքների այդ ժողովածուն XII դարում ստացավ՝ Corpus juris civilis անվանումը: Ժողովածուի ուժի մեջ մտնելուց հետո (534 թ.) այն լրացվեց Հուստինիանոս կայսեր նովելներով (Novellae - Նոր օրենքներ):

Corpus juris civilis-ը բաղկացած է չորս միմյանց հաջորդող մասերից³³: Առաջին մասը՝ «Ինստիտուցիաները» (Institutiones) իրենից ներկայացնում է հռոմեական իրավունքի հիմունքները՝ իրավակիրառման և մասնավոր իրավունքի ընդհանուր սկզբունքները: Այն բաղկացած է 4 գրքից և 987 տիտղոսից³⁴: Գրքերի հիմնական բովանդակությունն է՝ 1. ընդհանուր ուսմունք իրավունքի և իրավունքի սուբյեկտների մասին, 2. գույքային իրավունքի ընդհանուր ինստիտուտները, 3. պարտավորական իրավունք, 4. ուսմունք հայցերի և դատարանում իրավակիրառման սկզբունքների մասին: Այդ ժամանակվանից իրավական նորմերի նման համակարգումը կոչվում է **ինստիտուցիոնալ**:

Ժողովածուի երկրորդ և առավել ընդգրկուն մասը՝ Դիգեստները կամ Պանդեկտները (Digesta, Pandectae), բաղկացած է 50 գրքից և 432 տիտղոսից³⁵: Այստեղ օգտագործված են 39 հեղինակների մոտ 1500 աշխատություններ:

Ամբողջ նյութը պայմանականորեն բաժանվում է 7 մասի: Առաջին մասում (1-4 գրքեր) խոսվում է իրավունքի և իրավունքի սուբյեկտի ընդհանուր հարցերի մասին, երկրորդում (5-11 գրքեր)՝ սեփականության իրավունքի պաշտպանության մասին, երրորդում (12-19 գրքեր)՝ երկկողմանի պարտավորությունների մասին, չորրորդում (20-27 գրքեր)՝ պարտավորությունների կատարման ապահովման, ընտանեկան և խնամակալության իրավունքների իրացման հետ կապված պարտավորությունների մասին, հինգերորդում (28-36 գրքեր)՝ կտակի մասին, վեցերորդում (37- 43 գրքեր)՝ դատարանի ընդդատությանը ենթակա տարբեր իրավական հակասությունների

³³ Հետազոտողներից ոմանք նովելները չեն համարում ժողովածուի բաղկացուցիչ մաս (օրինակ, տե՛ս Омельченко О. А., Римское право. Учебник. М., 2000, с. 34 և այլն):

³⁴ Տե՛ս Памятники римского права. Законы XII таблиц. Институции Гая. Дигесты Юстиниана. М., «Зеркало», 1997, с. 16 - 151.

³⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 152-598:

մասին, յոթերորդում (44-49 գրքեր)՝ քրեական և հանրային իրավունքի հետ կապված, հարցերի պարզաբանումներն են, իսկ վերջին՝ 50-րդ գիրքը, նվիրված էր հին իրավաբանական տերմինների, դարձվածքների, արտահայտությունների, ասացվածքների մեկնությանը:

Ժողովածուի երրորդ մասը՝ Հուստինիանոսի օրենսգիրքը (Codex) համակարգել էր 4600 կայսերական սահմանադրություն՝ սկսած 117 թվականից: Այն բաղկացած է 12 գրքից և 765 տիտղոսից:

Առաջին գիրքը պարունակում է եկեղեցական իրավունքին, իրավունքի աղբյուրներին և պետական ծառայողների պարտականությանը վերաբերող հարցերը, 2-8 գրքերում ամփոփված են կայսեր սահմանադրությունները քաղաքացիական իրավունքի և դատավարության մասին, 9-րդ գիրքը նվիրված է քրեական իրավունքին, 10-12 գրքերը վերաբերում են պետական կառավարմանը, ֆինանսներին և այլն:

Համակարգման ժամանակ պահպանվել են սահմանադրությունների հրապարակման տարեթվերը և կայսերական անունները:

Եվ վերջապես, ժողովածուի չորրորդ մասը կոչվում էր նովելներ (Novellae)՝ բաղկացած 168 նովելներից (նոր օրենքներ), որոնք լրացնում և փոփոխում էին «Օրենսգրքում» եղած դրույթները:

Ժողովածուն, ամբողջությամբ վերցրած, խոշոր նշանակություն ունեցավ Բյուզանդական կայսրության հասարակական-քաղաքական կյանքում, ինչպես նաև էական դեր խաղաց այլ երկրների ազգային օրենսդրության և իրավական մշակույթի ձևավորման ու զարգացման գործում:

Գլուխ 3

Հանրային զարգացման իրավունքի հիմնական ինստիտուտները

3.1. Պետականության ձևավորումը և զարգացումը հին Հռոմում

Հին Իտալիայում, որը գտնվում է Ապենինյան թերակղզու վրա, մ.թ.ա. 1-ին հազարամյակում բնակվում էին զանազան ցեղեր և ցեղային միություններ³⁶:

³⁶ Մանրամասն տե՛ս История Древнего Рима. Учебник для вузов по спец. «История». Под ред. В. И.

Իտալիայի հնագույն ցեղերն էին՝ լիգուրները, սիկուլները, սիկանները: Իտալիայի բնակչության ճնշող մեծամասնությունը մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերին կազմում էին իտալիկները, որոնց շարքում առանձին նշանակություն են ունեցել սաբելական ցեղերը, ումբրերը, օսկերը և լատինները³⁷: Առաջին ժողովուրդները, որոնց մոտ տիրապետող է դառնում ստրկատիրական կարգը՝ էտրուսկներն էին: Իտալիայի ցեղերի մեջ առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում նաև լատինական ճյուղը, որը հաստատվել էր Հին Լատիումում: X-VIII դարերում մ.թ.ա. այդ ցեղերի մեծամասնության շրջանում առաջին քայլերն էին կատարվում պետաիրավական հասարակության ձևավորման ուղղությամբ³⁸:

Իտալիայի և էտրուսկների ժողովուրդները VIII-VI դարերում մ.թ.ա. սերտ առևտրական հարաբերություններ էին հաստատել հույների հետ, իսկ վերջիններիս քաղաքական և մշակութային ազդեցությունը կարևոր դեր խաղաց Իտալիայի քաղաք-պետությունների ձևավորման համար:

Իտալիայի, մասնավորապես Լատիումի քաղաքներից հատուկ նշանակություն ունեցավ Հռոմ քաղաքը: Ըստ պատմական ավանդույթի Հռոմը հիմնադրվել է մ.թ.ա. 753 թվականի ապրիլի 21-ին: Միասնական հռոմեական քաղաքի (*Populus Romanus*) հիմնական բնակիչներն էին քվիրիտները (*Quirites*), որոնք Հռոմի լիարժեք քաղաքացիներն էին: Սակայն հետագայում (VI-V դարեր մ.թ.ա.) Հռոմի ազատ բնակչության մի մասը, որոնք միավորված էին տոհմերում, աստիճանաբար դարձան հասարակության արտոնյալ խավ և կոչվում էին **պատրիկներ** (*patricii* - հայրեր ունեցողներ): Պատրիկները հակադրվում էին **պլեբեյներին** (բառացի նշանակում է՝ բազմություն), որոնք չունեին տոհմական կազմակերպություն և կազմում էին Հռոմի բնակչության ստորին խավը: Այսինքն՝ հռոմեական քաղաքի բնակչությունն ուներ դասային կառուցվածք, որը ցայտուն կերպով արտահայտվում էր Հռոմի քաղաքացիների իրավական դրությամբ:

VIII դարի կեսերին Հռոմում հաստատվում է ղեկավարի (թագավորի) իշխանության ավանդույթ, որը բնորոշ է նախապետականության շրջանին: Շուտով Հռոմ քաղաքի իշխանությունն անցնում է էտրուսկական առավել զարգացած ցեղային

Кузищин. М., Высш. шк., 2000, с. 34-36.

³⁷ Տե՛ս Մաշկին Ն. Ա., Հին Հռոմի պատմություն, 1949, էջ 119:

³⁸ Տե՛ս Омельченко О. А. Всеобщая история государства и права: Учебник, т. I М., 1999, с. 131.

միության ձեռքը, որոնց ձեռնարկած մի շարք քայլերի շնորհիվ (կուրիաների ստեղծումը, Մենատի հիմնադրումը, գորքի կազմակերպումը և այլն) ամրապնդվում է ժողովրդի քաղաքական միասնությունը և թագավորական իշխանության պետական-քաղաքական բովանդակությունը:

Պատմական և իրավաբանական գրականությունում³⁹ Հռոմեական պետականության զարգացման պատմությունն ընդունված է ստորաբաժանել հետևյալ ժամանակաշրջանների.

1. Թագավորության շրջան (753 թ. մ.թ.ա. մինչև 509 թ. մ.թ.ա.),
2. Հանրապետության ժամանակաշրջան (509 թ. մ.թ.ա. մինչև 27 թ. մ.թ.ա.),
3. Միապետության ժամանակաշրջան (27 թ. մ.թ.ա. - 476 թ.), որն իր հերթին ստորաբաժանվում է՝ ա) Պրինցրպատի շրջան (27 թ. մ.թ.ա. մինչև 234 թ.), բ) Դոմինատի շրջան (234 թ. մինչև 476 թ.):

3.2. Թագավորության ժամանակաշրջան

Թագավորական շրջանի իշխանության կազմակերպումը դեռևս լիարժեք ձևավորված պետականություն չէր⁴⁰: Նրանում խառնված էին ռազմա-տոհմական կառուցվածքի (կուրիական կոմիցիաներ) և պետական-հանրային իշխանության ինստիտուտի տարրերը (թագավոր, սենատ):

Հռոմի իշխանության գլուխ կանգնած էր թագավորը (*rex*), որը «գորահրամանատար էր, քրմապետ և որոշ դատարանների նախագահ»⁴¹: Թագավորի իշխանությունն, ըստ էության, ոչ ժառանգական էր, ոչ էլ ընտրովի, այսինքն՝ գոյություն չունեի գահաժառանգման կամ ընտրության կայուն հաստատված կարգ: Պայմանավորված կոնկրետ քաղաքական իրավիճակով՝ կամ թագավորն ինքն էր որոշում իր իրավահաջորդին, կամ էլ (որը հաճախ էր պատահում, քանի որ ավանդական յոթ լեզենդար թագավորներից շատերը սպանվել էն) թագավորի

³⁹ Ст'ю Всеобщая история государства и права. Учебник. Отв. ред. проф. К. И. Батыр, М., 2000, с. 86-118; История государства и права зарубежных стран. Учебник для вузов. Часть I, Изд-во «Норма», М., 1996, с. 123-147. Омельченко О. А. Всеобщая история государства и права. Учебник. Том. I. М., 1999, с. 134-164; Պետրոսյան Շ. Ն. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն (Ստրկատիրական պետությունների և իրավունքի պատմություն): Ուսումնասովանողական ձեռնարկ: Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1986, էջ 107:

⁴⁰ Ст'ю Омельченко О. А. Всеобщая история государства и права. Учебник. Том I, с. 134.

⁴¹ Ф. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Հայպետ հրատ, Երևան, 1943, էջ 168:

ընտրությունը կատարում էին կուրիական կոմիցիաները և ավագների խորհուրդը:

Թագավորն օժտված էր բարձրագույն իշխանությամբ (*imperium*), սակայն նրա իշխանությունը սահմանափակ էր: Նա չէր կարող միջամտել տոհմի ներքին կյանքին: Թագավորը կազմակերպում և գլխավորում էր գործը արշավանքների ժամանակ, ընդունում էր օրենքներ՝ հիմնականում կրոնի և պաշտամունքի հարցերի վերաբերյալ, կազմակերպում էր քաղաքի տոնակատարությունները և այլն: Կարևորագույն գործերը քննելիս թագավորը հանդես էր գալիս որպես գերագույն դատավոր: Ֆ. Էնգելսի խոսքերով *rex*-ը «միահեծան թագավոր չէր, ինչպես ներկայացնում է նրան Մովզենը, այլ ցեղային առաջնորդ էր»⁴²:

Թագավորական շրջանի մյուս կառավարման կենտրոնական ապարատի կարևոր մարմինն էր **Սենատը** կամ **ավագների խորհուրդը** (այստեղից էլ անվանումը):

Հնագույն ժամանակաշրջանում Սենատը կազմված էր տոհմերի ավագանու ներկայացուցիչներից: Դա ավագների խորհուրդ էր, որը բնորոշ է նաև այլ ժողովուրդներին՝ վերջիններիս զարգացման վաղ շրջանում: Մեզ հասած պատմական որոշ աղբյուրների համաձայն՝ Սենատի անդամների թիվը տարբեր է եղել: Այսպես, Հռոմուլոս թագավորի կառավարման օրոք Սենատը բաղկացած էր 100 անդամից, սաբինների սինտկիզմի (ցեղի անվանում է) իշխանության ժամանակ՝ 200, իսկ թագավոր Տարքվինիոս Ավագի օրոք այն հասավ 300 անդամի:

Առաջին սենատորները նշանակվել են թագավորի կողմից, իսկ հետագայում՝ սենատորի պաշտոնը դարձավ ժառանգական: Վաղ ժամանակաշրջանի Սենատի կարևոր լիազորությունն էր նոր թագավորի ընտրության կազմակերպումը: Թագավորի մահից հետո, մինչև նորի ընտրությունը, Սենատն իր կողմից ընտրում էր տասը ժամանակավոր կառավարիչներ, որոնք միմյանց հաջորդելով կառավարում էին քաղաքը՝ յուրաքանչյուրը 5 օր ժամկետով:

Կուրիական կոմիցիաների բոլոր որոշումները պետք է Սենատի հավանությանը արժանանային (*auctoritas patrum*), որը նախահայրերի ա-վանդույթների (*mos maiorum*) պահապան էր և կարևոր գործերով՝ թագավորի խորհրդականը:

Սենատն օժտված էր նաև որոշակի դատական իշխանությամբ՝ առաջնային նշանակություն չունեցող գործերով: Սենատում որոշումներն ընդունվում էին

⁴² Ֆ. Էնգելս, նշվ. աշխ., էջ 163:

քվեարկությամբ: Սենատի անդամները հայրեր (*patres*) էին կոչվում:

Թագավորական շրջանում, ինչպես նշեցինք, դեռևս պահպանվում էին ռազմատոհմային կառուցվածքի մարմինները՝ ժողովրդական հավաքներ կամ կուրիական կոմիցիաներ (*Comitia curiata*):

Կուրիական կոմիցիաների աշխատանքին մասնակցում էին բոլոր չափահաս տղամարդիկ և քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում էին բղավելով կամ քվեարկությամբ:

Կուրիական կոմիցիաները գումարվում էին հատկապես կարևորագույն հարցեր քննարկելիս, մասնավորապես՝ նոր թագավորի հաստատման, ինչպես նաև ռազմական բնույթի, պաշտամունքի հետ կապված և ամուսնա-ընտանեկան հարաբերություններին վերաբերող հարցերի լուծման համար:

Կուրիական կոմիցիաներում կազմվում էին նաև կտակներ, որոշում էին կայացնում համայնքներում նոր տոհմերի ընդգրկման մասին և այլն: Կուրիական կոմիցիաներն օժտված էին դատական իշխանությամբ և քննում էին ծանր հանցագործությունները:

Յուրաքանչյուր կուրիա ուներ մեկ ձայն:

Թագավորական շրջանում պաշտոնատար ընտրովի անձանց համակարգը շատ պարզ էր: Կարևոր պաշտոններից էր քաղաքի պրեֆեկտը (*praefectus urbis*), որին նշանակում էր թագավորը և վերջինիս բացակայության ժամանակ պրեֆեկտը կառավարում էր քաղաքը (բացի կրոնական հարցերից):

Նեոյալներին ղեկավարելու համար գործում էր հեծյալ տրիբունի՝ առաջնորդի պաշտոնը, որի հիմնական խնդիրներից էր քաղաքի անվտանգության ապահովումը:

Գոյություն ուներ նաև զինվորական տրիբունների պաշտոնը, որոնք ղեկավարում էին լեգիոնը և իրենց իրավասության սահմաններում իրականացնում էին զինվորական դատարանի իշխանություն՝ իրենց ենթակա զինվորների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ:

Այդ ժամանակաշրջանի կառավարման ապարատում կարևոր դեր էին խաղում քրմերը: Հնագույն քրմական կոլեգիա էին ֆլամինները, որոնք թագավորի օգնականներն էին համայնքային տոնակատարությունների անցկացման հարցերով: Նրանց անձն անձեռնմխելի էր:

Իրենց նշանակությամբ քրմերի երկրորդ դասն էին կազմում ավգուրները, որոնք

մեկնաբանում էին պաշտամունքի հարցերը, գուշակում աստվածների կամքը, կամ ժողովների և ընտրությունների կազմակերպման ու անցկացման բարենպաստ ժամանակը և այլն: Այս տեսանկյունից նրանք զգալի ազդեցություն ունեին իշխանության գործունեության վրա:

Եվ, վերջապես, իրենց դիրքով և նշանակությամբ քրմերի երրորդ դասն էին կազմում **պոնտիֆիքսները**: Սրանք թագավորի խորհրդականներն էին կրոնի և իրավունքի հարցերով: Նրանք վկայում էին նաև ամուսնության կնքման, դատական ծեսերի արարողակարգերը: Պոնտիֆեքսների կոլեգիան էր պահպանում նաև սովորութային իրավունքի նորմերը:

3.3. Հանրապետության ժամանակաշրջան

Մ.թ.ա. V-IV դարերի հռոմեական պետականության զարգացման հիմնական արդյունքը՝ հանրապետական կարգերի ձևավորումն ու ամրապնդումն էր: Այդ գործընթացի վրա հսկայական ազդեցություն է ունեցել պատրիկների և պլեբեյների երկարատև պայքարը, որը տևել է մ.թ.ա. VI դարի վերջից մինչև III դարի սկիզբը⁴³:

Պլեբեյների պայքարի հիմնական խնդիրն էր իրենց քաղաքական իրավունքների ընդլայնումը: Նրանք օգտվում էին հռոմեական քաղաքացիության իրավունքից, ծառայում էին զորքում, մասնակցում ժողովրդական ժողովի աշխատանքներին, բայց չէին կարող ընտրվել կոնսուլ և Սենատի անդամ լինել:

Պատմական աղբյուրների համաձայն, առաջին խոշոր ընդհարումը պատրիկների և պլեբեյների միջև տեղի է ունեցել, ըստ պատմիչ Տիտոս Լիվիոսի, 494 թ. մ.թ.ա.: Պլեբեյները՝ դժգոհ լինելով պատրիկների վարած քաղաքականությունից, հրաժարվեցին էքվեյի դեմ արշավանքից և հեռացան Սրբազան լեռը, որը կոչվեց առաջին սեցեսիա (հրաժարվել, հեռանալ): Արտաքին վտանգի ազդեցությունից դրդված, հռոմեական համայնքի պատրիկները ստիպված էին համաձայնվելու և ստեղծելու նոր քաղաքական ինստիտուտներ, որոնք կարող էին երաշխավորել պլեբեյների իրավունքները: Մ.թ.ա. 493 թվականին ընտրվեցին երկու ժողովրդական տրիբուններ, որոնք պարտավոր էին պլեբեյների իրավունքները պաշտպանել պատրիկական մագիստրատների կամայականություններից: Հետագայում տրիբուն-

⁴³ Մանրամասն տե՛ս **Մաշկին Ն. Ա.** Հին Հռոմի պատմություն, Երևան, 1949 թ., էջ 175: История Древнего Рима. Учебник для вузов по спец. «История». Под ред. В. И. Кузищина, М., 2000.

ների թիվն ավելացավ՝ 471 թ. մ.թ.ա. արդեն կար 4, իսկ 457 թ. մ.թ.ա.՝ 10 տրիբուն: Տրիբունների իշխանությունը տարածվում էր Հռոմ քաղաքի ներսում և նրա շրջակայքում՝ մեկ միլ հեռավորության վրա:

Երկարատև պայքարի շնորհիվ, պլեբեյները ձեռք բերեցին պատրիկների հետ համահավասար իրավունք՝ մասնակցելու ընտրովի պաշտոններին: Այսպես, 409 թ. մ.թ.ա. հասան կոնսուլի օգնականի՝ կվեստորի, 367 թ. մ.թ.ա.՝ կոնսուլի, 364 թ. մ.թ.ա.՝ կուրիական եղիլի (քաղաքի ոստիկանապետ), 351 թ. մ.թ.ա.՝ ցենզորի, 337 թ. մ.թ.ա.՝ դատական պրետորի և կոնսուլի զինվորական օգնականի պաշտոններին: 356 թ. մ.թ.ա. սահմանվեց, որ դիկտատորի պաշտոնին նույնպես կարող է ընտրվել պլեբսի ներկայացուցիչը:

Պատրիկների և պլեբեյների հետագա պայքարի արդյունքում՝ մ.թ.ա. 450-449 թվականին, հրապարակվեցին Տասներկու տախտակների օրենքները, որը կարևոր քայլ էր պատրիկների և պլեբեյների իրավունքների հավասարեցման ճանապարհին: Ապագա հանրապետական կարգերի ձևավորման համար հսկայական դեր խաղացին կոնսուլներ Վալերիոսի և Հորատիոսի (449-448 թթ. մ.թ.ա.) օրենքները: Այդ օրենքներն ամրապնդեցին՝

1) պլեբեյների ժողովրդական տրիբունների ընդունած որոշումների պարտադիր լինելը պատրիկների համար,

2) յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը, որը մեղադրվում էր մագիստրատի կողմից, դիմելու ժողովրդին՝ իր ճակատագիրը լուծելու խնդրանքով,

3) ժողովրդական տրիբունի անձի սրբազան և անձեռնմխելի լինելը:

Ինչպես վերը նշեցինք, մ.թ.ա. IV դարի սկզբներին պլեբեյների համար մատչելի դարձան բոլոր ընտրովի պաշտոնները, իսկ 300 թ. մ.թ.ա. Օգուլնիոս եղբայրների օրենքի համաձայն, պլեբեյները կարող, էին մուտք գործել պոնտիֆիքսների և ավգուրների կոլեգիան:

Վերջապես նշենք, որ Քվինտոս Հորտենսիոսի օրենքով (287 թ. մ.թ.ա.) հաստատվեց, որ պլեբսի տրիբունսային ժողովներում կայացրած որոշումներն օրենքի ուժ էին ստանում:

Այսպիսով, մ.թ.ա. IV դարի վերջին և մ.թ.ա. III դարի սկզբին հիմնականում ավարտվեց հռոմեական համայնքի սոցիալ-քաղաքական ինստիտուտների ունիֆիկացիան, ինչի հիման վրա կազմավորվեց զարգացած պետական

ինստիտուտների համակարգ, որը զուգակցում էր ուղղակի ժողովրդավարությունը՝ ազնվականության ներկայացուցչության հետ⁴⁴:

Հանրապետության ժամանակաշրջանի հռոմեական պետականությունը հիմնված էր օրենսդիր և գործադիր ինստիտուտների համակարգի վրա, որն ամրագրված էր գործող իրավունքում և քաղաքական ավանդույթներում:

Այդ ժամանակաշրջանում է, որ Հռոմը դառնում է աշխարհակալ տերություն, որն ավելի միասնական և տիրապետող դարձրեց հռոմեական ժողովրդին: Մ.թ.ա. IV- I դարերում Հռոմի պետական կառուցվածքը հիմնականում անփոփոխ մնաց: Նրա հիմքն էին կազմում ժողովրդաիշխանության ուղղակի և անուղղակի ինստիտուտները: Իշխանության կազմակերպման իմաստը հռոմեացիները տեսնում էին պոլիսի լիիրավ քաղաքացու իրավունքների պաշտպանության մեջ: Ըստ այդ ժամանակաշրջանի հռոմեական իրավաքաղաքական հայեցակարգի՝ միայն ողջ ժողովուրդն է օժտված գերագույն իշխանությամբ, վերջինս իրեն պատկանող գերագույն իշխանության մի մասը հանձնել է իր ներկայացուցիչներին՝ ընտրովի մարմիններին և պաշտոնատար անձանց: Հենց այդ գլխավոր սկզբունքն է ընկած դասական հռոմեական հանրապետական կարգերի հիմքում:

Հանրապետության ժամանակաշրջանում Հռոմի պետական իշխանության և կառավարման մարմիններն էին՝ ժողովրդական ժողովները, Սենատը և մագիստրատները:

Ժողովրդաիշխանությունը՝ որպես պետական կոլեկտիվ կառավարման ինստիտուտ, ամրապնդված էր ժողովրդական ժողովի օրենսդրական լիազորություններով:

Հանրապետության ժամանակաշրջանում գոյություն ուներ երեք տեսակի ժողովրդական ժողով:

Առաջինը՝ պատմականորեն ձևավորված կուրիական ժողովը (կոմիցիան), որն աստիճանաբար կորցրել էր իր երբեմնի նշանակությունը և նրա իրավասությունը շարունակում էր տարածվել ամուսնա-ընտանեկան հարաբերությունների կարգավորման, մասնավորապես՝ որդեգրման և կտակների հաստատման, ինչպես նաև մագիստրատներին բարձրագույն իշխանություն (imperium) շնորհման վրա:

Ժողովրդական ժողովի երկրորդ տեսակը՝ ցենտուրիական կոմիցիաներն էին,

⁴⁴ См. у Омельченко О. А. Всеобщая история государства и права. Учебник. Часть I, с. 141.

որոնք հրավիրվում էին բարձրագույն մագիստրատների (կոնսուլների, դիկտատորների, պրետորների) կողմից և շարունակվում էին հավաքվել ըստ ցենսուրիաների, որը սահմանված էր դեռևս Մերվիոս Տալլիոսի բարեփոխումներով (509 թ. մ.թ.ա.): Այդ ժողովն էր Հռոմի ժողովրդաիշխանության դրսևորման հիմնական ձևը՝ ոչ միայն նրանով, որ այն ընդգրկում էր Հռոմի լիիրավ բնակչության մեծամասնությունը, այլև նրանով, որ օժտված էր պետությանը ներհակ լիազորություններով: Այդ լիազորությունները երեք կարգի էին: Առաջին, այստեղ էին ընտրվում կարևոր մագիստրատները՝ կոնսուլները, պրետորները, ցենզորները, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում՝ դիկտատորի նշանակումը: Երկրորդ, ցենսուրիական կոմիցիաներում հաստատվում էին մագիստրատների կողմից ներկայացված օրենքները: Երրորդ, կոմիցիաներն օժտված էին նաև դատական իշխանությամբ և քննում էին այնպիսի գործեր, որոնց հիման վրա մահապատիժ էր նախատեսվում: Դատական գործերով որոշումները փոփոխման ենթակա չէին, սակայն կարող էին կասեցվել ժողովրդական տրիբունների կողմից:

Կոմիցիաներում քվեարկությունը կատարվում էր ըստ ցենսուրիաների, ըստ որում՝ յուրաքանչյուր ցենսուրիա ուներ մեկ ձայն: Ցենսուրիական կոմիցիաների որոշումը օրենք (*lex*) էր համարվում, որն ուժի մեջ էր մտնում Սենատի հավանությունից (*auctoritas patrum*) հետո միայն: Հորտենսիոսի օրենքից հետո օրենսդրական լիազորությունն աստիճանաբար անցնում է տրիբունային կոմիցիաներին, և միայն պատերազմի ու խաղաղության հարցերն էին քննարկվում ցենսուրիական կոմիցիաներում:

Ժողովրդական ժողովի երրորդ ձևը՝ տրիբունային կոմիցիաներն (*comitia tributa*) էին, որոնք, սկսած մ.թ.ա. V դարի կեսերից, զգալի նշանակություն ձեռք բերեցին: Սրանց ժողովները գումարվում էին ըստ տրիբունների: Մ.թ.ա. 241 թ. տրիբունների թիվը հասավ մինչև 35-ի: Սկզբում այստեղ մասնակցում էին միայն պլեբեյները, որոնք հավաքվում էին ըստ տրիբունների՝ պլեբեյական մագիստրատներ ընտրելու համար: Հետագայում պլեբեյական ժողովների կողքին գումարվում էին նաև բոլոր քաղաքացիների ժողովները՝ ըստ տրիբունների: Տրիբունային կոմիցիաները գումարվում էին զանազան վայրերում՝ Ֆորումում, Կապիտոլիում, երբեմն՝ քաղաքից դուրս: Կոմիցիաները հրավիրում էին կուրուլային մագիստրատները (կոնսուլը, դիկտատորը, պրետորը, կուրուլային էդիլը) կամ պլեբեյական մագիստրատները

(ժողովրդական տրիբունը, պլեբեյական էդիլը): Առաջին դեպքում ժողովները կոչվում էին տրիբուսային կոմիցիաներ (*comitia tributa*), երկրորդ դեպքում՝ պլեբեյական ժողովներ (*concilia plebs*): Քվեարկությունը կատարվում էր ըստ տրիբունների:

Տրիբուսային կոմիցիաների հիմնական իրավասությունն էր. առաջին՝ դատական իշխանություն, որի հիմնական խնդիրն էր պլեբեյական մագիստրատների որոշումների վերաբերյալ գանգատների քննությունը, երկրորդ՝ պլեբեյական մագիստրատների ընտրությունը (ժողովրդական տրիբուն, էդիլ), երրորդ՝ օրենսդրական գործունեություն: Սկզբում! կոմիցիաների որոշումները կոչվում էին՝ պլեբիսցիտ (*plebiscitum*), հե՛տագայում, Հորտենսիոսի 287 թ. մ.թ.ա. օրենքի համաձայն, պլեբեյա՛կան ժողովների ընդունած որոշումները օրենքի (*lex*) ուժ ստացան:

Հռոմի հանրապետության կենտրոնական մարմինն էր Սենատը, որը ուներ հնագույն ծագում և ավանդույթի համաձայն կրում էր հատուկ ա՛ռաքելություն՝ որպես հռոմեական ժողովրդի և հին սովորույթների պա՛հապան: Իր լիազորություններով Սենատը պետական իշխանության և կառավարման մարմինների համակարգում կատարում էր մի տեսակ հավասարակշռման դեր: Մի կողմից՝ զսպում էր ժողովրդական ժողով՝ ների պոռթկումները, մյուս կողմից՝ մագիստրատների անխուսափելի կամայականությունները: Սենատի անդամներն էին հիմնականում նախկին մագիստրատները: Հանրապետության ժամանակաշրջանում Սենատի անդամների թիվը տատանվում էր 300-ից (IV-III դդ. մ.թ.ա.) մինչև 600-ի (I դ. մ.թ.): Սենատորները նշանակվում էին հինգ տարի ժամկետով, որից հետո տեղի էր ունենում Սենատի կազմի նոսրացում, որտեղ չէր բացառվում նաև վերընտրությունը: Սենատը հրավիրելու իրավունք ունեին բարձրագույն մագիստրատները՝ դիկտատորը, կոնսուլը, պրետորը, իսկ հետագայում այդպիսի իրավունք ձեռք բերեցին նաև ժողովրդական տրիբունները: Հրավիրելով Սենատը՝ մագիստրատը զեկուցում էր, որից հետո անցնում էին զեկուցման քննարկմանը: Սենատորներից յուրաքանչյուրը (նախօրոք սենատորները ցուցակագրվում էին խիստ կարգով՝ ըստ իրենց նախկին պաշտոնների՝ կոնսուլ, պրետոր L այլն), ըստ ցուցակում նշված հերթականության՝ հայտնում էին իրենե՛յ կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ և որից հետո՝ քվեարկությամբ կայացնում էին որոշում (*senatus-consultum*):

Պատմականորեն Սենատը համարվում էր խորհրդակցական մարմին, որի հետ խորհրդակցում էին մագիստրատները, որպեսզի վերջիններիս որոշումները հեղինակություն վայելեին ժողովրդի մեջ: Սակայն հանրապետության ժամանակաշրջանում Սենատի լիազորությունները դուրս էին եկել խորհրդակցական մարմնի շրջանակներից և այն դարձել էր հանրապետության գլխավոր պետական հաստատությունը՝ որոշակի օրենսդրական և գործադիր իշխանությամբ: Սենատն էր տնօրինում կրոնի և պաշտամունքի հարցերը, պետական ֆինանսները, ներքին անվտանգության հարցերը: Նրա ձեռքում էր նաև արտաքին քաղաքականության ղեկավարումը:

Եվ, վերջապես, Սենատը, արտակարգ դեպքերում, կարող էր երկարացնել մագիստրատների իշխանական լիազորությունները՝ կախված նրանց գործունեության բնույթից:

Հանրապետության հենց սկզբից Սենատը ազնվականության հենարանն էր: Հռոմի հանրապետության գործադիր իշխանությունը գտնվում էր պաշտոնատար անձանց՝ **մագիստրատների** ձեռքում:

Բոլոր մագիստրատներն ընտրովի պաշտոններ էին (բացի ցենզորից, մնացած մագիստրատները, որպես կանոն, ընտրվում էին մեկ տարով): Իրենց աշխատանքի դիմաց չէին վարձատրվում, քանի որ մագիստրատի պարտականությունների կատարումը ծառայություն չէր, այլ honor՝ պատիվ, հարգանք:

Տեսականորեն մագիստրատներն իրենց գործունեության համար պատասխանատու էին ժողովրդական ժողովների առջև, սակայն պաշտոնավարության ժամանակ մագիստրատը չէր կարող պատասխանատվության ենթարկվել:

Մագիստրատների լիազորությունները բաժանվում էին երկու խմբի՝ «potestas» և «imperium»⁴⁵:

Potestas-ն արտահայտում էր ընդհանուր իշխանության հասկացությունը և ներառում էր սահմանափակ լիազորություններ՝ կարգադրություններ անելու և տուգանք նշանակելու իրավունքը, որով օժտված էին ցածր աստիճանի մագիստրատները (եդիլներ, քվեստորներ և այլն):

Imperium նշանակում էր բարձրագույն իշխանություն և ներառում էր հետևյալ լիազորությունները.

⁴⁵ **St u Скриплев** Е. А. Основы римского права. Конспект лекций. М., 1989, с. 40-41.

ա) բանակի գերագույն հրամանատարությունը, հակառակորդի հետ զինադադարի կնքումը, բանակի հրամկազմի նշանակումը,

բ) Մենատի և ժողովրդական ժողովների հրավիրման և դրանց նախագահելու իրավունքը,

գ) բարձրագույն իրավագործության (քաղաքացիական և զինվորական ոլորտներում) իրականացումը,

դ) կարգադրություններ անելու և դրանց կատարումը հարկադրանքի ուժով ապահովելու իրավունքը:

Այդպիսի իշխանությամբ օժտված էին բարձրագույն մագիստրատները՝ դիկտատորը, կոնսուլները և պրետորները:

Կոնսուլները, որոնք երկուսն էին, բարձրագույն մագիստրատներն էին, որոնք ընտրվում էին ցենսուրիական կոմիցիաներում: Լիցինիոսի և Սեքստիոսի օրենքների (367 թ. մ.թ.ա.) համաձայն՝ կոնսուլներից մեկն ընտրվում էր պլեբեյներից: Սրանք օժտված էին բարձրագույն քաղաքացիական և զինվորական իշխանությամբ:

Կոնսուլը բանակում իրականացնում էր արդարադատություն, տնօրինում էր ռազմական ավարը (միայն շարժական գույքը), իսկ նվաճված տարածքների հարցը լուծում էր Սենատը:

Կոնսուլը կարող էր հաշտության համաձայնագիր կնքել Հռոմեական պետության թշնամու հետ, սակայն այդ համաձայնագիրը ենթակա էր վավերացման Սենատի կողմից: Պատերազմական գործողությունների ընթացքի մասին կոնսուլը պարտավոր էր պարբերաբար տեղյակ պահել Սենատին և կատարել վերջինիս հանձնարարությունները: Կոնսուլը կարող էր պատասխանատվության կանչվել պարտության դեպքում, պատերազմի համար հատկացված գումարի ոչ նպատակային ծախսման համար և այլն:

Պրետոր: Մ.թ.ա. 367 թ. հաստատվեց պրետորի պաշտոնը, որը փաստորեն կոնսուլի տեղակալն էր՝ վերջինիս բացակայության ժամանակ: Մ.թ.ա. 3-րդ դարում պրետորների թիվը հասավ երկուսի, իսկ մ.թ.ա. 1-ին դարում՝ 8-ի: Ինչպես կոնսուլները, այնպես էլ պրետորներն օժտված էին բարձրագույն իշխանությամբ՝ *imperium*.

Պրետորները նույնպես ընտրվում էին ցենսուրիական կոմիցիաներում՝ մեկ տարի ժամկետով: Նրանց հիմնական լիազորություններն էին՝ ապահովել քաղաքի

ներքին կարգուկանոնը, հասարակական կարգը և անվտանգությունը: Նրանք օժտված էին նաև արդարադատության գործառույթով, որը հետագա դարերում ավելի ընդարձակվեց:

Ըստ մագիստրատների աստիճանակարգության, հաջորդ պաշտոնը **ցենզորն** էր: Մ.թ.ա. 443 թ. ցենտուրիական կոմիցիաները սկսեցին ընտրել երկու ցենզորներ՝ սկզբում միայն պատրիկներից: Նրանք ընտրվում էին 5 տարի ժամկետով, որը հետագայում սահմանափակվեց մեկ ու կես տարվա ժամկետով: Նրանց իրավասությունն էր՝ քաղաքացիներին ըստ տրիբունների և ցենտուրիաների, այսինքն՝ ըստ դասերի բաժանելու գործը, իսկ Օվինիոսի օրենքի համաձայն (մոտ. 312 թ. մ.թ.ա.) նրանք սկսեցին կազմել սենատորների ցուցակները: Այդ գործառույթների հետևանքով ցենզորների վրա է դրվում նաև բարքերի վերահսկողությունը: Նրանք մասնակցում էին նաև ֆինանսական հարցերի (տուրքերի, մաքսերի չափը որոշելու և այլն) կառավարմանը: Ցենզորի պաշտոնը պլեբեյների համար մատչելի դարձավ միայն 351 թ. մ.թ.ա., իսկ 339 թ. մ.թ.ա. Պուբլիոս Ֆիլոնի օրենքով սահմանվեց, որ ցենզորներից մեկը պետք է պլեբեյ լինի: Ցենզորների որոշումները ենթակա չէին գանգատարկման և դատական քննության:

Սովորական մագիստրատներից ցածրագույն պաշտոնը՝ **քվեստորներն** էին: Այդ պաշտոնը սահմանվեց մ.թ.ա. 421 թ.: Քվեստորների թիվը սկզբից չորսն էր, իսկ հետագայում՝ ութը: Նրանք ընտրվում էին տրիբունային կոմիցիաներում: Ձևականորեն նրանք կոնսուլների օգնականներն էին, վարում էին պետական գանձարանը, մուտքի և ելքի մատյանները, պետական արխիվը, ինչպես նաև ռազմական ավարը բաշխելու և վաճառելու գործը:

Հանրապետության ժամանակաշրջանի (մ.թ.ա. 494 թ.) պետական կառավարման համակարգում առանձնահատուկ նշանակություն ուներ **տրիբունատը**: Ժողովրդական տրիբուններն ընտրվում էին տրիբուններով գումարվող պլեբեյական ժողովներում: Այդ պաշտոնը մատչելի էր միայն պլեբեյներին: Սկզբնական շրջանում ընտրվում էին հինգ, իսկ մ.թ.ա. 457 թվականից՝ մինչև 10 տրիբուններ: Տրիբունի անձն անձեռնմխելի էր: Ժողովրդական տրիբունների հիմնական խնդիրն էր՝ պլեբեյների քաղաքացիական իրավունքների պաշտպանումը: Այստեղից էլ հետևում էր նրանց իրավունքը՝ միջամտելու մագիստրատների գործունեությանը (բացի դիկտատորի և ցենզորի), ինչպես նաև

մագիստրատի, Սենատի և, նույնիսկ, ժողովրդական ժողովի որոշումների վրա արգելք (veto) դնելու իրավունքը, որի շնորհիվ նրանք ոչ միայն բողոքարկում էին դրանց այն որոշումները, որոնք այս կամ այն կերպ ոտնահարում էին պլեբեյների իրավունքները, այլև վերացնում էին այդպիսի որոշումները:

Տրիբուններն իրավունք ունեին պլեբեյական ժողովներ գումարելու: Նրանք կարող էին բողոքարկել Սենատի որոշումը, սակայն իրավունք չունեին մասնակցելու Սենատի նիստերին: Հետագայում տրիբունները իրավունք ստացան մասնակցելու Սենատի աշխատանքներին և նույնիսկ Սենատի նիստեր հրավիրելու:

Տրիբունների օգնականներն էին կուրուլային էդիլները, որոնք չորսն էին՝ երկուսը՝ պլեբեյներ և երկուսը՝ պատրիկներ: Էդիլների հիմնական պարտականություններն էին՝ քաղաքի կարգուկանոնի պահպանումը (ոստիկանական գործառույթ), պարենավորման ապահովումը և շուկաների վերահսկողության իրականացումը: Էդիլներն ընտրվում էին տրիբունային կոմիցիաներում:

Բացի սովորական մագիստրատներից, գոյություն ունեին նաև, այսպես կոչված, արտակարգ մագիստրատներ, որոնցից իր նշանակությամբ կարևորագույնն էր **դիկտատորի** պաշտոնը, որն առաջին անգամ ընտրվել է մ.թ.ա. 501-498 թվականներին: Սենատի առաջարկությամբ դիկտատոր էր նշանակվում կոնսուլներից մեկը՝ արտակարգ իրադրությունների դեպքում՝ պատերազմ, խռովություն և այլն: Դիկտատորն օժտված էր ամբողջ իշխանությամբ (summus imperium) և բոլոր մագիստրատները, այդ թվում և կոնսուլները, նրան էին ենթարկվում: Նրա իշխանությունը փաստորեն սահմանափակված էր միայն պաշտոնավարման ժամկետով՝ վեց ամսից ոչ ավելի: Նրա կարգադրությունները բողոքարկման ենթակա չէին, նույնիսկ ժողովրդական տրիբունները իրավունք չունեին արգելք (veto) դնելու նրա որոշումների վրա: Սկզբում դիկտատոր նշանակվում էր միայն պատրիկներից: Պլեբեյներից առաջին դիկտատորը նշանակվեց միայն մ.թ.ա. 356 թվականին: Դիկտատորը կոչվում էր նաև magister populi և գլխավորում էր ողջ հռոմեական համայնքի զորքը: Դիկտատորի բացառիկ իշխանության արտաքին նշաններն էին՝ առջևից գնացող 24 լիկտորները՝ փնջերով: Սովորաբար դիկտատորն իր համար օգնական էր նշանակում հեծելազորի հրամանատարին:

Մագիստրատների համակարգում կային նաև ցածր աստիճանի պաշտոնատար

անձինք՝ ընդհանուր թվով 26 հոգի: Նրանք իրականացնում էին ոստիկանական գործառույթներ, վերահսկողություն դրամական գործի նկատմամբ, հետևում էին ճանապարհների սարքին լինելուն և այլն:

Բանակը: Հռոմեական պետականության հզորացմանը նպաստում էր նաև նրա հզոր և կարգապահ բանակը: Վաղ ժամանակաշրջանում հռոմեական զորքը կազմված էր զենք կրելու ընդունակ տոհմակիցներից: Սերվիուս Տուլիուսի բարեփոխումների (մ.թ.ա. 509 թ.) հետևանքով⁴⁶, առաջին հինգ դասին պատկանողները պետք է պարտադիր զինվորական ծառայություն կրեին: Զինվորական պարտքի կատարումը համարվում էր պատվի գործ: Հանրապետության սկզբնական շրջանում, գույքային բաժանմանը զուգահեռ, գործում էր նաև բաժանումը ըստ հասակի: Այսպես, 17-ից մինչև 46 տարեկան բոլոր քաղաքացիները պարտավոր էին մասնակցելու բոլոր արշավանքներին: Զորահավաքը կատարում էին կոնսուլները, որոնք բանակը համալրում էին ցենզորական ցուցակների հիման վրա: Հռոմեական զորքի հիմնական մարտական միավորը լեգիոնն էր, որը սովորաբար բաղկացած էր 4500 զինվորից: Զինվորական պարտականություններից ազատվում էին հաշմանդամները, ինչպես նաև ընտրովի մագիստրատները և քրմերը: Զինվորական պարտականությունից խուսափողները սկզբնական շրջանում ստրուկի էին վերածվում, իսկ հետագայում՝ պատժվում էին խոշոր դրամական տուգանքով, գույքի բռնագրավումով կամ համայնքից արտաքսումով:

Զորքի ավագ հրամանատարները զինվորական տրիբուններն էին, որոնք սկզբնական շրջանում նշանակվում էին կոնսուլների կողմից, իսկ հետագայում՝ ընտրվում էին ժողովրդական ժողովի կողմից: Հռոմեական բանակի ընդհանուր հրամանատարությունը իրականացնում էին կոնսուլները կամ դիկտատորը:

3.4. Միապետության ժամանակաշրջան

Մ.թ.ա. 1-ին դարի սկզբից Հռոմեական հանրապետությունը թևակոխեց հասարակական-քաղաքական ճգնաժամերի և ռազմական ընդհարումների շրջան,

⁴⁶ Ըստ այդ բարեփոխումների, զենք կրելու ընդունակ բոլոր տղամարդիկ, ըստ իրենց գույքային դրության, բաժանվում էին 6 դասի: Վեցերորդ դասին պատկանողները, ովքեր ունեին պակաս կարողություն, ազատված էին զինվորական ծառայությունից և հարկեր վճարելուց (տե՛ս История Древнего Рима. Учебник. Под ред. В. И. Кузицина, М., «Высшая школа», 2000, с. 47.

որը չէր կարող իր ազդեցությունը չունենալ պետական իշխանության կազմակերպման վրա: Հռոմի հանրապետական կարգի հիմնական ճգնաժամը արտահայտվում էր մ.թ.ա. 1-ին դարում ձևավորված մեկ անձի ռազմա-քաղաքական դիկտատուրայի ինստիտուտի ստեղծմամբ, որը Հռոմում ձեռք բերեց գրեթե մշտական բնույթ: Պատմականորեն առաջին նոր իշխանությունը դիկտատուրայի ձևով՝ դա գորահրամանատար Սուլլայի հաստատած դիկտատուրան էր (82 թ. մ.թ.ա. - 79 թ. մ.թ.ա.): Ճգնաժամից դուրս գալու համար Սուլլան դիմեց Սենատին ուղերձով, թե ինքն անհրաժեշտ է համարում արտակարգ լիազորություններ տալ մի մարդու՝ պետության մեջ կարգուկանոն հաստատելու համար: Մ.թ.ա. 82 թվականին ժամանակավոր կառավարիչ (քանի որ կոնսուլներ չկային) Լուցիոս Վալերիոս Ֆրաքոսի (Ավագ) առաջարկությամբ ժողովրդական ժողովն օրենք ընդունեց և Սուլլան նշանակվեց անորոշ ժամկետով դիկտատոր: Այդ օրենքով Սուլլան արտակարգ իրավունքներ ստացավ՝ օրենքներ ընդունելու, առանձին անձանց բարձրագույն իշխանություն (imperium) շնորհելու, արտաքին քաղաքականություն վարելու համար և այլն:

Միապետության ձևավորման երկրորդ փուլը՝ Հուլիոս Կեսարի ռազմական դիկտատուրայի հաստատումն էր, որի օրոք զգալիորեն սահմանափակվեցին Սենատի լիազորությունները, ժողովրդական ժողովների գործունեությունը: Այնուհետև, Կեսարի սպանությունից հետո, ամբողջ իշխանությունն անցավ Օկտավիանոսին (30 թ. մ.թ.ա. -14 թ. մ.թ.): Սրա կառավարման օրոք վերջնականապես ձևավորվում են միապետական կարգերը՝ 27 թ. մ.թ.ա.: Նա հռչակվեց միանձնյա պրինցեպս:

Կախված պետական միանձնյա իշխանության կենտրոնացման աստիճանից՝ միապետության ժամանակաշրջանը բաժանվում է երկու շրջանների՝ պրինցիպատի և դոմինատի:

Պետական կարգը պրինցիպատի ժամանակ կրում էր յուրահատուկ երկիշխանական բնույթ, որը իրավաբանորեն և փաստացի բաժանված էր պրինցեպսի և հանրապետական հաստատությունների (Սենատի և ժողովրդական ժողովների) միջև: Սակայն պետական իշխանության հիմնական լիազորությունները կենտրոնացված էին պրինցեպսի ձեռքում: Պրինցեպսի իշխանության իրավական հիմքն էին կազմում բարձրագույն ռազմական իշխանությունը (imperium),

տրիբունական իշխանությունը (*tribunicia potestas*) և բարձրագույն հեղինակությունը (*auctoritas*):

Հանրապետական իշխանության մարմիններից՝ **Սենատը**, շարունակում էր համարվել պետության բարձրագույն մարմինը: Նա դեռևս պահպանում էր իր օրենսդրական և դատական իշխանությունը: Սենատի անդամների թիվն ավելացավ մինչև 600-ի: Սենատորները նշանակվում էին միապետի կողմից:

Ժողովրդական ժողովների բոլոր տեսակները մ.թ. 1-ին դարում դադարեցին գործել: Ցենսուրիական կոմիցիաները վերջին անգամ հրավիրվեցին 96 թվականին: Նրանց լիազորություններն անցան Սենատին:

Հանրապետության շրջանի մագիստրատներից շատերը պահպանվել էին ձևականորեն: Այսպես, կոնսուլների իշխանությունը զգալիորեն սահմանափակվեց և նրանց թիվը հասնում էր մինչև 25-ի (189 թ.), ժողովրդական տրիբունները զրկվեցին բողոքարկման և *veto*-ի իրավունքից, միայն պրետորները պահպանեցին իրենց լիազորությունները դատական իրավագործության և պրովինցիաների կառավարման ոլորտներում:

Հանրապետական կառավարման ինստիտուտների փոխարեն ձևավորվում է միապետական կառավարման համակարգը: Արդեն Ավգուստինի օրոք գործում էր **Խորհուրդը** (*consilium*), որը բաղկացած էր սենատորներից: 2-րդ դարում Խորհրդի որոշումը Սենատի անունից ստանում էր օրենքի ուժ: Բացի դրանից միապետին կից գործում էին արտակարգ հանձնաժողովներ, որոնց կազմում սենատորներից բացի, կային նաև այլ պաշտոնատար անձինք, որոնք նշանակվում էին պրինցեպսի կողմից:

Ոստիկանական գործառույթն իրականացնում էր քաղաքի պրեֆեկտը (26 թվականից սկսած), պարենի գործերով՝ հատուկ պրեֆեկտը (8 թվականից սկսած), քաղաքի պաշտպանության գծով՝ պահպանման պրեֆեկտը (6 թվականից սկսած): Դրանցից յուրաքանչյուրին կից գործում էին գործադիր հանձնաժողովներ: Նոր վարչակազմի ձևավորումը հիմնված էր անձնական պատասխանատվության խիստ կենտրոնացված ենթակայության վրա:

Դիոկղետիանոսի կառավարման օրոք (284-305 թթ.) սկսվում է Հռոմեական պետականության զարգացման նոր՝ բացարձակ իշխանության դարաշրջանը: Դիոկղետիանոսի հաստատած պետական-քաղաքական համակարգը պատմագրության մեջ ընդունված է անվանել **դոմինատ**, քանի որ կայսրը *dominus* (տեր) է իր

բոլոր հպատակներին՝ անկախ նրանց աստիճանից և դասային պատկանելիությունից⁴⁷:

Դոմինատի ժամանակաշրջանում (III-IV դարեր) վերջնականապես ձևավորվեց ռազմաբյուրոկրատական անսահմանափակ միապետություն, որի հետևանքով պետական կառավարման համակարգից ամբողջությամբ վերացան բոլոր ընտրովի պաշտոնները⁴⁸: Նախկին Սենատը չէր գործում և միայն պահպանվել էին սենատորների պատվավոր անունները:

Միապետն իր ձեռքում էր կենտրոնացրել պետական ողջ իշխանությունը՝ երկրի գերագույն կառավարիչն էր, գերագույն դատավորը և բանակի գերագույն հրամանատարը:

Պետական կառավարման բոլոր ճյուղերը կենտրոնացված էին համապետական և տեղական վարչակազմի ձեռքում, որոնց նշանակում և ազատում էր միահեծան միապետը:

Միապետին կից ստեղծվեց **Պետական խորհուրդ**, որը նաև դատական բարձրագույն մարմին էր: Մեծ լիազորություններով էր օժտված նաև կայսերական գրասենյակի պետը:

Բարձրաստիճան պաշտոնները կոչվում էին կոմիտեներ (*comites*): Կայսերական բարձրագույն աստիճանավորներից յուրաքանչյուրն ուներ իր դիվանատունը:

Տարածքային-վարչական միավորները ղեկավարում էին պրետորիայի պրեֆեկտները, որոնք 293 թվականից՝ չորսն էին: Նրանք օժտված էին զինվորական և դատական իշխանությամբ, իսկ քաղաքացիական գործերը վարում էին նրանց կից հաստատված՝ տարածքային կառավարիչները:

3-րդ դարի սկզբներին՝ քրիստոնեության տարածման շնորհիվ, ձևավորվեց եկեղեցական կառավարման համակարգը՝ եպիսկոպոսի գլխավորությամբ:

3.5. Քրեական իրավունքի և քրեական դատավարության հիմունքները

Հին Հռոմի հանրային իրավունքի ինստիտուտներից է նաև քրեական իրավունքը

⁴⁷ Տե՛ս Истoрия Древнего Рима. Учебник. Под ред. В. И. Кузищина. М., 2000, с. 324-325.

⁴⁸ Տե՛ս **Омельченко О. А.** Всеобщая история государства и права. Учебник. Том I, М, 1999, с. 159.

և քրեական դատավարությունը⁴⁹:

Հռոմեական իրավունքի զարգացման վաղ շրջանում յուրաքանչյուր իրավախախտում, որը վնաս էր պատճառում անձին կամ նրա գույքին կոչվում էր «դելիկտ» («delictum»): Դելիկտները բաժանվում էին երկու տեսակի հանրային դելիկտներ (delicta publica) և մասնավոր դելիկտներ (delicta privata): Առաջինի դեպքում՝ իրավախախտման հետևանքով վնաս է պատճառվում հանրային շահերին, իսկ երկրորդի դեպքում՝ մասնավոր անձանց շահերին: Հանրապետության և, հատկապես, միապետության ժամանակաշրջանում ընդարձակվում են այն հակաիրավական արարքների շրջանակները, որոնք դասվում էին արդեն հանրային իրավախախտումների թվին, այսինքն՝ համարվում էին հանցագործություններ: Այդ ժամանակաշրջանում ավելի են կոնկրետանում առանձին հանցագործությունների տեսակները և հանցագործությունն արտահայտվում է «crimina» տերմինով: Ընդհանրապես հանցագործությունները տարբերվում էին ըստ հանրային իրավունքի՝ ավանդական (crimina ordinaria) և ոչ ավանդական (crimina extraordinaria): Այս տարբերության հատկանիշը առարկայական-բովանդակային չէր, այլ՝ ձևական-պատմական: Առաջինը՝ ավանդական հանցագործությունները, նախատեսված էին հին իրավունքով jus vetus) և, առաջին հերթին, այդ արարքները նախատեսող անվանական օրենքներով: Երկրորդը՝ արտակարգ կոչվող արարքները, նախատեսված էին կայսերական որոշումներով, որոնք հնարավորություն էին տալիս դատարանին ինքնուրույն որոշելու արարքի հանրորեն վտանգավոր աստիճանը և դրան համապատասխան պատժատեսակը:

Չնայած հռոմեական իրավական դոկտրինան, ի տարբերություն քաղաքացիական իրավունքի, քրեական իրավունքի հարցերը հիմնարար մշակման չի ենթարկել, այնուամենայնիվ, հռոմեական քրեական իրավունքն իր ժամանակաշրջանի համեմատ, բավական զարգացած է եղել:

Այսպես, արարքի հանցավոր բնույթը և նրա վտանգավորության աստիճանը որոշելու համար պետք է պարզաբանվեին մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ շարժառիթը (causa), անձը (persona), տեղը (loco), ժամանակը

⁴⁹ St' u **Mommsen T.** Romisches Strafrecht 1899; **Скрипилев Е. А.** Основы римского права. Конспект лекций. М., 1989, с. 83-90; **Омельченко О. А.** Римское право. Учебник. М., 2000, с. 67-87; Он же, Всеобщая история государства и права. Учебник. Том 1. М., 1999, с. 204-213 և այլն:

(tempore), հատկանիշները (qualitate), արարքի ծավալը (quantitate), հետևանքը (eventu) և այլն: Հանցագործության սուբյեկտ կարող էր լինել ինչպես մեղսունակ և որոշակի տարիքի հասած անձը, այնպես էլ՝ սատանան, կենդանիները, սակայն վերջիններիս պատժի հարցերը այլ կերպ էին լուծվում: Հանցագործի անձը բնութագրելու համար պետք էր պարզել հետևյալ հարցերը՝ նա կարող էր կատարել տվյալ հանցավոր արարքը, նախկինում կատարել է հանցագործություն, անձը գիտակցաբար է կատարել տվյալ արարքը և այլն:

Հռոմեական իրավունքը հանցագործությունը դիտում է միայն որպես անհատական արարք, այսինքն՝ չէր ընդունում հանցավոր խումբ կամ կազմավորում հասկացությունները: Սակայն մի խումբ մարդկանց կողմից կատարված հանցագործության դեպքում, հաշվի էին առնում յուրաքանչյուրի կոնկրետ արարքը և որոշում դրան համապատասխան պատիժը:

Այնուհետև, հանցագործություն կարող էր կատարվել միայն ակտիվ գործողության միջոցով, հռոմեական իրավունքը չէր ընդունում անգործությամբ կատարած արարքը՝ որպես հանցագործություն: Մի շարք հանցագործությունների համար սուբյեկտը պետք է օժտված լիներ հատուկ հատկանիշներով, օրինակ՝ պաշտոնական հանցագործության սուբյեկտ կարող էր լինել միայն Հռոմի լիիրավ քաղաքացին, որն զբաղեցնում էր այս կամ այն ընտրովի (հետագայում՝ նշանակովի) պաշտոնը, կանայք և երեխաները չէին կարող մեղադրվել «սահմանադրության ոտնահարման մեջ» և այլն:

Հռոմեական քրեական իրավունքը տարբերում էր մեղավորության հետևյալ տեսակները, կանխամտածված, հանկարծակի ծագած դիտավորություն և անզգույշ, ըստ այդմ էլ որոշվում էր պատժի տեսակն ու չափը:

Հռոմեական քրեական իրավունքին հայտնի էին հանցագործությունների հետևյալ տեսակները.

- 1) հանցագործություն ուղղված հանրության դեմ,
- 2) կրոնի և պաշտամունքի, հետագայում՝ քրիստոնեության դեմ ուղղված հանցագործություններ,
- 3) սպանություն,
- 4) իշխանության չարաշահում,
- 5) պաշտոնական փաստաթղթերի կեղծում,

- 6) սեռական հանցագործություններ,
- 7) շորթում,
- 8) սեփականության դեմ ուղղված հանցագործություններ,
- 9) անձի անձեռնմխելիությունը ոտնահարող հանցագործություններ,
- 10) ուրիշի գույքի կանխամտածված փչացում,
- 11) նախընտրական կաշառք,
- 12) տնտեսական կարգի դեմ ուղղված հանցագործություններ⁵⁰:

Ինչ վերաբերում է պատժին, ապա այն լինում էր երկու կատեգորիայի՝ ծանր և ոչ ծանր: Ծանր պատժատեսակներն էին՝ մահապատիժն իր տեսակներով (գլխատում, կախաղան, կրակի վրա այրելը և այլն), հարկադիր աշխատանքները հանքերում, քաղաքացիությունից զրկելը, բանտարկումը, արտաքսումը, աքսորը:

Նվազ կամ ոչ ծանր պատժատեսակներն էին՝ դրամական տուգանքը, վնասի հատուցումը, թեթև մարմնական պատիժները և այլն:

Տուգանքները, որպես կանոն, նշանակվում էին մագիստրատների կողմից ոչ միայն հանցավոր արարքի, այլև կարգադրությունը չկատարելու համար: Միապետության ժամանակաշրջանում հաճախ էր կիրառվում նաև գույքի կամ ունեցվածքի բռնագրավումը՝ հոգուտ պետական գանձարանի:

Քրեական հետապնդումը սկսվում էր մասնավոր անձի բողոքի հիման վրա: Տուժողը կամ նրա կողմից հանդես եկողը պետք է բողոքը հատուկ ձևակերպեր և մատնացույց աներ այն անձին, որը կատարել է հանցավոր արարքը: Բողոքը ներկայացվում էր դատարան (սկզբնական շրջանում քրեական գործերով հանձնաժողով՝ *quaestio*, հետագայում, միապետության շրջանում ձևավորվեցին հատուկ դատարաններ, որոնք քննում էին քրեական գործերը): Դատական գործը նախապատրաստելու համար պրետորը հանձնարարում էր իր օգնականներին, որպեսզի վերջիններս տուժողի հետ միասին կազմեին, այսպես կոչված, մեղադրական ակտը: Այդ փաստաթղթում պետք է նշվեր՝ գործը քննող պրետորի անունը, մեղադրողի (տուժողի) անունը, մեղադրվողի անունը, կատարած արարքի համառոտ բովանդակությունը, տվյալ արարքի համար նախատեսված օրենքը, հանցանքի կատարման տեղը, տարին և ամիսը:

Մեղադրական ակտի բովանդակության կազմումից հետո սկսվում էր

⁵⁰ Մանրամասն տե՛ս **Омельченко О. А.** Римское право. Учебник. М., 2000, с. 74-78:

երդվյալների դատարանի նշանակումը: Որպես կանոն, երդվյալների թիվը տատանվում էր 35-ից մինչև 75 հոգի (ընդհանուր առմամբ ընդունված էր 51 երդվյալների մասնակցությունը): Դրանից հետո վիճակահանությամբ որոշվում էին դատավոր-մասնագետները: Դատավարությունը կայանում էր հատուկ հատկացված տեղում, և կրում էր հրապարակային բնույթ: Դատավարությունը սկսվում էր մեղադրական ճառով, այնուհետև՝ պատասխան խոսքով հանդես էր գալիս մեղադրվողը: Երկուսի ճառերի համար էլ ժամանակի սահմանափակում չկար: Վկաների հարցաքննությունը տանում էին կողմերը: Կողմերի վիճաբանությունից հետո խոսքը տրվում էր երդվյալներին: Վերջինները կարող էին հայտնել իրենց որոշումը հետևյալ երեք ձևով՝ «արդարացի է» (absolvo), «մեղավոր է» (condemno), «ճշմարտությունը բացահայտված չէ» (non liquet): Երդվյալների որոշումն ընդունվում էր ձայների պարզ մեծամասնությամբ, ձայների հավասարության դեպքում՝ մեղադրյալն արդարացվում էր:

Դատական ապացույցների հիմնական տեսակներն էին՝ վկաների ցուցմունքը (որպես վկա կարող էրն հանդես գալ լիիրավ քաղաքացիները, թույլատրվում էր նաև՝ կանանց, երեխաներին, օտարերկրացիներին, իսկ բացառիկ դեպքերում՝ նաև ստրուկին), իրեղեն և գրավոր ապացույցները:

Գրավոր ապացույցները հաշվի էին առնվում, եթե դրանք պաշտոնական փաստաթղթեր էին: Ապացուցման այլ տեսակներ հռոմեական քրեական դատավարությունում չէին ընդունվում:

Միապետության դարաշրջանում դատարանի որոշումները կարող էին գանգատարկվել միապետին:

Գլուխ 4

Հռոմեական մասնավոր իրավունքի հիմնական ինստիտուտները

4.1. Քաղաքացիական դատավարության բնորոշ գծերը

Աշխարհի մյուս ժողովուրդների նման հռոմեացիները նույնպես մինչև պետական դատարանի կազմակերպելը մասնավոր ձևով էին լուծում իրավախախտողների պատասխանատվության հարցը (արյան վրեժի ինստիտուտը, թայլիոնի սկզբունքը և այլն): Մասնավոր ինքնադատաստանից անցումը պետական դատարանի, տեղի է ունենում աստիճանաբար: Այն իր ազդեցությունը թողեց

հռոմեական իրավունքի ձևավորման վրա: Այսպես, հռոմեական իրավունքին հայտնի էր ինքնապաշտպանությունը, ըստ որի թույլատրվում էր «բռնությանը հակադրել ուժը» (*Vim vi repellere licet*): Այդ սկզբունքը հետագայում քրեական իրավունքում ձևավորվեց որպես անհրաժեշտ պաշտպանություն: Հռոմեական իրավունքը ինքնապաշտպանությունից տարբերում էր ինքնադատաստանը: Մարկ Ավրելիոսի դեկրետով արգելվեց պարտատիրոջ կողմից պարտապանի գույքի ինքնագլուխ բռնագրավումը, հակառակ դեպքում պարտատերը կորցնում էր իր իրավունքը տվյալ գույքի նկատմամբ: Իրավունքի բաժանումը հանրային և մասնավոր իրավունքի, իր հետ բերեց նաև դատարանի բաժանումը, *judicia publica* (հանրային դատարան) և *judicia privata* (մասնավոր դատարան)⁵¹: Հանրային դատարանին ընդդատյա էին պետական շահերին վերաբերող գործերը, իսկ մասնավոր դատարանին՝ մասնավոր անձանց վերաբերող գործերը:

Պատմականորեն ձևավորվել էին հռոմեական քաղաքացիական դատավարության հետևյալ երեք ձևերը.

ա. լեգիսակցիոն (*legis actiones* - օրինական հայցեր),

բ. ֆորմուլար (*per formulas* - ըստ ֆորմուլայի),

գ. արտակարգ (*extra ordinem*):

Վերը նշված առաջին երկու դատավարության ձևերը ձևավորվել են հանրապետության, իսկ երկրորդ ձևը՝ միապետության ժամանակաշրջանում:

Լեգիսակցիոն դատավարությունը բաժանվում էր երկու փուլերի.

ա. մագիստրատի առաջ (*in jure*) և

բ. դատարանի առաջ (*apud iudicem*)⁵²: Մագիստրատի դատական ֆունկցիան *in jure* ժամանակ հանգում էր հետևյալին, իրավաբանական ճիշտ ձևակերպում տալ դատական վեճին: Սա մի տեսակ գործի նախապատրաստական փուլն էր, որից հետո (եթե կողմերը համաձայնության չէին գալիս) դատարանը վերջնականապես լուծում էր գործը:

Գայուսի ինստիտուցիաներում *lege agere*, *legis actiones* արտահայտությունը բացատրվում է երկակի իմաստով, «այդպիսի արտահայտություն ծագում է նրանից,

⁵¹ **Տե՛ս** **Омельченко О. А.** Римское право. Учебник. М., 2000, с. 89.

⁵² Римское частное право. Учебник (Под ред. проф. И. Б. Новицкого и проф. И. С. Петерского, - М., «Юрист», 1996, с. 54; **Բաբայան Լև**, Հռոմեական մասնավոր իրավունք, էջ 37:

որ դատավարության այդ ձևը ստեղծվել է օրենքի միջոցով կամ էլ նրանից, որ կողմերի պահանջները լեգիսակցիոն դատավարությունում պետք է արտահայտված լինեին համապատասխան օրենքի բառերով»:

Պոնտիֆիքսները հայցային ֆորմուլաներ էին կազմել զանազան դեպքերի համար և միայն այդ ֆորմուլաներից կարող էին օգտվել դատավարության ժամանակ կողմերը: Մագիստրատի առջև կատարվող ձևերն ու եղանակները խստորեն որոշված էին: Այդ ձևերից մեկը գրավ տալու միջոցով դատավարությունն էր (*legis actio sacramento*), որը մրցակցական դատավարություն էր: Դատվող կողմերը գալիս էին մագիստրատի մոտ, որոշում գրավականը և յուրաքանչյուրը՝ սովորությամբ հաստատված ֆորմուլայի խոսքերով հայտարարում էր, որ ինքը արդարացի է. այդ խոսքերն ուղեկցվում էին որոշակի գործողություններով: Մագիստրատը գործը չէր քննում և վճիռ չէր կայացնում: Նա արտասանում էր սահմանված բառերը և կողմերի հետ միասին մասնավոր անձերից դատավոր կամ դատավորներ էր նշանակում, որոնք վճիռ են կայացնում, թե ով տանուլ տվեց գրավականը, որով և հաստատվում էր այս կամ այն կողմի իրավունքը:

Մ.թ.ա. մոտավորապես 150 թ. դատավարության մեջ որոշակի փոփոխություններ կատարվեցին: Ձևավորվեց այսպես կոչված ֆորմուլար դատավարությունը: Այդ դատավարությունը նույնպես բաղկացած էր երկու փուլերից *in jure* և *in judicio*: Սակայն, եթե *legis actiones* դատավարության ժամանակ մագիստրատի դերը պասիվ էր, ապա ֆորմուլար դատավարության ընթացքում մագիստրատը ակտիվ դեր է խաղում: Նա ծանոթանում էր գործին և կազմում **ֆորմուլա**, այսինքն՝ մի փաստաթուղթ, որտեղ համառոտ շարադրվում էին հայցվորի պահանջները և պատասխանողի առարկությունները: Այնուհետև մագիստրատը ֆորմուլայում ցուցում էր տալիս դատավորին, թե նա ինչպիսի վճիռ պետք է կայացնի: Երդվյալ դատավորը (կամ դատավորները) քննում էր գործն ըստ էության և կայացնում այնպիսի որոշում, որպիսին նախատեսված էր ֆորմուլայում:

Ֆորմուլան (բանաձևը), որպես կանոն, բաղկացած էր հետևյալ երկու հիմնական մասերից՝ ինտենցիա և կոնդեմնացիա ու երկրորդական մասերից էքսցիպցիա և պրեսկրիպցիա: Ֆորմուլան սկսվում էր դատավորի (դատավորների) նշանակումից (*Octavius judex esto* - «թող Օկտավիոսը լինի դատավոր»): Այնուհետև ներկայացվում էր բանաձևի հիմնական մասը՝ ինտենցիան, որտեղ որոշվում էր հայցի

բովանդակությունը: Բանաձևի մյուս հիմնական մասում՝ կոնդեմնացիայում, առաջարկվում էր կա՛մ բավարարել հայցը, եթե ինտենցիան հաստատվում էր, կա՛մ, հակառակ դեպքում, մերժել հայցը:

Էքսցիպցիա բառացիորեն նշանակում է բացառություն: Եթե էքսցիպցիան մտնում էր ֆորմուլայի մեջ և դատավորը որոշում էր ինտենցիայի ճշմարտությունը, ապա պետք է բավարարել հայցը «բացառությամբ այն դեպքի, որ ...»: Այսպիսով, էքսցեպցիայի ձևով պատասխանողը առաջ էր քաշում իր առարկությունները հայցի դիմաց:

Եվ, վերջապես, պրեսկրիպցիա (բառացիորեն՝ գրություն) կոչվում էր ֆորմուլայի այն մասը, որը հաջորդում էր դատավորին (դատավորներին) նշանակելուց հետո: Հաճախ այդպիսի գրություն կատարվում էր նրա համար, որպեսզի նշվի, որ տվյալ դեպքում հայցվորը պահանջում է իրեն հասանելից գումարի մի մասը և, պրեսկրիպցիայի մտցնելը ֆորմուլայի մեջ հայցվորին հնարավորություն էր տալիս հետագայում պատասխանողից գանձել գումարի մնացած մասը:

Ինչպես լեգիսակցիոն, այնպես էլ ֆորմուլար դատավարության որոշումները գանգատարկման ենթակա չէին: Սակայն պրինցեպսը իրավունք ուներ դատարանից պահանջել ցանկացած գործ և դրանով իրականացնել վերահսկողություն արդարադատության վրա:

3-րդ դարից սկսած, այսինքն՝ բացարձակ միապետության շրջանում, դատավարությունը կրում էր արտակարգ (*extra ordinem*) բնույթ և չէր բաժանվում վերոնշված փուլերի: Միապետական իշխանությունը այլևս չէր վստահում ընտրովի դատավորներին: Արտակարգ դատավարությունում դատարանի ֆունկցիան իրականացնում էին վարչական մարմինները (Հռոմում և Կոնստանտինոպոլսում՝ քաղաքի ոստիկանապետը «*praefectus urbi*», իսկ պրովինցիաներում՝ նահանգապետերը կամ մունիցիպալ մագիստրատները): Միապետը նույնպես հաճախ էր անձամբ քննում դատական վեճերը: Դատավարությունը այլևս հրապարակային բնույթ չէր կրում, այն ընթանում էր մեկ փուլով՝ կողմերի և հատուկ պաշտոնատար անձանց ներկայությամբ: Ի տարբերություն դասական շրջանի դատավարության, արտակարգ դատավարության որոշումները ենթակա էին գանգատարկման վերադաս դատական աստիճանին կամ միապետին:

Դատական մագիստրատները (հիմնականում պրետորները), օժտված լինելով

բարձրագույն քաղաքացիական իշխանությամբ (*imperium*), իրավունք ունեին այս կամ այն հարաբերությունը (գույքային կամ անձնական) վերցնել դատական պաշտպանության, եթե նույնիսկ այն նախատեսված չէր քվիտորական իրավունքով, կամ հակառակը՝ մերժել հարաբերության դատական պաշտպանությունը, եթե նույնիսկ այն նախատեսված էր քվիտորական իրավունքով: Այդ պատճառով էլ, գործնականում առաջնային նշանակություն էր ստանում այն հարցը, թե տվյալ դեպքում պրետորը ներկայացնո՞ւմ էր հայց (*actio*), թե՛ ոչ: Այդ հարցի պատասխանը տալիս էր պրետորական էդիկտը:

Դասական հռոմեական իրավունքում հայցը (*actio*) դատական մագիստրատի էդիկտով նախատեսված միջոց էր, որը հետամուտ պետք է լիներ դատական պրոցեսում տվյալ անձի շահերին համապատասխան որոշում կայացնելուն:

Բազմաթիվ և բազմատեսակ հայցերից պետք է տարբերել հետևյալ տեսակները, **գույքային հայց** (*actiones in rem*) և **անձնական հայց** (*actiones in personam*)⁵³:

Գույքային հայցը նեղ իմաստով հռոմեական իրավաբանները համարում էին սեփականության վերաբերյալ հայցերը (*rei vindicatio*), իսկ լայն իմաստով՝ դրանք պարտավորություններից ծագող հայցերն էին:

Անձնական հայցերը (*actio in personam*) տրվում էին անձնական բնույթի իրավահարաբերության պաշտպանության համար, որը ծագում էր երկու կամ ավելի անձանց միջև: Տարբերվում էին նաև բացառապես իրավունքի հայցեր (*actio stricti juris*) և, հայցեր, որոնք կազմված են բարեխղճության սկզբունքի վրա (*actio bonae fidei*): Մրանց տարբերությունը կայանում է հետևյալում, առաջինի դեպքում դատավորը կախված է բացառապես պայմանագրից, որից բխում է հայցը, իսկ երկրորդի դեպքում՝ դատավորը ազատ է և իրավունք ունի ուշադրություն դարձնելու պատասխանողի առարկություններին, որոնք հիմնված են արդարության պահանջների վրա:

Գոյություն ունեին, այսպես կոչված, համանմանության (անալոգիայի) հայցեր (*actio utiis*): Այսպես, ըստ Աբվիլիոսի օրենքի (3-րդ դ. մ.թ.ա.) գույքի վնաս պատճառողը պատասխանատու էր միայն այն դեպքում, եթե վնասը պատճառել է *corpore corpor*, այսինքն՝ իրի վրա ֆիզիկական ազդեցությամբ: Համանմանության հայցի (*actio utilis*) օգնությամբ պրետորը տարածում էր հայցային պաշտպանությունը

⁵³ Ст' у Хутыз М. X. Римское частное право. Отв. ред. проф. С. А. Чибиряев. М., 2000, с. 27, նաև **Բարբայան Լև**, Հռոմեական մասնավոր իրավունք, էջ 42-43:

նան այն դեպքում, երբ վնասը պատճառվել է մեղավորությամբ, սակայն առանց իրի նկատմամբ ֆիզիկական ազդեցության (օրինակ, անձը մեղավորությամբ ուրիշի անասունին սովամահ է անում):

Տարբերվում էին նաև տուգանային և խախտված գույքային իրավունքների վերականգնման հայցեր: Հաճախ նույն փաստից ծագում էր ն՛ տուգանային հայցը, և՛ իրավունքների վերականգնման հայցը (օրինակ, գողացված իրի տերը կարող էր հայց ներկայացնել գողացված իրի վերադարձման մասին և տուգանքի մասին):

Հայցերը կարող էին լինել նաև միակողմանի և երկկողմանի: Միակողմանի հայցի ժամանակ հայցվորի և պատասխանողի դերերը հակադիր էին, այսինքն, կողմերից մեկը պահանջատեր հայցվորն էր, իսկ մյուսը՝ պատասխանողը: Երկկողմանի հայցի ժամանակ կողմերը միաժամանակ և՛ հայցվոր էին, և՛ պատասխանող: Միակողմանի հայցը կոչվում էր *actiones simplices*, իսկ երկկողմանի հայցը՝ *actiones duplices*:

Հատուկ կատեգորիա էին կազմում այսպես կոչված կոնդիկցիոն (*condiction*) հայցերը: Սրանք հայցեր էին, որոնք հիմնված էին քվիտորական իրավունքի վրա, սակայն նշված չէր կոնկրետ ինչ հիմքի վրա են ծագել (վերացական հայցեր):

Բացի հայցեր ներկայացնելուց, պրետորները՝ օգտվելով իրենց *imperium* իշխանությունից, պաշտպանություն էին իրականացնում նաև հատուկ միջոցներով՝ կարգադրություններով: Պրետորական պաշտպանության հիմնական միջոցներն էին *interdict*-ը (արգելում) և *restitutio in integrum*՝ նախնական վիճակի (դրության) վերականգնում: Ինտերդիկտներ անվանվում էին պրետորի այն կարգադրությունները, որոնք ուղղված էին որևէ գործողության դադարեցմանը, որով խախտվել էր հասարակական կարգը կամ քաղաքացիների շահերը:

Պրետորն իրավունք ուներ նաև հատուկ կարգադրությամբ (իհարկե, բավարար հիմքերի դեպքում, օրինակ, անչափահասի կողմից կնքված պայմանագիրը և այլն) չեղյալ համարել արդեն իսկ կնքված պայմանագիրը և վերականգնել նախկին դրությունը:

Հայցային վաղեմությունը բնորոշվում է որպես անձի խախտված իրավունքների պաշտպանության ժամկետ: Օրենքով սահմանված վաղեմության ժամկետի անցումը դադարեցնում է անձի խախտված իրավունքի պաշտպանության իրավունքը: Այդպես է ժամանակակից քաղաքացիական իրավունքում: Դասական հռոմեական

իրավունքին հայտնի էր, այսպես կոչված, հայցերի ներկայացման օրինական ժամկետների ինստիտուտը, որն, ըստ էության, նման էր հայցային վաղեմությանը: Հայցային վաղեմության ինստիտուտը հռոմեական իրավունքում ծագել է մ.թ. 5-րդ դ.: Հայցային վաղեմության ժամկետ սահմանվեց 30 տարին (բացառիկ դեպքերում կայսերական օրենքները սահմանեցին մինչև 40 տարի): Վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում էր հայցի իրավունքի ծագման պահից, այսինքն այն օրվանից, երբ անձի իրավունքները (գույքային կամ անձնական) խախտվել են (օրինակ, սեփականատիրոջ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում էր այն պահից, երբ նրա գույքը անօրինական ճանապարհով հայտնվել էր մեկ ուրիշի մոտ և այլն):

Հայցային վաղեմության ժամկետը կարող էր կասեցվել, եթե հայց ներկայացնելու համար գոյություն ուներ որոշակի խոչընդոտ, որը օրենքը համարում էր հարգելի (օրինակ, պետական ծառայության պատճառով բացակայելը և այլն):

4.2. Անձի իրավական դրության հիմունքները

Քաղաքացիական իրավունքում իրավունակությունը քաղաքացիների իրավունքներ և պարտականություններ ունենալու ունակությունն է: Հին Հռոմում իրավունակությանը համապատասխանում է *caput* տերմինը⁵⁴: Հռոմեական իրավունքը որպես անձ (*persona*), այսինքն՝ իրավունքի սուբյեկտ, ճանաչում էր ոչ բոլոր մարդկանց: Իրավունքի սուբյեկտի իրավունակության ծավալը Հին Հռոմում պայմանավորված էր ստրկատիրական հասարակարգի կառուցվածքով և սոցիալ-տնտեսական հարաբերություններով: Հին Հռոմում որպեսզի անձը օժտված լիներ լրիվ իրավունակությամբ, պետք է բավարարեր հետևյալ երեք պահանջները.

- ա) ազատության առումով՝ լինել ազատ և ոչ թե ստրուկ,
- բ) քաղաքացիության առումով՝ լինել Հռոմի քաղաքացի և ոչ թե օ-տարերկրացի,
- գ) ամուսնա-ընտանեկան առումով՝ լինել ընտանիքի գլուխը, այսինքն՝ օժտված լինել հայրիշխանությամբ (*partia potestas*):

Այսպիսով, լրիվ իրավունակությունը Հին Հռոմում կազմված էր հետևյալ երեք բաղկացուցիչ մասերից.

⁵⁴ Տե՛ս **Косарев А. И.** Римское частное право. Учебник. М., 1998, с. 101; **Բարսյան Լև**, Հռոմեական մասնավոր իրավունք, էջ 50:

- 1) status libertatis - ազատության դրություն,
- 2) status civitatis - քաղաքացիության դրություն,
- 3) status familiae - ընտանեկան դրություն:

Վերը նշված յուրաքանչյուր դրության փոփոխություն կոչվում էր capitis deminutio: Status libertatis-ի փոփոխումը կոչվում էր capitis deminutio maxima (ամենամեծ փոփոխություն), status civitatis-ի փոփոխությունը՝ capitis deminutio media (միջին փոփոխություն) և status familiae-ի փոփոխությունը՝ capitis deminutio minima (ամենափոքր փոփոխություն):

Մասնավոր-իրավական հարաբերություններում մարդու լրիվ իրավունակությունը բաղկացած էր երկու տարրից՝

ա) jus conubii - ընտանիք կազմելու իրավունք,

բ) jus commercii - գույքային հարաբերություններում հանդես գալ որպես ինքնուրույն սուբյեկտ:

Իրավունակությունը ծագում էր ծննդյան պահից և դադարեցվում մահվամբ: Սակայն հռոմեական իրավաբանները սահմանել էին կանոն, որի համաձայն երեխան սաղմնային վիճակում (դեռ չծնված) համարվում էր իրավունքի սուբյեկտ բոլոր դեպքերում, երբ այն համապատասխանում էր երեխայի շահերին: «Qui in utero est, perinde ai si in rebus humanis esset custoditur, quotiens de commodis ipsius partus quaeritur» («Երեխան սաղմնային վիճակում պաշտպանվում է արդեն իսկ գոյություն ունեցողների հետ հավասարապես բոլոր դեպքերում, երբ հարցը վերաբերում է սաղմնային երեխայի օգուտների մասին»):

Հռոմի քաղաքացիությունն ձեռք էր բերվում հետևյալ երեք հիմնական ճանապարհով.

ա) ծննդով, այսինքն՝ Հռոմի քաղաքացիների օրինական ամուսնությունից ծնված երեխաները,

բ) ստրուկներին ազատություն պարգևելով,

գ) օտարերկրացուն հռոմեական քաղաքացիություն շնորհելով:

Քաղաքացիությունը դադարեցվում էր.

1. մահվամբ,

2. ազատության դրության փոփոխումով (capitis deminutio maximus),

3. քաղաքացիությունից զրկվելով:

3-րդ դարում բոլորը հռչակվեցին հավասար իրենց իրավունակությամբ, սակայն այդ հավասարությունը ձևական բնույթ էր կրում, քանի որ հասարակությունը փաստորեն բաժանված էր դասերի (սենատորներ, հեծյալներ, զինվորականություն, քաղաքային դասի ներկայացուցիչներ, առևտրականներ, արհեստավորներ, գյուղացիներ), որոնք թե՛ քաղաքական, և թե՛ սոցիալ-տնտեսական տեսակետից գտնվում էին տարբեր հարթությունների վրա և, հետևաբար, օժտված էին տարբեր իրավունակությամբ:

Ժամանակակից իրավունքը տարբերում է իրավունակություն և գործունակություն հասկացությունները: Եթե իրավունակությունը, ինչպես նշեցինք, քաղաքացիների իրավունքներ և պարտավորություններ ունենալու ունակությունն է, ապա գործունակությունը սեփական գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և որոշակի քաղաքացիական պարտականություններ կրելու ունակությունն է: Ճիշտ է, հռոմեական իրավունքը չգիտեր այդպիսի հստակ բաժանում և ձևակերպում, այնուհանդերձ Հին Հռոմում էլ ոչ բոլոր քաղաքացիներն էին օժտված կատարելու այնպիսի գործողություններ, որոնք իրավական հետևանքներ կարող էին առաջացնել: Անձի գործունակությունը միշտ և ամենուր կախված է նրա տարիքից: Հռոմեական իրավունքը տարբերում էր հետևյալ տարիքային առանձնահատկությունները.

ա) *infantis*՝ մինչև 7 տարեկան երեխաները, որոնք ամբողջովին անգործունակ էին,

բ) 7-ից մինչև 14 տարեկան տղաները և 7-ից մինչև 12 տարեկան աղջիկները (*impueras*), որոնք օժտված էին սահմանափակ գործունեությամբ (խնամակալի թույլտվությամբ որոշակի գործարքներ կատարելու),

գ) 14-ից մինչև 25 տարեկան տղաները և 12-ից մինչև 25 տարեկան աղջիկները, որոնք գործունակ էին ամուսնանալու և ինքնուրույն որոշակի գործարքներ կատարելու:

Հին Հռոմում լրիվ գործունակությունը վրա էր հասնում 25 տարեկան դարձած այն անձանց համար, ովքեր բավարարում էին իրավունակության վերոնշյալ երեք պահանջները (*status libertatis, status civitatis* և *status familiae*):

Լատիններ (*Latini*) անվանում էին սկզբում Լատիում քաղաքի բնակիչներին, այնուհետև՝ ազատ լատինական քաղաքների բնակիչներին: Հռոմի հետ կնքված

պայմանագրերով լատիններին տրված էր գույքային իրավունակություն (*jus commercii*), այնուհետև նաև ամուսնության իրավունք (*jus connebii*): Դաշնակցային պատերազմի ավարտից հետո (1-ին դ. մ.թ.ա.) Իտալիայում ապրող բոլոր լատինները հռոմեական քաղաքացիություն ստացան:

Պերեգրիններ (*peregrini*) էին անվանվում օտարերկրացիները, ինչպես նաև Հռոմի այն հպատակները, որոնք օժտված չէին ո՛չ հռոմեական և ո՛չ էլ լատինական իրավունակությամբ⁵⁵: Սկզբնական շրջանում նրանք իրավագուրկ էին, իսկ հետագայում, երբ ձևավորվեց ժողովուրդների իրավունքը (*jus gentium*)՝ պերեգրինները օժտվեցին որոշակի իրավունակությամբ: 3-րդ դարում հռոմեական պետության բոլոր հպատակները ստացան քաղաքացիություն:

Հռոմեական իրավունքի ելակետային դրույթներից մեկի համաձայն, մարդիկ ծնվում են ազատ կամ ստրուկ: Ստրուկը (*servi*) չէր համարվում մասնավոր իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, նա օժտված չէր քաղաքացիական իրավունքի իրավասուբյեկտությամբ (*servus nullum caput habet*):

Ստրուկը իրավական տեսակետից տիրոջ սեփականությունն էր համարվում: Նրան դասում էին *res mancipi*-ի շարքը, այսինքն՝ մանցիպացիայի կարգով ստրուկին կարելի էր վաճառել, նվիրել, կտակել և այլն: Ստրուկը համարվում էր խոսող գործիք (*instrumentum vocale*) և իրավունքի օբյեկտ: Միաժամանակ ստրուկը գտնվում էր հոր իշխանության (*pater families*) ներքո: Նա մտնում էր ընտանիքի կազմի մեջ՝ իբրև նրա ամենաիրավագուրկ անդամը: Սկզբնական շրջանում տանուտերը նրա նկատմամբ կյանքի և մահվան իրավունք ուներ (*jus vitae ac necis*), հետագայում այդ իրավունքը սահմանափակվեց: Կապված ստրուկների աշխատանքի տեղի հետ՝ նրանք բաժանվում էին գյուղական ստրուկների (*familia rustica*) և քաղաքային ստրուկների (*familia urbana*):

Ստրուկները կարող էին սերունդ ունենալ: Հռոմեական իրավունքը ստրուկի և ստրկուհու փաստացի կապը ամուսնություն չէր համարում, այլ կենակցություն (*contubernium*), որը ոչ մի իրավական նշանակություն չուներ: Ստրուկը հռոմեական իրավունքում անձնավորություն չճանաչվեց, սակայն ստրկությունը որպես սոցիալական երևույթ հակասում էր բնական իրավունքին (*jus naturale*): Այսպես, ըստ իրավաբան Ուլպիանուսի. *Quod attinet ad jus civile servi pre nullis habentur, non tamen et*

⁵⁵ См. у Омельченко О. А., Римское право. Учебник. М., 2000, с. 115.

jure naturale, quia quod ad jus naturale attinet omnes homines aequales sunt (Քվիտորական իրավունքի տեսակետից ստրուկները ոչինչ են: Սակայն այդպես չէ ըստ բնական իրավունքի, քանի որ բնական իրավունքի տեսակետից բոլոր մարդիկ հավասար են): Եթե ստրկությունը խորթ էր բնական իրավունքին, ապա հռոմեացի իրավաբանները այն արդարացնում էին պատերազմով, եթե թշնամու սպանությունը օրինական է, ապա առավել ևս թշնամուն ստրկացնելը և նրան սեփականության օբյեկտ դարձնելը արդարացի է:

Լինելով իրավունքի օբյեկտներ, ստրուկները, բնականաբար, չունեին գույք: Ստրուկի կողմից օգտագործվող յուրաքանչյուր իր համարվում էր ստրկատիրոջ սեփականությունը: Սակայն ստրկատիրոջ տնտեսական շահերը թելադրում էին, որ ստրուկի միջոցով հնարավոր է ընդլայնել տիրոջ իրավահարաբերությունների շրջանակը: Ստրուկին իրավունք տրվեց կատարել որոշակի գործարքներ, որոնց շնորհիվ տերը ձեռք էր բերում միայն իրավունքներ: Ստրուկի կողմից կնքված գործարքը տիրոջ համար ոչ մի պարտավորություն չէր առաջացնում, բացի իրավունքից: Այս հանգամանքը նկատի ունենալով, իրավաբան Գայուսը (2-րդ դ.) ասում էր. «Մեր դրությունը ստրուկների օգնությամբ կարող է լինել լավ, բայց ոչ երբեք վատ» (*Melior condicio nostra per servas fieri potest, deterior, fieri non potest*):

Հռոմեական իրավունքում աստիճանաբար ձևավորվում է, այսպես կոչված, պեկուլիում (*peculium*) իրավունքը: Պեկուլիում տերմինը հավանաբար առաջացել է *pecus* (անասուն) բառից⁵⁶ և նշանակում է այն գույքը, իրը, որ տերը տալիս էր ստրուկին՝ օգտագործելու և տնտեսությունը վարելու համար: Սակայն այդպիսի իրավունքի իրականացումը հնարավոր էր միայն այն դեպքում, երբ ստրուկը ազատ էր արձակվում: Մինչև հանրապետության շրջանի վերջը ստրուկը կարող էր ազատություն ստանալ միայն տիրոջ կամքով (*manumissio*): Միապետության ժամանակաշրջանում ստրուկը ազատ էր արձակվում տիրոջ պաշտոնական հայտարարությամբ՝ հինգ վկաների ներկայությամբ: Պրինցիպատի շրջանից սկսած ստրուկը ազատ էր արձակվում նաև հետևյալ դեպքերում.

ա) երբ հայտնաբերել է տիրոջ սպանողին,

բ) քսան տարի ապրում էր որպես ազատ մարդ, այսինքն՝ փաստացի ազատությունը վերածվում էր իրավական ազատության,

⁵⁶ Տե՛ս Բաբայան Լև, Հռոմեական մասնավոր իրավունք, էջ 57:

զ) հիվանդ ստրուկը,

դ) 4-րդ դարից սկսած ձևավորվեց ստրուկի ազատման եկեղեցական ձևը, երբ տերը եկեղեցում հայտարարում է ստրուկի (ստրուկների) ազատության մասին: Ստրուկների ազատ արձակումը կայսրության սոցիալական կյանքի առանձնահատկություններից մեկն էր: Մակայն կայսրության մի շարք օրենքներով փորձ էր արվում կասեցնել կամ սահմանափակել ստրուկների ազատման պրոցեսը: Այսպես, Մենտիոսի օրենքով (lex Aelia Sentia, 4-րդ դ.) նախատեսվում էին որոշակի սահմանափակումներ՝ հաշվի էր առնվում ինչպես տիրոջ տարիքը (մինչև 20 տարեկան), այնպես էլ ստրուկի (մինչև 30 տարեկան), որոնց դեպքում անհրաժեշտ էր հատուկ հանձնաժողովի կարծիքը և այլն:

Չնայած ձեռնարկված որոշ իրավական սահմանափակումներին, Հռոմի ստրկատիրական հասարակարգը աստիճանաբար քայքայվում և անկում էր ապրում:

Հողի վարձակալները կոչվում էին կոլոններ: Սկզբնական շրջանում colonus բառը նշանակում էր հողագործ: Կոլոններ էին կոչվում նաև գաղութների բնակիչները: Colonus հասկացությունը վարձակալի իմաստով հանդիպում ենք Հանրապետության շրջանում: Տարբերվում էր կոլոնների երկու կատեգորիա.

ա) տեղական բնակիչներ, որոնք մշակում էին հողը իրենց աշխատանքով և

բ) քաղաքային բնակիչներ, որոնք հողը մշակում էին ստրուկների միջոցով:

Հռոմի կոլոնային հարաբերությունների առանձնահատկությունն այն էր, որ կոլոնը, որպես կանոն, ազատ վարձակալ էր: Կոլոնի և տիրոջ փոխհարաբերության հիմքն էր կազմում վարձակալության պայմանագիրը (locatioconductio):

Ըստ Հուստինիանոսի օրենսդրության, կոլոնատի ծագման հիմքերն էին.

ա) եթե նորածնի ծնողները կամ նրանից որևէ մեկը կոլոն էր,

բ) համաձայնագրով, որի հիմամբ ազատ մարդը ուրիշի տարածքում բնակվում է որպես կոլոն,

գ) 30 տարի շարունակ ուրիշի տարածքում այնպիսի պայմաններում ապրելը, որ սովորաբար ապրում են կոլոնները:

Կոլոնատի զարգացումը Հռոմեական կայսրության քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման կարևոր առանձնահատկություններից էր:

Հռոմեական իրավունքը չի մշակել իրավաբանական անձ հասկացությունը⁵⁷: Նորագույն հետազոտությունները ցույց են տալիս, որ «իրավաբանական անձ» տերմինը լատիներեն լեզվում ընդհանրապես բացակայում էր և հռոմեական իրավունքը այն որպես այդպիսին չգիտեր: Սակայն դեռևս 12 աղյուսակների օրենքներում նշված է կրոնական միությունների (*sodalitates, collegia sodalicia*), արհեստավորների միությունների (*fabrorum, uistorum*) մասին:

Կորպորացիաները (միությունները) մասնավոր-իրավական հարաբերություններում դիտվում էին ինչպես ֆիզիկական անձ: Գայոսը ասում էր, որ «Համայնքները դիտվում են որպես մասնավոր անձ» (*civitates enim privatorum loco habentur*):

Միությունների մասին Յուլիանոսի օրենքի (*lex Julia de edlegiis*) համաձայն, կորպորացիաները (բացի կրոնական միությունից և թաղման ընկերությունից) չէին կարող առաջանալ առանց սենատի որոշման կամ կայսեր հրամանի:

Իրավաբանական անձի (այս տերմինի պայմանական իմաստով) գործունեությունը դադարեցվում էր հետևյալ դեպքերում.

ա) երբ միությունը կատարել էր իր խնդիրը,

բ) միության անդամների հեռանալով,

գ) երբ միության գործունեությունը հակասում էր գործող օրենքին:

Այդ միությունները կամ կորպորացիաները իրավունք ունեին հանդես գալ դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող:

4.3. Ընտանեկան իրավունք

Ընտանիքը (*familia*) Հին Հռոմում կրում էր խիստ նահապետական բնույթ⁵⁸: Ընտանիքի գլուխ կանգնած էր հայրը, որը կոչվում էր պատեր ֆամիլիաս (*paterfamilias*): Ընտանիքի բոլոր անդամներն անվերապահ ենթարկվում էին հայրական իշխանությանը: Հայրը հին ժամանակներում օժտված էր անսահմանափակ իշխանությամբ ընտանիքի բոլոր անդամների նկատմամբ, նույնիսկ նրանց կյանքի և մահվան, ճակատագիրը լուծելու իրավունք ուներ: Հետագայում հոր իշխանությունը խիստ սահմանափակվեց:

Ընտանիքի անդամներն էին կազմում՝ կինը, երեխաները, ամուսնացած

⁵⁷ St u **Eberhard F. Bruck**, *Über romisches Rect in Rahmen der Kulturgeschichte*. Berlin, 1954, s.70.

⁵⁸ Стu Римское частное право. Учебник. Под ред. проф. И. Б. Новицкого и проф. И. С. Перетерского. - М., «Юрист». 1996, с. 121-144.

տղաներն իրենց կանանց և երեխաների հետ, ազատ անձինք, որոնք բնակվում ու աշխատում էին այդ ընտանիքում և ստրուկները:

Հայրական իշխանության ներքո գտնվողները կոչվում էին **ազնաստներ**: Սրանց թվին էին պատկանում ոչ միայն ընտանիքի հոր հետ արենակցական կապ ունեցողները, այլև նրա կողմից որդեգրվածները, ինչպես նաև որդիների և թոռների կանայք: Ազնաստության հասկացության հետ հռոմեական ընտանեկան իրավունքին հայտնի էր նաև **կոզնաստություն** հասկացությունը:

Կոզնաստներ էին կոչվում արենակցական կապերով կապված անձինք: Այսպես, որևէ մարդու դուստրը ամուսնանալու դեպքում պահպանում էր կոզնաստական կապերը ազգականների հետ, բայց անցնում էր ամուսնու ընտանիքի ազնաստների շարքը:

Ամուսնությունը (*nuptiae, matrimonium*) ըստ հռոմեացի իրավաբան Մոդեստինի «տղամարդու և կնոջ միությունն է՝ ցմահ դաշինքով, որը հիմնված է աստվածային և մարդկային ընդհանուր իրավունքի վրա»:

Մինչ Հուստինիանոսի օրենսդրությունը տարբերվում էին ամուսնության հետևյալ տեսակները.

ա) *cum manu* - այսինքն՝ ամուսնություն տղամարդու իշխանության պայմանով, որի դեպքում կինը անվերապահորեն ենթարկվում էր ամուսնու իշխանությանը և

բ) *sine manu* - ամուսնություն, որի դեպքում կինը պահպանում էր իր նախկին դրությունը կամ էլ ձեռք էր բերում որոշակի ինքնուրույնություն:

Հռոմեական իրավունքը ամուսնության համար սահմանել էր հետևյալ պայմանները.

1) ամուսնացողների և նրանց ծնողների (խնամակալների) համաձայնությունը,

2) ամուսնական չափահասություն՝ տղաների համար 14 տարեկան, աղջիկների համար 12 տարեկան,

3) ամուսնացողները օժտված պետք է լինեին ամուսնանալու իրավունքով (*jus conubii*),

4) մերձավոր հարազատական կապի բացակայությունը մինչև քառորդ աստիճան:

Ամուսնական միությունը դադարեցվում էր.

ա) ամուսիններից որևէ մեկի մահվամբ,

բ) ամուսիններից որևէ մեկի ազատության գրկամամբ,

գ) ամուսնալուծության պատճառով:

Ամուսնալուծության հիմնական պատճառներն էին համարվում.

1) ամուսնական անհավատարմությունը,

2) կնոջ չբերությունը,

3) ամուսնու անկարողությունը,

4) կրոնական միություններին հարելը և այլն.

Cum manu - ամուսնության դեպքում կնոջ ամբողջ ունեցվածքը համարվում էր ամուսնու սեփականությունը և, նույնիսկ, ամուսնության դադարեցման դեպքում, այն չէր վերադարձվում կնոջը: Միայն ամուսնու մահից հետո կնոջն անցնում էր որոշակի գույք՝ ժառանգության կարգով:

Sine manu - ամուսնության դեպքում ամուսիններից յուրաքանչյուրի ունեցվածքը համարվում էր նրանց առանձին-առանձին սեփականությունը: Ամուսինը իրավունք ուներ տնօրինելու կնոջ գույքը միայն վերջինիս համաձայնությամբ:

Հռոմեական իրավունքին հայտնի էր օժիտի (dos) ինստիտուտը⁵⁹: Օժիտը կնոջ բերած գույքն էր ամուսնանալիս: Օժիտը տալիս էր կամ կնոջ հայրը (dos profecticia), կամ ինքը կինն էր բերում օժիտը իր անունից, եթե նա մինչև ամուսնությունը ինքնուրույն անձ էր (persona sui juris) կամ էլ երրորդ անձն էր տալիս (dos adventicia): Սկզբնական շրջանում օժիտը ամբողջությամբ կազմում էր ամուսնու սեփականությունը, սակայն հետագայում ամուսնու իրավունքները օժիտի նկատմամբ սահմանափակվեցին, իսկ կնոջ իրավունքները՝ ընդարձակվեցին:

Այսպես, եթե ապահարզանի պատճառը ամուսինն էր, ապա ըստ Հուստինիանոսի օրենքի, օժիտը վերադարձվում էր կնոջը: Սակայն, եթե ապահարզանի պատճառը կնոջ վարքագիծն էր, ապա օժիտը անցնում էր ամուսնուն՝ որպես սեփականություն:

Ծնողների և երեխաների անձնական և գույքային իրավունքներն ու պարտականությունները արմատական փոփոխություն են կրել հռոմեական իրավունքի պատմության զարգացման տարբեր փուլերում: Եթե հնագույն ժամանակներում հայրն օժտված էր բացարձակ իշխանությամբ իր երեխաների

⁵⁹ См' у Санфилиппо Чезаре, Курс римского частного права. Учебник. Пер. с итальянского. Под общей ред. Д. В. Дождева, М., 2000, с. 139-140.

նկատմամբ (վաճառելու, պարտքի դիմաց ստրկության տալու, նույնիսկ սպանելու), ապա ժամանակի ընթացքում (դասական և ետդասական իրավունքի շրջանում), հայրական այդ անսահմանափակ իշխանությունը խիստ նվազեց և սահմանափակվեց միայն երեխաների դաստիարակությամբ, մեծերի նկատմամբ հարգանքի զգացում տաճելու պարտավորեցմամբ: Ըստ այդմ էլ, երեխաները իրավունք չունեին ծնողներին ուղղված հայցով դիմելու դատարան, ա-ռանց ծնողների համաձայնության ամուսնանալու և այլն:

Ծնողներն ու երեխաները անհրաժեշտության դեպքում պարտավոր էին միմյանց նյութական օգնություն ցույց տալ և այլն:

Հայրական իշխանությանը ենթակա որդին ուներ *commercium* իրավունքը, այսինքն՝ կատարել գույքային գործարքներ: Սակայն այն ամենը, ինչ ձեռք էր բերում գործարքի միջոցով, անցնում էր հոր սեփականությանը:

Առևտրի և տնտեսության զարգացման հետևանքով որոշակի գույքային իրավունքներ տրվեցին որդիներին: Ձևավորվեց այսպես կոչված ճամբարային պեկուլիումը (*peculium costrense*): Սկզբնական շրջանում դրա շարքին էր դասվում այն ամենը, ինչ ձեռք էր բերել որդին զինվորական ծառայության ընթացքում (աշխատավարձ, ավար, նվերներ և այլն): Այդ ունեցվածքը որդին տնօրինում էր իր հայեցողությամբ: Նրա մահից հետո գույքն անցնում էր հորը: Հետագայում պեկուլիումի հասկացությանը հռոմեացի իրավաբանները տվեցին ավելի լայն մեկնաբանում և նրա շարքը դասեցին նաև այլ եղանակներով ձեռք բերված գույքը: Իսկ Հուստինիանոսի օրենքով որդին օժտված էր իր գույքը ազատ տնօրինելու իրավունքով:

Հռոմեական իրավունքին հայտնի էր նաև որդեգրումը: Հայտնի էին որդեգրման հետևյալ տեսակները.

ա) որդեգրվողը պահպանում էր իր ինքնուրույնությունը (*persona sui juris*) և որդեգրումը կոչվում էր *arrogatio*,

բ) երբ որդեգրվողը հայրական իշխանության ենթակա անձ էր (*persona alieni juris*) և որդեգրումը կոչվում էր *adoptio*:

Arrogatio-ն հին ժամանակներում կատարվում էր ժողովրդական ժողովի կողմից՝ որդեգրողի և որդեգրվողի ներկայությամբ՝ պոնտիֆիքսների մասնակցությամբ: Միապետության ժամանակաշրջանում, երբ չէր գումարվում ժողովրդական ժողով,

որդեգրումը կատարվում էր պրինցիպսի հրամանով (*rescriptum principis*):

Որդեգրման *adoptio* ձևը կատարվում էր մանցիպացիայի միջոցով, այսինքն՝ օգտագործվում էր պրինձ և կշեռք, որդեգրողը և որդեգրվողը, կշեռք բռնողը և հինգ վկա, ինչպես նկարագրված է 12 աղյուսակների օրենքներում: Մանցիպացիայի ծիսակատարությունից հետո ավարտվում էր որդեգրման արարողակարգը և անձը համարվում էր որդեգրված:

Որդեգրման անհրաժեշտ պայմաններն էին.

ա) որդեգրման իրավունք ունեին լրիվ իրավունակությամբ օժտված տղամարդիկ,

բ) որդեգրողը պետք է որդեգրվողից մեծ լիներ առնվազն 18 տարի, քանի որ ըստ հռոմեացի իրավաբանների «որդեգրումը ընդօրինակում է բնությանը» (*adoptio naturam imitatur*):

Հռոմեացի իրավաբան Գայուսը հայրական իշխանությունը համարում էր «հռոմեական քաղաքացիների ազգային ինստիտուտ» (*jus proprium civium romanorum*): Հռոմեական ընտանիքում որպես ինքնուրույն անձ (*persona sui juris*) համարվում էր միայն հայրը, որդիները և դստերը համարվում էին «ուրիշի իրավունքի անձեր» (*personae alini juris*):

Հայրական իշխանության ներքո գտնվող չափահաս տղան ուներ և՛ ազատություն (*libertas*), և՛ քաղաքացիություն (*civitas*): Նա կարող էր պաշտոններ զբաղեցնել, բացառությամբ՝ սենատորի պաշտոնից: Սակայն ընտանիքում տղան միշտ ենթակա էր հոր իշխանությանը:

Հայրական իշխանությունը ծագում էր օրինական ամուսնությունից՝ որդու կամ դստեր ծննդով կամ որդեգրմամբ: Հայրական իշխանությունը դադարեցվում էր.

ա) հոր մահվամբ,

բ) երբ հայրը կորցնում էր ազատությունը կամ քաղաքացիությունը,

գ) հայրական իշխանությունից զրկվելու դեպքում,

դ) երբ հայրական իշխանության ենթական ձեռք էր բերում մի շարք պատվավոր պաշտոններ:

4.4. Գույքային իրավունք

Գույքային և պարտավորական իրավունքների դասակարգումը հայտնի չէր

հռոմեական իրավաբաններին: Նրանք խոսում էին միայն գույքային հայցերի (actiones in rem) և անձնական հայցերի (actiones in personam) մասին⁶⁰: Գույքային և պարտավորական իրավունքների նման դասակարգումը ուշ ժամանակաշրջանի իրավաբանների գործն է՝ ելնելով հռոմեական իրավաբանների աշխատություններից:

Եթե իրավունքի օբյեկտը համարվում է գույքը, ապա գործ ունենք գույքային իրավունքի հետ, իսկ եթե իրավունքի օբյեկտը որոշակի գործողություններ կատարելն էր, ապա դա պարտավորական իրավունք է: Իրավունքի օբյեկտների բնույթից բխում էին նրանց պաշտպանության ձևերը: Գույքային իրավունքը օգտվում էր բացարձակ պաշտպանությամբ, իսկ պարտավորական իրավունքը՝ հարաբերական պաշտպանությամբ:

Տիրապետումը ըստ հռոմեական իրավունքի, գույքի փաստացի տիրումն էր, որը կապված էր իրավաբանական հետևանքների, և, առաջին հերթին, իրավաբանական պաշտպանության հետ: Սակայն ոչ բոլոր դեպքերում էր, որ գույքի փաստացի տիրումը տիրապետում էր համարվում: Տիրապետման (possessio) համար անհրաժեշտ էր երկու հանգամանք, ա) corpus possessionis (փաստացի տիրապետում) և բ) animus possessionis (տիրապետման ցանկություն, կամք): Այսպիսով, տիրապետումը կարելի է սահմանել որպես անձի փաստացի տիրումը գույքին՝ զուգորդված այն մտայնությամբ, որ դա իր գույքն է, այսինքն՝ տիրել անկախ ուրիշի կամքից, ինքնուրույն: Իսկ գույքի տիրումը (detento) նույնպես փաստացի գործողություն է, սակայն առանց այդ մտայնության: Տիրապետման առարկա կարող էին լինել սեփականատիրական իրավունքի օբյեկտ հանդիսացող իրերը: Հռոմեական իրավունքը տարբերում էր տիրապետման երկու տեսակ՝ օրինական տիրապետում (jus possidandi) և անօրինական տիրապետում (injusta):

Օրինական տիրապետումն այն էր, որն ուներ իրավաբանական հիմք (օրինակ, սեփականատիրոջ տիրապետումը, պայմանագրով գույքի տիրապետումը և այլն), իսկ անօրինական տիրապետումը զրկված էր որևէ իրավաբանական հիմքից (օրինակ, գողի կամ հափշտակողի տիրապետումը): Անօրինական տիրապետումը իր հերթին լինում էր. անօրինական բարեխիղճ տիրապետում և անօրինական անբարեխիղճ տիրապետում: Անօրինական բարեխիղճ տիրապետումն ըստ հռոմեական իրավունքի

⁶⁰ St' u Римское частное право. Учебник. Пол ред. проф. И. Б. Новицкого и проф. И. С. Перетерского. М., 1996, с. 149.

homo Sempronii ex jure Quiritium): Ավելի ուշ ժամանակաշրջանում սեփականությունը արտահայտվում էր *dominium* տերմինով: Սեփականությունն ձեռք բերելու հիմնական եղանակը այսպես կոչված մանցիպացիան էր (*municipatio*): Դա մի արարողություն էր, որը ենթադրում է գույքը ձեռքբերողի (գնորդի) և գույքի սեփականատիրոջ (օտարողի) պարտադիր ներկայությունը: Պետք է ներկա լինեին նաև հինգ չափահաս քաղաքացիներ՝ որպես վկաներ և վեցերորդը՝ կշեռք բռնողը: Գնորդը հայտարարում էր. «Այդ իմ ստրուկն է» և օտարողին (սեփականատիրոջը) փոխանցում էր պղնձի կտորը՝ որպես վճարման միջոց, որը պետք է կշռեր կշեռք բռնողը: Այս արարողությունը ավարտելուց հետո առուվաճառքը համարվում էր կատարված: Ըստ հռոմեական իրավունքի (12 աղյուսակների օրենքներ) իրերը բաժանվում էին երկու տեսակի.

ա) իրեր, որոնք օտարելի էին միայն մանցիպացիայի միջոցով, կոչվում էին *res mancipi* և բ) իրեր, որոնք ենթակա չէին մանցիպացիայի միջոցով օտարելուն, կոչվում էին *res nec mancipi*⁶²: Առաջին տեսակի իրերը՝ Իտալիայի սահմաններում գտնվող ստրուկները, կենդանիները, հողերը և կառույցներն էին: *Res nec mancipi* թվին էին դասվում քաղաքային կալվածքները, սերվիտասները: Գույք ձեռք էր բերվում նաև այլ միջոցներով: Դրանցից մեկը այսպես կոչված սարքովի դատական վեճն էր (*in jure cessio*): Օտարողը և ձեռք բերողը գնում էին մագիստրատի մոտ և նա, ով ցանկանում էր տվյալ իրը ձեռք բերել, հայտարարում էր, թե այդ իրն իրեն է պատկանում: Մագիստրատը հարցնում էր իրի փաստացի տիրապետողին, թե արդյոք նա չի՞ առարկում: Վերջինս կամ լռում էր կամ էլ բացասական պատասխան տալիս: Այդ եղանակով կարելի էր ձեռք բերել ինչպես *res mancipi*, այնպես էլ *res nec mancipi* իրեր:

Հանրապետության ուշ ժամանակաշրջանում երևան եկավ սեփականության նոր ձև՝ բոնիտարական կամ պրետորական սեփականությունը: Բոնիտար սեփականությունը ձեռք էր բերվում առանց մանցիպացիայի բարդ արարողակարգի: Այդ ճանապարհով ձեռք բերած իրերը ըստ քվիտորական իրավունքի դեռևս սեփականություն չէին համարվում, սակայն պաշտպանվում էին պրետորի հատուկ եղիկտով՝ *actio in rem Publiciana*: Ձեռք բերողը չէր համարվում սեփականատեր, սակայն իրը դասվում էր նրա ունեցվածքի շարքը, որպես *in bonis*: Այստեղից էլ «բոնիտար» կամ «պրետորական» սեփականություն հասկացությունը: Բոնիտար

⁶² См. у Санфилиппо Чезаре, Курс римского частного права. Учебник. Пер. с итальянского. Пол общей ред. Д. В. Дождева, М., 2000, с. 52-53.

սեփականության զարգացման հետ զուգընթաց երևան եկավ (Հանրապետության վերջում) սեփականության հատուկ ինստիտուտ՝ պերեգրինների սեփականություն (սրանք պաշտպանվում էին պրետորի հատուկ էդիկտով՝ *praetor peregrinus* և պրովինցիաներում՝ հողի սեփականություն)⁶³:

Սեփականության իրավունքի բովանդակությունն են կազմում՝ գույքը օգտագործելու իրավունքը (*jus utendi*), եկամուտներից, պտուղներից օգտվելու իրավունքը (*jus fruendi*), տնօրինելու իրավունքը (*jus abutenti*), տիրապետելու իրավունքը (*jus possidendi*) և պահանջելու իրավունքը (*jus vindicandi*):

Սեփականության իրավունքի պաշտպանության հիմնական եղանակը վինդիկացիոն հայցն էր (*rec vindicatio*): Վինդիկացիոն դատավարության ընթացքում կողմերն էին՝ հայցվորի դերում՝ սեփականատերը, իսկ պատասխանողի դերում՝ գույքի փաստացի տիրապետողը, որի տիրապետությունը զուրկ էր իրավական հիմքերից: Դատավարության ժամանակ հայցվորը պարտավոր էր ապացուցելու իր սեփականատիրական իրավունքը վիճելի գույքի նկատմամբ՝ սկսած գույքի տիրապետումից մինչև այն սեփականություն դարձնելը: Պատասխանողը իր հերթին կարող էր վիճարկել ոչ միայն հայցվորի սեփականատիրական իրավունքը տվյալ գույքի նկատմամբ, այլև գույքի սկզբնական սեփականատերի կամ տիրապետողի իրավունքը: Դրա համար էլ միջնադարյան իրավաբանները վինդիկացիոն հայցի ապացուցումը համարում էին սատանայական (*probatio diabolica*):

Սեփականության իրավունքը դադարեցվում էր. ա) եթե գույքը ֆիզիկապես ոչնչանում էր, բ) եթե սեփականատերը հրաժարվում էր իր իրավունքից, գ) եթե օրինական կարգով բռնագրավում էր սեփականատիրոջ գույքը: Բացի տիրապետումից և սեփականությունից գոյություն ունեւ նաև այսպես կոչված ուրիշի գույքի նկատմամբ իրավունքի հասկացություն (*jura in re aliena*): Ուրիշի գույքի նկատմամբ իրավունքը լինում էր.

- ա) սերվիտուտային իրավունքի կամ սերվիտուտների ձևով,
- բ) էմֆիթեուզիս և սուպերֆիցիի ձևով և
- գ) գրավի իրավունքի ձևով:

Սերվիտուտային իրավունքն այն էր, երբ որևէ մեկը օգտվում էր ուրիշին պատկանող իրից (հիմնականում՝ հողից): Տարբերվում էին հողային և անձնական

⁶³ **Ств Андреев М. Н.** Римское частное право, София, 1971, с. 204.

սերվիտուտներ: Հողային սերվիտուտը լինում էր գյուղական և քաղաքային: Եթե հողատարածքը օգտագործվում էր քաղաքաշինության համար, կոչվում էր քաղաքային սերվիտուտ, իսկ եթե այն օգտագործվում էր գյուղատնտեսական կուլտուրաների մշակման և գյուղատնտեսական այլ նպատակներով, կոչվում էր գյուղական սերվիտուտ:

Ամենակարևորը անձնական սերվիտուտն էր (ուզուֆրուկտ), որը Դիգեստներում այսպես էր բնորոշվում. «Ուզուֆրուկտը ուրիշի գույքի օգտագործման և նրանից ստացած արդյունքների տնօրինման իրավունքն է՝ գույքի սկզբնական վիճակի պահպանմամբ (*Ususfructus est jus alienis rebus utendi fruendi salva rei substantia*): Որպես անձնական սերվիտուտի տեսակ ուզուֆրուկտի իրավունքը ցմահ էր կամ ժամանակավոր, սակայն այդ իրավունքը չէր անցնում ժառանգաբար: Ուզուֆրուկտի հանձնված իրը պետք է օգտագործվեր ըստ նրա տնտեսական նշանակության, հակառակ դեպքում սեփականատիրոջը պետք է հատուցվեր հասցված վնասը:

Մյուս անձնական սերվիտուտը՝ *usus*-ն էր, այսինքն՝ ուրիշի գույքի օգտագործումը, սակայն առանց նրա արդյունքներից օգտվելու իրավունքի:

Ինչպես նշել ենք, ուրիշի գույքի օգտագործման իրավունքներից էին նաև Էմֆիթեզիսը (*emphyteusis*) և սուպերֆիցիան (*superficies*), որոնց դեպքում ուրիշի գույքի օգտագործումը տեղի էր ունենում երկարատև ժամկետով և ժառանգության իրավունքով: Էմֆիթեզիսը հռոմեական իրավունք է մուտք գործել Հունաստանից, որտեղ լայնորեն տարածված էր հողի ժառանգական վարձակալությունը: Էմֆիթեզիսը գյուղական սերվիտուտ էր՝ հողօգտագործման երկարատև ժամկետով, որն անցնում էր ժառանգաբար: Էմֆիթեզիսի սուբյեկտը պարտավոր էր հողատիրոջը վճարել վարձակալական վարձը (*vectigal, canon, pensio*) և հողի պետական հարկը: Երեք տարվա վարձակալական վարձի չվճարման դեպքում դադարեցվում էր Էմֆիթեզիսը: Էմֆիթեզիսի պաշտպանության համար կիրառվում էին այն նույն հայցերը, որոնք օգտագործվում էին սեփականության իրավունքի պաշտպանության համար, սակայն համանմանության հայցերով (*actionnes utiles*):

Սուպերֆիցիան քաղաքային սերվիտուտ էր, որը ժառանգաբարանցող իրավունք էր՝ ուրիշի քաղաքային տարածքում շինություն կատարելու: Այն ինչ նշվեց Էմֆիթեզիսի մասին, ամբողջությամբ վերաբերվում է նաև սուպերֆիցիային:

Գրավի իրավունքը դարձյալ ուրիշի գույքից օգտվելու իրավունք էր: Այդ

ինստիտուտի նշանակությունը պարտավորությունների պատշաճ կատարման ապահովումն է: Գրավի սկզբնական ձևը *fiducia cum creditore* գործարքն էր: Այսպես, մանցիպացիայի միջոցով պարտապանը պարտքի ապահովման համար պարտատիրոջը տալիս էր որոշակի գույք (պարտքին համարժեք) ի սեփականություն, սակայն պայմանով, որ պարտքի մարման դեպքում գրավ դրված իրը վերադարձվի իրեն:

Գրավի երկրորդ ձևն էր *pignus*-ը, որի դեպքում իրը չէր փոխանցվում որպես ի սեփականություն, այլ միայն տիրապետման իրավունքով՝ պայմանով, որ պարտավորության կատարման դեպքում, այն վերադարձվի սեփականատիրոջը:

Հռոմեական իրավունքի դասական շրջանում պրետորական էդիկտներում ձևավորվեց գրավի երրորդ տեսակը՝ հիպոթեքը (*hypotheca*), որը հետևանք էր հունա-եգիպտական իրավունքի ազդեցության: Հիպոթեքի դեպքում գրավի առարկան մնում էր պարտապանի մոտ, իսկ պահանջատիրոջը սուբյեկտիվ իրավունք էր վերապահվում պարտապանի կողմից պարտավորության չկատարման դեպքում, պահանջել գրավ դրված իրը, վաճառել այն և վաճառքից գոյացած գումարով մարել պարտապանի պարտքը: Հիպոթեքը զարգացավ գյուղական միջավայրում:

4.5. Պարտավորական իրավունք (Ընդհանուր մաս)

Հռոմեական իրավունքի աղբյուրներում պարտավորությունը (*obligatio*) սահմանվում էր հետևյալ կերպ. «Պարտավորությունը իրավական շղթաներ են, որոնց ուժով մենք հարկադրված ենք ինչ-որ բան կատարել՝ համաձայն մեր պետության օրենքների»: Պարտավորությունը ենթադրում է մի կողմից «պահանջի իրավունք», իսկ մյուս կողմից՝ դրան համապատասխան՝ «պահանջի կատարման պարտավորությունը» կամ «պարտքը»⁶⁴: Տասներկու տախտակների օրենքների համաձայն, «Եթե պարտապանը կամովին չի կատարել վճիռը և դատավարության ժամանակ ոչ ոք չի ազատել նրան պատասխանատվությունից, թող հայցվորը տանի նրան իր տուն և դնի 15 ֆունտից ոչ պակաս, իսկ եթե կամենա, ապա և ավելի կշռով, կաղապարների կամ շղթաների մեջ»:

Հնագույն ժամանակներում, եթե պարտապանը չէր մարում պարտքը,

⁶⁴ St' u Санфилиппо Чезаре. Курс римского частного права. Учебник. Пер. с итальянского. Под общей ред. Д. В. Дождева, М., 2000, с. 213.

պարտատերը իրավունք ունի բռնագրավել նրա գույքը կամ ստրկության վաճառել, կամ էլ սպանել պարտապանին: Միայն 326 թ. մ.թ.ա. օրենքը արգելեց պարտքի դիմաց սպանել կամ ստրկության վաճառել պարտապանին, որով և վերացվեց պարտային ստրկությունը:

Պարտավորական իրավահարաբերությունում պահանջի իրավունքով օժտվածը կոչվում էր վարկատու, իսկ պարտավորության կատարողը՝ պարտապան:

Պարտավորությունների կատարումը հիմնականում պաշտպանվում էր հայցային ձևով: Այն պարտավորությունները, որոնք օժտված չէին հայցային պաշտպանությամբ, սակայն ունեին իրավաբանական նշանակություն, կոչվում էին բնավճարային: Այդպիսի պարտավորության օրինակ կարող է ծառայել դրամական փոխառության պայմանագիրը, որը կնքել էր հայրական իշխանությանը ենթակա որդին՝ առանց հոր համաձայնության:

Պարտավորությունները, ըստ իրենց առաջացման հիմքերի, լինում էին. ա) պայմանագրային պարտավորություններ (*ex contractu*) և բ) իրավախախտումներից բխող պարտավորություններ (*ex delicto*):

Իրավախախտումներից առաջացող պարտավորությունները բաժանվում էին՝ ա) մասնավոր իրավախախտումներից (*delicta privata*) առաջացող և հանցագործության (*crimina*) հետևանքով առաջացող պարտավորություններ:

Ըստ իրավաբան Գայուսի, պարտավորությունները լինում էին չորս տեսակի.

ա) պայմանագրային պարտավորություններ,

բ) իբրև պայմանագրից բխող պարտավորություններ,

գ) մասնավոր իրավախախտումներից բխող պարտավորություններ,

դ) իբրև մասնավոր իրավախախտումներից բխող պարտավորություններ:

Հռոմեական պայմանագրային համակարգը բաժանվում էր երկու տեսակի, կոնտրակտներ և պակտեր: Հռոմեական դասական իրավունքը կոնտրակտներ է համարում այն պայմանագրերը, որոնք ճանաչվում էին քվիտորական իրավունքով և օժտված էին հայցային պաշտպանությամբ:

Պակտերն իրենցից ներկայացնում էին անձն համաձայնություն զանազան բովանդակությամբ: Որպես կանոն, պակտերը օժտված չէին հայցային պաշտպանությամբ:

Կոնտրակտները բաժանվում էին չորս հիմնական տեսակների.

- 1) իրական (պարտավորությունը ծագում էր գույքի փոխանցման պահից),
- 2) բանավոր,
- 3) գրավոր (*litterae*) և
- 4) կոնսենսուալ (կողմերի համաձայնությամբ):

Կոնտրակտների նման բաժանումը պատկանում է Գայուսին:

Յուրաքանչյուր պայմանագիր ենթադրում է առնվազն երկու կողմերի համաձայնություն: Այդ իմաստով պայմանագիրը երկկողմանի գործարք է: Սակայն, կախված պայմանագրում պարտավորությունների բնույթից, պայմանագրերը լինում էին միակողմանի և երկկողմանի: Միակողմանի պայմանագիրը պարտավորություններ է առաջացնում միայն մեկ կողմի համար (օրինակ, փոխառության պայմանագիրը): Երկկողմանի պայմանագիրը պարտավորություններ է առաջացնում երկու կողմերի համար (օրինակ, փոխատվության պայմանագիրը): Պայմանագրի վավերականության (իսկության) պայմաններն էին.

- 1) կողմերի համաձայնությունը,
- 2) պայմանագիրը կազմված պետք է լիներ օրենսդրությանը համապատասխան,
- 3) պայմանագրի բովանդակությունը հստակ և պարզ ձևակերպված պետք է լիներ: Այստեղից էլ անորոշ բովանդակությամբ պայմանագիրը իրավական ուժ չուներ:

Պայմանագիրը պետք է կազմվեր կողմերի կամավոր համաձայնությամբ: Այն պայմանագիրը, որը կնքվել էր հարկադրանքի կամ դրա սպառնալիքի ազդեցության տակ, ճանաչվում էր անօրինական: Պայմանագրի բովանդակությունը որոշվում էր երեք տերմինով, *dare, facere, praestare*:

Dare - նշանակում է տալ (այսինքն՝ փոխանցել սեփականության իրավունքը), *facere* - կատարել ինչպես դրական գործողություններ, այնպես էլ ձեռնպահ մնալ որոշակի գործողություններ կատարելուց, *praestare* - տրամադրել (այսինքն՝ անձնական ծառայություններ մատուցել, ուրիշի փոխարեն պատասխանատվություն կրել և այլն):

Պայմանագրի բովանդակությունն էին կազմում նաև այնտեղ նշված պայմանները կամ վերապահումները և ժամկետները: Պայմանը (*condicio*) պայմանագրում այնպիսի վերապահում է, որից կախված է պայմանագրի իրավական հետևանքների առաջացումը: Պայմանները կարող էին լինել կատարվելիք

գործողությունները կամ իրադարձությունները:

Պայմանագրի ժամկետները որոշում էին այն գործողության մեջ մտցնելու ժամանակը, գործողության ժամանակահատվածը և դադարեցման ժամանակը: Պայմանագրերը կնքվում են անձամբ կողմերի նախաձեռնությամբ: Այսպես, մի կողմը առաջարկություն էր անում պայմանագիր կնքելու (այսպես կոչված *օֆֆերտ*), իսկ մյուս կողմը ընդունում էր այդ առաջարկությունը (ակցեպտ): Պայմանագիրը կնքում էին կամ գրավոր, կամ էլ բանավոր ձևով՝ կախված պայմանագրի բովանդակությունից:

Պարտավորության բնականոն դադարումը դրա իրականացումն էր: Պարտավորության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը առաջ էր բերում պատասխանատվություն: Պարտապանի պատասխանատվությունը հիմնավորվում էր մեղքի սկզբունքով, այսինքն՝ պարտապանը պատասխանատու էր միայն այն դեպքում, երբ առկա էր նրա մեղավորությունը պարտավորությունը չկատարելու համար: Տարբերվում էին մեղքի հետևյալ տեսակները, դիտավորությամբ պատճառած վնաս - *dolus*, անզգուշությամբ կամ անփութությամբ պատճառած վնաս: Տարբերվում էր կոպիտ անփութություն (*culpa lata*) և թեթև անփութություն (*culpa levis*):

Վնասի հասկացությունը ըստ հռոմեացի իրավաբանների ներառում էր՝

ա) դրական վնասներ (*damnus emergens*), այսինքն՝ գույքին հասցված ուղղակի վնասը և

բ) բաց թողած օգուտներ (*lacrums cessans*), այսինքն՝ պարտավորությունների բնականոն կատարման դեպքում սպասվելիք արդյունքը: Որպես կանոն, հատուցվում էին միայն ուղղակի, անմիջական վնասները, այլ ոչ թե անուղղակի վնասները:

Պարտավորությունը կարող էր դադարեցվել նաև պարտավորության նորացման միջոցով, այսինքն՝ հին պարտավորությունը փոխելով նորով:

4.6. Պարտավորությունների առանձին տեսակներ

Բանավոր կոնտրակտ էր կոչվում այն պայմանագիրը, որը կազմվում էր բանավոր խոսքի (*verbis*) հիման վրա: Այդպիսի պայմանագրի հիմնական տեսակ էր ստիպուլյացիան (*stipulatio*)⁶⁵: Ստիպուլյացիան բանավոր պայմանագիր էր, որը

⁶⁵ St' u Санфилиппо Чезаре. Курс римского частного права. Пер. с итальянского. Под общей ред. докт. юр. наук Д. В. Дождева. М., Изд-во «БЕК», 2000, с. 245.

կնքվում էր վարկատուի և պարտապանի միջև՝ հարց ու պատասխանի ձևով: Վարկատուն հարցնում էր. «խոստանո՞ւմ ես տալ» (*centum dare spondes?*), հետևում էր պարտապանի պատասխանը՝ «խոստանում եմ» (*spondeo*): Այդ պայմանագիրը հայտնի էր դեռևս 12 աղյուսակների օրենքներին: Բացարձակ միապետության ժամանակաշրջանում (5-րդ դար) հրապարակվեց օրենք, որով ճանաչվում էր ցանկացած ստիպույացիայի պայմանագիրը, եթե այն չէր հակասում օրենսդրությանը: Ստիպույացիոն պայմանագիրը համարվում էր միակողմանի, այսինքն՝ մի կողմն օժտված էր իրավունքով, իսկ մյուս կողմը՝ միայն պարտավորությամբ: Կայսրության ժամանակաշրջանում ստիպույացիոն պայմանագիրը կարելի էր ձևակերպել ցանկացած արտահայտություններով, նույնիսկ ոչ լատիներեն լեզվով: Նույն միտումն էր նկատվում նաև այսպես կոչված անանուն պայմանագրերում (*contractus innominati*): Դրանց էությունն այն էր, որ եթե երկու անձանց միջև բանավոր համաձայնություն էր կայանում ինչ-որ հարցի շուրջ և, եթե նրանցից մեկը կատարում էր իր պարտականությունը, ապա մյուս կողմի համար դա դառնում էր իրավաբանական պարտավորություն՝ խոստումը կատարելու: Օրինակ, եթե որևէ մեկը խոստացել էր տիրոջը ցույց տալ, թե որտեղ է թաքնված փախած ստրուկը, իսկ տերն իր կողմից խոստացել էր դրա համար որոշակի գումար, ապա առաջինի կողմից խոստումը կատարելը պարտավորեցնում էր երկրորդին՝ իր պարտավորության կատարմանը: Նույնանման հարաբերությունների բոլոր դեպքերը դասական շրջանի հռոմեական իրավունքը ձևավորել է չորս բանաձևի միջոցով, «տալիս եմ, որ դու տաս», «տալիս եմ, որ դու կատարես», «կատարում եմ, որ դու տաս», «կատարում եմ, որ դու կատարես»:

Գրավոր (*litterae*՝ գիր) կոնտրակտ կոչվում էր այն պայմանագիրը, որը կնքվում էր գրավոր ձևով, «*litteris bit obligatio*», այսինքն՝ «պարտավորությունը ծագում է գրվածքից»: Հնագույն շրջանում այդպիսի պայմանագրերի տեսակներ էին համարվում մուտքի և ելքի մատյանները: Դասական շրջանում մուտքի և ելքի մատյանները կորցրին իրենց նշանակությունը և հույների պրակտիկայից ընդօրինակեցին մուրհակները՝ սինգրաֆներ և հիրոգրաֆներ: Սինգրաֆները շարադրվում էին երրորդ դեմքով: Այդպիսի փաստաթուղթը լրացվում էր վկաների ներկայությամբ և սրանք պարտապանի հետ միասին ստորագրում էին փաստաթուղթը: Միապետության շրջանում սինգրաֆներին փոխարինեցին

հիրոգրաֆները, որոնք շարադրվում էին առաջին դեմքով և ստորագրվում էին պարտապանի կողմից:

Իրական կոնտրակտների տեսակներն էին. ա) փոխառության (mutuum), բ) փոխատվության (commodatum), գ) պահատվության (depositum) պայմանագրերը:

Փոխառության (mutuum) պայմանագրով մեկ կողմը՝ փոխատուն, մյուս կողմին՝ փոխառուին է հանձնում ի սեփականություն դրամական գումար կամ տեսակային հատկանիշներով որոշված իրեր, իսկ փոխառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված ժամկետում փոխառուին վերադարձնել դրամական գումարը կամ նույն տեսակի ու քանակի իրեր:

Փոխառությունը **իրական** (ռեալ) պայմանագիր է, քանի որ այն կնքված է համարվում փոխատուից փոխառության առարկան փոխառուին հանձնելու պահից: Այդ պայմանագիրը նաև միակողմանի է, քանի որ փոխատուն ձեռք է բերում միայն իրավունքներ, իսկ փոխառուն ստանձնում է միայն պարտավորություններ:

Փոխատվության (commodatum) մեկ կողմը պարտավորվում է գույքը անհատույց ժամանակավոր օգտագործման հանձնել մյուս կողմին, իսկ վերջինս պարտավորվում է վերադարձնել նույն գույքը ամբողջությամբ և անվնաս:

Անհատույց օգտագործման կարելի էր տալ միայն անհատապես որոշվող և ոչ սպառելի իրերը: Այս պայմանագիրը երկկողմանի է, քանի որ օգտագործման հանձնողը պարտավոր է գույք հանձնել, իսկ ստացողը պարտավոր է վերադարձնել այն: Պայմանագիրը **իրական** է, քանի որ մինչև պայմանագրի առարկան չհանձնվի մյուս կողմին, կողմերի համար իրավունքներ և պարտավորություններ չեն ծագում:

Պահատվության (depositum) պայմանագրով մեկ կողմը՝ պահառուն, պարտավորվում է անհատույց պահել մյուս կողմի՝ պահատուի, հանձնած գույքը ըստ նշված ժամկետի և այն վերադարձնել ամբողջությամբ ու անվնաս: Այս պայմանագիրը **իրական** է, քանի որ գույքը պահպանելու պարտականությունը պահառուն ստանձնում է պահատուից այն ստանալու պահից: Այս պայմանագիրը երկկողմանի և անհատուցելի պայմանագիր է:

Կոնսենսուալ կոնտրակտներից են. առուվաճառքի, վարձակալության, կապալի, հանձնարարության, ընկերության պայմանագրերը:

Առուվաճառքի (emptio - venditio) պայմանագրով վաճառողը պարտավորվում է գույքը հանձնել գնորդին ի սեփականություն, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել

գույքը և վճարել դրա համար: Առուծախի պայմանագիրը **կոնսենսուալ է, հատուցելի և երկկողմանի:**

Ապրանքը (merx) և գինը (pretium) առուվաճառքի պայմանագրի էական տարրերն են: Առուվաճառքի պայմանագրի առարկա կարող էր լինել քաղաքացիական շրջանառությունից չհանված ցանկացած իր:

Դասական հռոմեական իրավունքը տարբերում էր վարձակալության պայմանագրի հետևյալ տեսակները.

1) գույքային վարձակալություն (locatio conductio rerum),

2) ծառայության վարձակալություն (locatio conductio operarum),

3) աշխատանքի վարձակալություն կամ կապալ (locatio conductio operis կամ operis faciendi):

Գույքային վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում էր գույքը վճարով վարձակալին հանձնել ժամանակավոր օգտագործման համար: Գույքային վարձակալությունը կոնսենսուալ, հատուցելի և երկկողմանի պայմանագիր էր: Ծառայության վարձակալություն կոչվում էր այն պայմանագիրը, որի համաձայն վարձակալը պարտավորվում էր վճարով կատարել որոշակի ծառայություն վարձատուի համար: Այս պայմանագիրը նույնպես **կոնսենսուալ, հատուցելի և երկկողմանի** պայմանագիր է:

Կապալի (locatio - conductio operis) պայմանագրով կապալառուն (conductor) պարտավորվում էր կատարել որոշակի աշխատանք պատվիրատուի (locator) համար, իսկ վերջինս պարտավորվում էր վճարել կատարված աշխատանքի դիմաց:

Կապալի պայմանագիրը կոնսենսուալ, երկկողմանի և հատուցելի էր:

Հանձնարարության (mandatum) պայմանագրով մեկ կողմը՝ լիազորը, հանձնարարում էր, իսկ մյուս կողմը՝ լիազորվողը, պարտավորվում էր կատարել անհատույց որոշակի գործողություններ (զանազան գործարքներ կնքել և այլն):

Հանձնարարության պայմանագիրը երկկողմանի, կոնսենսուալ և անհատույց պայմանագիր է:

Ընկերության (societas) պայմանագրով երկու կամ ավելի անձիք միավորվում էին որոշակի տնտեսական գործունեություն իրականացնելու համար (օրենքի սահմաններում): Պայմանագիրը կոնսենսուալ, երկկողմանի և անհատույց է: Տնտեսական գործունեության հետևանքով ստացված եկամուտը կամ կրած վնասը

հավասարապես բաշխվում էր ընկերության անդամների վրա:

Պակտը (ինչպես և կոնտրակտը) համաձայնություն էր: Սակայն ի տարբերություն կոնտրակտի, պակտը օժտված չէր հայցային պաշտպանությամբ: Ճիշտ է, պրետորական էդիկտում ասված էր, որ «pacta conveta servabo» (ես ընդունում եմ կնքված պակտը), այստեղից էլ առաջացել է քաղաքացիական և միջազգային իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկը՝ «pacta sunt servanda» (համաձայնագիրը պետք է պահպանվի): Սակայն ժամանակի ընթացքում մի շարք պակտեր, որպես բացառություն, օժտվում են հայցային պաշտպանության իրավունքից: Այդպես ծագեցին երկու կարգի պակտեր. 1) pacta nuda (մերկ պակտեր), որոնք օժտված չէին հայցային պաշտպանությամբ և 2) pacta vestita (հագնված պակտեր), որոնք օժտված էին հայցային պաշտպանությամբ:

Պրետորի կողմից «հագնված» պակտերն (դրա համար էլ կոչվում էր նաև pacta praetoria - պրետորական պակտեր) էին՝ constitutum debiti (բառացիորեն՝ պարտքի հաստատում) և receptum (համաձայնություն): Constitutum debiti-ն ոչ ֆորմալ համաձայնություն էր, ըստ որի պարտապանը պարտավորվում էր վճարել արդեն իսկ գոյություն ունեցող պարտքը պարտատիրոջը (դրանով պարտապանը մեկ անգամ ևս հաստատում էր իր պարտքը): Receptum-ը արտահայտվում էր հետևյալ պակտերում.

ա) receptum arbitris - համաձայնություն միջնորդ դատավորի հետ,

բ) receptum naturarum - համաձայնություն նավապետի հետ, հյուրանոցի տիրոջ հետ,

գ) receptum argentariorum - համաձայնություն վարկատուի հետ:

Միապետության ժամանակաշրջանում երևան եկան pacta legitima, այսինքն՝ օրինական պակտեր, որոնք հայցային պաշտպանություն ստանում էին կայսրից:

Մասնավոր իրավախախտումը (delictum privatum) Հին Հռոմում համարվում էր այնպիսի իրավախախտում, որը ոտնահարում էր առանձին անձանց իրավունքներն ու շահերը և դրա պատճառով իրավախախտողը պարտավոր էր տուժածին վճարել տուգանք կամ հատուցել վնասը: Ինչպես նշել ենք, մասնավոր իրավախախտումների շարքում հռոմեական իրավունքը դասում էր նաև գողությունը, մարմնական վնասվածք հասցնելը: Մասնավոր իրավախախտման բնորոշ հատկանիշներն են,

ա) հակաիրավական գործունեության հետևանքով պատճառած վնասի առկայությունը,

բ) իրավախախտողի մեղքի առկայությունը,

գ) օրենքի կողմից նման արարքը որպես մասնավոր իրավախախտում ճանաչելը:

Տարբերվում էին մասնավոր իրավախախտումների հետևյալ տեսակները.

- 1) Injure (անձնական վիրավորանք),
- 2) Furtum (գողություն, հափշտակում, ուրիշի սեփականության յուրացում),
- 3) Damnum injure datum (ուրիշի գույքի ոչնչացնելը կամ փչացնելը):

Նշված մասնավոր իրավախախտումները հայտնի էին դեռևս 12 աղյուսակների օրենքներին:

4.7. Ժառանգման իրավունք

Ժառանգություն համարվում է մահացածի ունեցվածքի անցումը մեկ կամ մի քանի անձանց: Հռոմեական իրավունքը ժառանգության հարցում մշակել էր ժառանգական իրավունքի երկու համակարգ, ժառանգություն ըստ քվիտորական իրավունքի (hereditas) և ժառանգություն ըստ պրետորական իրավունքի (bonorum possessio)⁶⁶: Քվիտորական ժառանգական իրավունքը ժառանգորդներ էր ճանաչում միայն ազնատներին, իսկ պրետորական ժառանգական իրավունքը՝ ազնատների հետ ճանաչում էր նաև կոգնատներին: Քվիտորական իրավունքի համաձայն, ժառանգությունը ընդունվում էր ժառանգների մասնավոր կամքով, իսկ պրետորական իրավունքի համաձայն, ժառանգությունը ընդունվում էր դատարանի որոշումով: Սակայն կայսրության ժամանակաշրջանում այդ երկու համակարգերի տարբերությունը ժառանգության հարցում վերանում է և bonorum possessio-ն կորցնում է իր նշանակությունը:

Հռոմեական ժառանգական իրավունքի բնորոշ գծերից մեկն այն էր, որ արգելվում էր միաժամանակ ժառանգումը՝ ըստ կտակի և ըստ օրենքի միևնույն անձին: Այդ առթիվ գոյություն ուներ հետևյալ միտքը. «nemo pro parte testus pro parte intestatus decedese potest» (չի կարող ժառանգվել հանգուցյալի ունեցվածքի մի մասը ըստ կտակի, իսկ մյուս մասը՝ ըստ օրենքի):

Ըստ հռոմեական իրավունքի՝ սահմանված էր անձանց որոշակի կատեգորիա, որոնք զրկված էին ժառանգական իրավունքից: Դրանք էին՝

⁶⁶ St' u Санфилиппо Чезаре. Курс римского частного права. Учебник, с. 274-276, 299-300.

- ա) ստրուկները և պերեգրիները,
- բ) որոշակի կարգի հանցագործները,
- գ) անաստվածները և հերետիկոսները,
- դ) պետական հանցագործների տղաները:

Ժառանգությունը լինում էր ըստ կտակի և ըստ օրենքի:

Կտակը (*testamentum*), ըստ հռոմեական իրավունքի, այնպիսի կարգադրություն է, որտեղ նշված էր ժառանգորդը: Կտակը համարվում է միակողմանի գործարք, քանի որ այն արտահայտում է միայն մեկի՝ կտակարարի կամքը: Կտակի հնագույն ձևերն են՝ *testamentum calatis* և *testamentum in procinctu*: Առաջինը կազմվում էր ժողովրդական ժողովի առջև, որն այդ նպատակով գումարվում էր *pontifex maximus*-ի կողմից՝ տարին երկու անգամ: Պատերազմի ժամանակ կտակը կազմվում էր զորքի առջև, որը և կոչվում էր *testamentum in procinctu*:

Այսպիսով, նշված երկու ձևերը կրում էին հրապարակային բնույթ: Սակայն շուտով երևան եկավ կտակի կազմման մասնավոր ձևը՝ *testamentum per mancipationem*: Այստեղ ժառանգության կտակը կատարվում էր *mancipatia*-ի ձևով և հինգ վկաների ներկայությամբ: Կտակարարը վաճառում էր ժառանգությունը վստահելի մարդուն (*familiae emptor*) այն պայմանով, որ վերջինս ժառանգությունը փոխանցի ըստ նշանակության: Քանի որ կտակի մանցիպացիան կրում էր զուտ ձևական բնույթ, պրետորն այլևս նշանակություն չէր տալիս այդ ձևին: Դրանից ելնելով պրետորը հայտարարում էր, որ գրավոր կտակը յոթ վկաների ստորագրությամբ բավական է, որպեսզի այն համարվի *bonorum possessio secundum tabulas*: Այսպես ձևավորվում է պրետորական կտակը: Հուստինիանոսի ժամանակ մասնավոր կտակի (*testamentum privatum*) հետ միաժամանակ գոյություն ուներ նաև հանրային կտակ (*testamentum publicum*), որը կազմվում էր դատարանում և գրի առնվում պաշտոնական արձանագրության տեսքով (*testamentum apud acta conditum*):

Կտակի իսկության կամ վավերականության պայմաններն էին.

1. Կտակարարը պետք է օժտված լիներ հատուկ իրավունակությամբ (*testamentifactio activa*): Այդպիսի իրավունակությունից զուրկ էին անգործունակ անձինք (հոգեկան հիվանդները, փոքրահասակները) ու որոշակի կատեգորիայի հանցագործներ և այլն:

2. Պետք է պահպանվեր կտակի կազմման ձևը:

3. Կտակարարը անձանմբ պետք է որոշեր ժառանգորդին:

Եթե հանգուցյալը չէր թողել կտակ կամ կտակը համարվում էր անվավեր, ապա ժառանգությունը բաժանվում էր ըստ օրենքի: Քվիտորական իրավունքը տարբերում էր օրինական ժառանգորդների երեք կարգ, sui (մահացածի զավակները), agnat (մահացածի եղբայրներն ու քույրերը), gentiles (մահացածի բարեկամները): Այսպիսով, քվիտորական իրավունքը կոգնատներին չէր ընդունում որպես ժառանգորդներ:

Ըստ պրետորական եղիկտի տարբերվում էր օրինական ժառանգորդների հետևյալ կարգը.

1) երեխաները (liberi):

2) ազնատները (legitimi):

3) կոգնատները (cognati) (արյունակից հարազատները մինչև վեց աստիճան),

4) մահացածի ամուսինը (տղամարդը կամ կինը):

Հուստինիանոսի 118 և 127 նովելներով որոշակի փոփոխություններ կատարվեցին ըստ օրենքի ժառանգության մեջ: Ըստ այդ նովելների Հուստինիանոսը սահմանեց օրինական ժառանգորդների չորս կարգ.

Առաջին կարգն էին կազմում՝ վայրընթաց գծով հարազատները (տղան, աղջիկը, թոռը, ծոռը):

Երկրորդ կարգը՝ վերընթաց գծով հարազատները (հայրը, մայրը, պապը և այլն), ինչպես նաև հարազատ եղբայրներն ու քույրերը:

Երրորդ կարգը՝ խորթ եղբայրներն ու քույրերը և նրանց երեխաները:

Չորրորդ կարգը՝ մնացած հարազատներն ու բարեկամները:

Ժառանգելու իրավունքը ծագում էր ժառանգատուի մահվան փաստով: Սակայն անհրաժեշտ էր նաև, որ ժառանգը որոշակի գործողությամբ հավաստի ժառանգման իրավունքն իրացնելու և մահացածի գույքի նկատմամբ սեփականատեր դառնալու իր ցանկությունը:

Պահանջվում էր նաև, որ ժառանգն իր կամքով հավաստի ժառանգության ընդունումը: Ժառանգը՝ ընդունելով ժառանգությունը, ձեռք էր բերում ոչ միայն իրավունքներ, այլև ժառանգատուի պարտավորությունները (ժառանգատուի պարտքի մարումը և այլն):

Հռոմեական իրավունքին հայտնի էին նաև **լեգատների** և **ֆիդելիկոմիսոսի** ձևերը, որպես կտակարարի կարգադրություններ:

Լեգատը կտակարարի կարգադրությունն էր, որով տրվում էր կոնկրետ անձին որոշակի իրավունքներ կամ օգուտներ՝ ժառանգական գույքի հաշվին: Տարբերվում էին լեգատների հետևյալ հիմնական տեսակները՝ per vindicationem և per damnationem: Առաջինի դեպքում լեգատուն անմիջապես դառնում էր կտակում նշված իր բաժին գույքի սեփականատերը, իսկ երկրորդի դեպքում՝ ժառանգը պարտավոր էր փոխանցել լեգատատուին կտակում նշված գույքը:

Կայսրության ժամանակաշրջանում ժառանգական իրավունքի մեջ իրավական ուժ ստացավ, այսպես կոչված, ֆիդեիկոմիսսը (fideicommissus), որը նշանակում է «խղճի հանձնարարություն»: Դա կտակարարի հանձնարարությունն էր ժառանգորդներին, որը զերծ էր ամեն տեսակի ձևականություններից:

Գլուխ 5

Հռոմեական իրավունքի փոխառումը Եվրոպայում

Հռոմեական իրավունքի ընդօրինակման (ռեցեպցիայի) հիմնահարցը, որպես հասարակական և իրավական կյանքի վիթխարի ու բարդ երևույթ, որպես Հին աշխարհի, Միջնադարի և Նոր ժամանակաշրջանի կապող օղակ, եղել և դեռևս երկար ժամանակ կմնա իրավաբան-գիտնականների սևեռուն ուշադրության կենտրոնում⁶⁷:

Ռեցեպցիա տերմինն ունի մի քանի իմաստ: Արվեստի, մշակույթի, հասարակական գիտությունների մեջ այն մեկնաբանվում է որպես տվյալ հասարակության մեկ այլ երկրում կամ այլ տարածաշրջանում ծագած սոցիոլոգիական և մշակութային ձևերի փոխառում:

Իրավունքի վերաբերյալ ռեցեպցիան նույնպես բնութագրում են տարբեր կերպ՝ առանձնացնելով տվյալ երևույթի այս կամ այն բնորոշ կողմերը:

⁶⁷ St' u Иеринг Р. Дух римского права на различных ступенях его развития. Ч. 1. - СПб., 1875; **Savigny**. Geschichte des Romischen Rechts im Mittelalter, I-VII, 1834-1851; **Stobbe**. Geschichte der deutschen Rechtsguellen, I-II, Braunschweig, 1860-1864; **Моддерман В.** Рецепция римского права на Западе. - М., 1886; **Виноградов П. Г.** Римское право в средневековой Европе. - М., 1910; **Шершеневич Г. Ф.** История философии права,- СПб., 1907 (разд. «Средневековые юрсты»); **Давид Р.** Основные правовые системы современности. Пер. с франц.- М., 1967; Косарев А. И. Римское право.- М., 1986, с. 113-145; Он же. Римское частное право.- М., 1998, с. 205-250; **Нерсесянц В. С.** Общая теория права и государства. Учебник - М., 1999, с. 100-111 և այլն:

Այսպես, ամենաընդհանուր տեսքով ռեցեպցիան կարող է բնութագրվել որպես որևէ պետության կողմից մեկ այլ պետության ավելի զարգացած իրավունքի ընդօրինակում (փոխառում):

Որպես կանոն, հռոմեական իրավունքի ռեցեպցիան բնութագրում են որպես ամբողջ մայրցամաքային Եվրոպայի և Շոտլանդիայի համար բնորոշ երևույթ, որը կայանում է «հռոմեական իրավական ժառանգությունը որպես գործող իրավունք ընկալման և յուրացման մեջ»⁶⁸:

Փորձենք ավելի մանրամասն բնութագրել հռոմեական իրավունքի ռեցեպցիան՝ որպես իրավական ֆենոմեն: Այստեղ պետք է նկատել, որ հռոմեագիտության մեջ ուշադրություն է դարձվել այս հասկացության տարբեր առումներին: Մասնավորապես ընդգծվել է, որ ավատատիրական և բուրժուական Եվրոպայում հռոմեական իրավունքի դրության վերաբերյալ ռեցեպցիան ներկայացնում է իրենից գործողության վերականգնում, ընտրություն, ձևափոխում, յուրացում⁶⁹:

Այս դեպքում մենք գործ ունենք ռեցեպցիայի բավականաչափ բազմակողմանի բնութագրման հետ, թեև չի կարելի չնշել, որ խոսքը հիմնականում, այնուհանդերձ, այն միջոցների և եղանակների հավաքակազմի մասին է, որոնց օգնությամբ կատարվում է ռեցեպցիան, և միայն «յուրացում» բառը ակնարկ է պարունակում ինչ-որ խորքային գործընթացների մասին, որոնք տեղի են ունենում կամ ռեցեպցիայից առաջ, կամ դրա ընթացքում, կամ հանդիսանում են վերջինիս արդյունքը: Դա զգալի չափով նվազեցնում է բերված բնութագրման արժեքը, քանզի այս թվարկումից հետո էլ ռեցեպցիայի էությունը մնում է չբացահայտված:

Ռեցեպցիան բնութագրելիս առավել հաջող է թվում հիշատակությունն այն մասին, որ մենք գործ ունենք արդեն գոյություն չունեցող պետության իրավունքի հետ: Այդ իսկ պատճառով խոսքը պետք է գնա «նախկինում գոյություն ունեցող իրավունքի համակարգի մասին»⁷⁰:

Կարծում ենք, հենց հռոմեական իրավունքի վերածննդի մասին պետք է խոսք գնա առաջին հերթին, քանզի այս պահին է առանցքային նրա ռեցեպցիայի հասկացության բնութագրման ժամանակ:

Այստեղ, անկասկած, «վերածնունդը» նկատի է առնվում ոչ որպես միայն

⁶⁸ Дождев Д. В. Римское частное право.- М., 1996, с. 4; Юридическая энциклопедия.- М., 1998, с. 392.

⁶⁹ Косарев А. И. Римское право.- М., 1986, с. 110.

⁷⁰ Хвостов В. М. История римского права.- М., 1910, с. 426.

«վերականգնում», այլև այս տերմինի փոխաբերական իմաստով, համաձայն որի ֆրանսիական «renaissance» բառը մարմնավորվել է ժամանակակից արևմտյան բառապաշարում որպես մեռյալ մշակույթի կամ կենդանի մշակույթի չորացող ճյուղի հասկացություն:

Հիմնվելով քաղաքակրթության պարուրաձև զարգացման թեզիսի վրա և դիտելով իրավունքի ձևափոխումների քաղաքակրթական գործընթացների համատեքստում, մենք իրավ ենք դիտել հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիան որպես մի երևույթ, որը ներքուստ բնորոշ է նախորդ քաղաքակրթությունների մշակութային արժեքների «վերածննդին»՝ մարդկային պատմության զարգացման յուրաքանչյուր փուլում: Անհրաժեշտ է ընդգծել, որ ռեցեպցիան չի կարելի շփոթել «ռեստավրացիայի» (վերականգնման) կատեգորիայի հետ, քանզի վերջինս նշանակում է որևէ բանի, օրինակ, արվեստի ստեղծագործությունների, պատմական հուշարձանների վերականգնում նախաստեղծ վիճակում:

Արտաքուստ այս կատեգորիաները շատ մոտ են միմյանց, սակայն գոյություն ունեն և որոշակի տարբերություններ: Այսպես, ռեցեպցիայի նպատակն է (և, ըստ էության, վերջնական նպատակը) մշակույթի, իրավունքի ոլորտում հին հենքի վրա որևէ նոր բան ստեղծելը: Եթե նույնիսկ դա կատարվում է, օրինակ, այս կամ այն գաղափարների, լուծումների, իրավական նորմերի ուղղակի փոխառման ձևով, որպես արդյունք հանդես է գալիս նոր որակի արգասիք, հասարակական զարգացման նոր պարույրի ընթացքում առաջացող, ձևավորվող մի ինչ որ բան:

Ինչ վերաբերում է ռեստավրացիային, ապա այն հետապնդում է, ինչ-որ բանի նախնական վիճակում վերականգնելու նպատակ, առանց որևէ փոփոխությունների կամ հավելումների համենայն դեպս, առանց այնպիսի հավելումների, որոնք կարող են խաթարել սկզբնական նյութի բնութագիրը կամ նախաստեղծ վիճակը:

Վերոհիշյալը հաշվի առնելով՝ հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիան կարելի է բնութագրել որպես հետագա քաղաքակրթությունների զարգացման ընթացքում նրա հիմնական սկզբունքների և դրույթների ու ոգու ընկալում և վերածնունդ:

Որպես հասարակական կյանքի խոշոր և բարդ երևույթ, որպես հին աշխարհի, միջնադարի և նոր ժամանակվա իրավական զարգացման կապող օղակ, հռոմեական

իրավունքի ռեցեպցիան միշտ գրավել էր և դեռ երկար ժամանակ գրավելու է բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր հետաքրքրվում են իրավունքով և նրա պատմությամբ: Թե ռեցեպցիան կոնկրետ կենսական պահանջի արդյունք է՝ հենց այդ պահանջի բավարարմանը նպատակաուղղված: Այն ոչ թե իրավական ինքնուրույն զարգացման հակաթեզ է, այլ նրա զարգացումը խրախուսող և արագացնող գործոն:

Ռեցեպցիան բացատրվում է որպես հռոմեական իրավունքի նորմատիվային, գաղափարատեսական այն բովանդակության գործողության վերականգնում (ընտրություն, փոխառում, վերամշակում և յուրացում), որը պիտանի եղավ հասարակական զարգացման ավելի բարձր աստիճանի՝ նոր հարաբերությունների կարգավորման համար: Հռոմեական իրավունքի ռեցեպցիան ոչ թե առանձնակի, միանվագ իրադարձություն էր, այլ բարդ և բազմաստիճան գործընթաց: Նրա առաջին քայլերն էին հռոմեական իրավունքի ուսումնասիրումը, հիմնական բովանդակությունը անցյալի փորձի օգտագործումը նոր իրավունքի ստեղծման գործում:

Ընդհանրապես իրավունքի ընդօրինակումը հասարակության իրավական պահանջմունքների արդյունք է: Այն կարևոր գործոն և խթանիչ է ազգային ինքնավար իրավական համակարգերի զարգացման համար:

Հռոմեական իրավունքի ընդօրինակումը միանգամյա իրադարձություն չէ, այլ իրենից ներկայացնում է բարդ և բազմաստիճան գործընթաց:

Հռոմեական իրավունքի ընդօրինակման բարդ գործընթացն անցել է երկարատև ժամանակաշրջան և մի շարք փուլերով: Հռոմեական իրավունքի ընդօրինակման փուլերը միմյանցից սահմանազատվում են ոչ միայն ըստ ժամանակաշրջանների, այլև ընդօրինակման եղանակներով, նորովի մեկնաբանման և իմաստավորման, ինչպես նաև գործնական, կիրառական նպատակներով:

Ելնելով վերոնշված հանգամանքներից, մասնագիտական գրականության մեջ հռոմեական իրավունքի ընդօրինակման գործընթացն ընդունված է ստորաբաժանել հետևյալ շրջանների առաջին փուլ՝ 11-15-րդ դարեր, երկրորդ փուլ՝ 16-17-րդ դարեր և երրորդ փուլ՝ 18-19-րդ դարեր:

Հռոմեական իրավունքի ընդօրինակման առաջին փուլին բնութագրական է հռոմեական իրավունքի հետազոտությունը Իտալիայի քաղաքների ուսումնական կենտրոններում, որը կրում էր ճանաչողական բնույթ և գործնական նպատակներ չէր

հետապնդում: Երկրորդ փուլին բնորոշ է հռոմեական իրավունքի տարածվելը արևմտաեվրոպական մի շարք երկրներում, որտեղ դրա հետազոտությունը զուգորդվում էր տվյալ պետությունների դատավոր-պրակտիկների կողմից այդ իրավունքի կիրառմամբ: Վերջապես երրորդ փուլում առավել խորությամբ և բազմակողմանի վերամշակվում է ողջ հռոմեական իրավունքի ժառանգությունը, որը հիմք է հանդիսանում նոր ժամանակների պահանջներին համարժեք քաղաքացիական օրենսդրության ձևավորման և դրանց համակարգման համար⁷¹:

Հռոմեական իրավունքի ռեցեպցիայի սկիզբը կապված է 11-12-րդ դարերի հյուսիս-իտալական քաղաքների կենսագործունեության հետ: Առաջին հերթին դա բացատրվում է Իտալիայի հյուսիսում ընթացող սոցիալ-տնտեսական գործընթացներով այնտեղ 11-րդ, իսկ այնուհետև՝ 12-13-րդ դդ. գրանցվում է տնտեսական վերելք: Արագորեն զարգանում էին ապրանքադրամային հարաբերությունները: Այն ժամանակ Իտալիայում չկար միասնական պետություն, սակայն նրա հյուսիսում առաջացան քաղաք-պետություններ կառավարման հանրապետական կարգով: Միջնադարյան Եվրոպայում այդ քաղաքները նշանավոր տեղ էին զբաղում: Միլանը դարձավ արհեստակցական արտադրության խոշորագույն կենտրոն, Վենետիկը, Ջենովան, Պիզան սկսում են խաղալ համաշխարհային առևտրական կենտրոնների դեր, իսկ Ֆլորենցիան առաջ եկավ որպես վաշխատուական կապիտալի կենտրոն: Համարյա նույն ժամանակ կամ քիչ ուշ արհեստակցական արտադրության կենտրոններ առաջացան նաև Ֆրանսիայում: Այստեղ ևս մասնավոր սեփականության և առևտրական կապերի ակտիվ զարգացումը զգում էր համապատասխան իրավական միջոցների պահանջ: Իսկ հռոմեական իրավունքն արդեն պարունակում էր զարգացող տնտեսական հարաբերությունների պատրաստի իրավաբանական ձևավորում: Առանձին քաղաքային կենտրոններում ստեղծված համալսարաններում հռոմեական իրավունքի դասավանդումը՝ կապված տնտեսական և մարդկության վերելքի հետ, երկար ժամանակով առաջ անցավ եվրոպական պետությունների զարգացող բուրժուական հարաբերությունների կարգավորման իրավական միջոցներին տիրապետելու պահանջմունքներից:

Եթե բյուրգերականությունը հանդես էր գալիս հռոմեական իրավունքի գործողության հնարավորինս լայն, լի և ճշգրիտ վերականգնմանը, ապա

⁷¹ St' u Косарев А. И. Римское частное право. Учебник.- М., 1998, с. 208.

ավատական խավի, աշխարհիկ և եկեղեցական իշխանությունների դիրքորոշումը ռեցեպցիայի հարցում շատ ավելի բարդ էր: Շատ բանով այդ դիրքորոշումը նման էր նրանց վերաբերմունքին արտադրության և առևտրի զարգացմանը այն կամ չեզոք էր, կամ էլ արտահայտում էր սեփական շահեկանության ձգտում: Ավատատերերն օգտագործում էին հռոմեական իրավունքը, մասնավորապես, գյուղացիներին ճորտացնելու և նրանց հողերը զավթելու համար: Հռոմեական իրավունքի առանձին սահմանումների ռեցեպցիան երբեմն կատարվում էր Հռոմի պապերի, կայսրերի, իշխանների ուղղակի կարգադրությամբ: Այնուհանդերձ, պատահում էր, որ նրանք անսքող թշնամանք էին տածում հռոմեական իրավունքի հանդեպ:

Ավատատիրական աշխարհում հռոմեական իրավունքի մասին իմացության ամենավաղ տարածողը եկեղեցին էր: Ծագելով դեռ հռոմեական կայսրության ընդերքում քրիստոնեությունն ընկալել էր անտիկ մշակույթի տարրերը: Այսպես, եկեղեցական (Արևմուտքում կանոնիկ) իրավունքը ձևավորվել է ավելի բարձր իրավական մշակույթի անմիջական ազդեցության ներքո: Ու քանի որ եկեղեցական դպրոցներում դասավանդումը կատարվում էր լատիներեն լեզվով, ապա այստեղ պահպանվել էին հռոմեական օրենքների տեքստեր պարունակող որոշ ձեռագրեր դա այն նախադրյալն էր, որն ավելի ուշ հնարավոր դարձրեց ռեցեպցիան: Հոգևորականությունը պահպանել էր հռոմեական կրթվածության որոշ մասեր, որը և փոխանցեց միջնադարին: Քրիստոնեությունը Հռոմից փոխառել էր նաև որոշ իրավական հայեցություններ և իրավական ինստիտուտներ: Ինչ խոսք, որ նրանք վերափոխված էին և հարմարեցված միջնադարյան աշխարհի ուրույն պայմաններին, եկեղեցու շահերին ու քրիստոնեական բարոյականության առանձնահատկություններին: Հաճախ կանոնական իրավունքը անվանում են կամուրջ, որով հռոմեական իրավական մշակույթն անցավ միջնադար:

Իր դիրքերի ամրապնդման հետ մեկտեղ եկեղեցին վերահսկողություն հաստատեց համալսարանների հանդեպ: Այդ բանից հետո աշխարհիկ կրթությունը սկսեց ընկալվել եկեղեցու կողմից որպես սպառնալիք իր տիրապետությանը: 1220 և 1259 թթ. հրատարակվում են Հռոմի պապերի կոնդակները՝ ուղղված հռոմեական իրավունքի դասավանդման դեմ: Փարիզի համալսարանում այդպիսի դասավանդումն ընդհատվում է երկար ժամանակով: Այնուամենայնիվ, կանոնական իրավունքի զարգացումը ընթանում էր հռոմեական իրավունքի ուսումնասիրման

հետ կապված: Հռոմեական իրավունքի գաղափարները և մի ամբողջ շարք ելակետային դրույթներ օգտագործվում էին կանոնիկ իրավունքի նորմերի հիմնավորման համար: Եկեղեցական կաղապարի մեջ մտցված հռոմեական իրավունքը կարգավորում էր ներեկեղեցական հարաբերությունների տարբեր ոլորտներ: Իր իսկ շահերից ելնելով՝ կաթոլիկ եկեղեցին արմատավորում էր կտակով ժառանգության հռոմեական ինստիտուտը՝ խրախուսելով իր օգտին կտակելը: Եկեղեցին աջակցում էր և առևտրական գործարքների զարգացմանը: Հռոմեական իրավունքի օգնությամբ նա վերացնում էր սեփականության տնօրինման հարցում այն սահմանափակումները, որոնք խոչընդոտում էին սեփականությունն իր ձեռքն անցնելուն: Եկեղեցին արդար էր համարում և պաշտպանում էր հռոմեական իրավունքի այն դրույթը, որ գործարքն անվավեր է, եթե իրը վաճառված է նրա գնի կեսից պակաս գումարով:

Տնտեսական կյանքի և լուսավորության զարգացման հետևանքով կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը և նրա իրավունքի գործողության ոլորտը հետզհետե սահմանափակվում են: Ռեֆորմատորական շարժումը և հումանիզմի ազդեցությունը ազատագրում են համալսարանները աստվածաբանության խնամակալությունից: Հռոմեական իրավունքը Գերմանիայի համալսարաններում դառնում է հիմնական առարկան, վերականգնվում է հռոմեական իրավունքի դասավանդումը նաև Փարիզի համալսարանում:

Աջակցում էին ռեցեպցիային նաև ավատատիրական պետությունն ու նրա դատական մարմինները: Ճիշտ է, սկզբից հռոմեական իրավունքի ուսումնասիրումը առանձին անձանց և համալսարանների մասնավոր գործն էր, սակայն արդեն շատ շուտով ավատատեր տիրակալները հասկացան նրա կարևորությունն իրենց նպատակներին հասնելու գործում: Հռոմեական իրավական հայեցակետը ամուր կապված էր առանձին անձանց և սոցիալական խմբերից վեր կանգնած պետական ուժեղ իշխանության գաղափարի հետ: Հռոմեական իրավաբանական խորթ էին քաղաքական մասնատվածության ու մասնավոր և հանրային շահերի շփոթումը: Այդ իսկ պատճառով բոլոր նրանք, ովքեր հանդես էին գալիս հոգուտ կենտրոնական իշխանության ամրապնդման, իրենց համար հենարան գտան կայսրության ժամանակաշրջանի հռոմեական պետական իրավունքի կառուցվածքներում:

XV-XVI դարերի առավել լայն հենքի վրա զարգացող ապրանքադրամային

հարաբերությունները, քաղաքների տնտեսական ու քաղաքական ուժի աճը հռոմեական իրավունքի ռեցեպցիային նոր լիցք հաղորդեցին: Միապետության ժամանակաշրջանում պետության ռեցեպցիայի գործին աջակցությունն արտահայտվում էր նրանում, որ այն խրախուսում էր հռոմեական իրավունքի ուսումնասիրումը, մասնավորապես աջակցում էր նոր համալսարանների բացմանը: Հռոմեական իրավունքին ծանոթ իրավաբանները ստանձնում էին բարձրագույն պետական պաշտոններ, մտցվում էին կայսրերի մերձակա շրջապատի կազմի մեջ: Իրավունքի դոկտորները (doctores juris) հավասարեցվում էին ազնվականությանը, ստանում էին բարձր վարձատրություն:

Քանզի հռոմեական իրավունքի ռեցեպցիան ոչ միաշափ երևույթ է, այն կարող է կատարվել տարբեր եղանակներով և ձևերով:

Պատմաիրավական գրականությունում նշվում է ռեցեպցիայի հետևյալ ձևերը.

1. ուսումնասիրում կրթական հաստատություններում որպես հանրակրթական իրավաբանական առարկայի ապագա իրավաբանների աշխարհայեցողության ձևավորման նպատակով.

2. հռոմեական իրավունքի որպես մշակութային արժեքի ուսումնասիրում.

3. հռոմեական իրավաբանական աղբյուրների հետազոտում, քննություն և մեկնաբանում.

4. հռոմեական մասնավոր իրավունքի նորմերի և դրույթների անմիջական կիրառում.

5. հռոմեական պոզիտիվ մասնավոր իրավունքի նորմերի (աղբյուրների) օգտագործում՝ նորմատիվային ակտեր ստեղծելիս (մասնավոր կողմից կազմված նախագծեր իրագործելիս).

6. նորմատիվային ակտերի ստեղծման կամ նրանց իրագործման (կիրառման) հունա-հռոմեական մեթոդների օգտագործում.

7. հռոմեական մասնավոր իրավունքի հիմնարար դրույթների, սկզբունքների, գաղափարների և կատեգորիաների ընկալում և օգտագործում⁷²:

Առաջարկված դասակարգումը, բնական է, բխում է ռեցեպցիայի առանձին ձևերի ուսումնամեթոդաբանական նպատակներով «տարանջատման» անհրաժեշտությունից: Իրական պրակտիկայում (իրավունքի պատմություն)

⁷² Харитонов Е. О. Основы римского частного права - Ростов - на Дону, 1999, с. 276.

ռեցեպցիան, որպես կանոն, կատարվում է ոչ թե որևէ առանձնակի ձևով, այլ նրանց համակցությամբ և փոխգործողությամբ:

Քանի որ ռեցեպցիան անպայման չէ, որ ժամանակի մեջ քաղաքակրթությունների շփման արդյունք է հանդիսանում, ապա այդպիսի շփման բնույթից կարելի է սահմանազատել ուղղակի և միջնորդված (ածանցյալ) ռեցեպցիաները:

Ուղղակի ռեցեպցիայի դեպքերը հազվադեպ են: Սովորաբար այն տեղի է ունենում, երբ նոր լուրջ քաղաքակրթությունը զարգանում է և բավականաչափ հասունացել է վերածննդի համար այն պահին, երբ ավելի վաղ քաղաքակրթությունը հանգել է կամ հանգչում է, սակայն դեռ շատ երկար ժամանակ չի անցել, որպեսզի կորսվի գաղափարների, իրավական հուշարձանների և այլնի պահպանելու հնարավորությունը: Այդպիսի ռեցեպցիայի օրինակներ կարող են ծառայել հունական իրավունքի ռեցեպցիան Հռոմում, հռոմեական իրավունքի ռեցեպցիան Բյուզանդիայում:

Հռոմեական մասնավոր իրավունքի նորմերը, նրա առանձին դրույթներն ու իրավական որոշումները ավելի հաճախ ընդօրինակվում են միջնորդված ձևով, օրինակ, հռոմեական իրավունքը ռեցեպտած մեկ այլ երկրի իրավական համակարգից փոխառման ճանապարհով (երկրորդական, միջնորդված, ածանցյալ ռեցեպցիա): Որպես օրինակ կարելի է բերել բազմաթիվ երկրների կողմից Նապոլեոնի քաղաքացիական օրենսգրքի կամ Գերմանական քաղաքացիական օրենսգրքի դրույթների փոխառումը (թեև հարկ է նշել, որ վերջիններիս ստեղծումը ևս մասամբ միջնորդված ռեցեպցիայի արդյունք է: Միջանկյալ օղակ է հանդիսացել VI-X դարերում Բյուզանդիայում կատարված «նախառեցեպցիան»):

Ռեցեպցիան կարող է լինել ոչ միայն բացահայտ, այլև լատենտ՝ քողարկված: Դա տեղի է ունենում սովորաբար այն դեպքերում, երբ հռոմեական մասնավոր իրավունքի որոշակի գաղափարների կամ սկզբունքային լուծումների փոխառումը կատարվում է օրինաստեղծ գործունեության ընթացքում՝ հռչակելով, սակայն, սկզբունքորեն նոր մոտեցում, հրաժարում «հնացած» իրավունքից և այլն:

Նախևառաջ անհրաժեշտ է նշել ռեցեպցիայի, այսպես կոչված, «մաքուր», ուրույն երեք տեսակների գոյությունը: Դրանք են.

1. բյուզանդականը,

2. արևմտաեվրոպական մայրցամաքայինը,

3. անգլիականը:

Հարկ է նկատել, որ հռոմեական իրավունքի ընդօրինակման գործընթացն ավելի վաղ ժամանակաշրջանի պատմություն ունի: Այն սկիզբ է դրվել Հռոմի արևելյան կայսրությունում՝ Բյուզանդիայում:

Այսպես, 740 թ. Բյուզանդիայի կայսր Լևոն Իսավրյանի օրոք, հրապարակվեց Էկլոգա օրենսգիրքը, որն, ըստ էության, Corpus juris civilis-ի ծաղկաքաղ է: Իսավրյանների օրոք ընդունվեցին նաև երեք հատուկ օրենսգրքեր (Կանոնադրություններ), ա) Հողագործության մասին, բ) Առևտրի մասին և գ) Զինվորականության մասին:

870 և 879 թթ. Մակեդոնյան կայսրերի կողմից ընդունվեց Պրոխիրոն օրենսգիրքը դատավորների համար: Լևոն Իմաստասերի օրոք հրապարակվեց Basilica (996-911) օրենքների ժողովածուն, որը բաղկացած էր 60 գրքերից, Հուստինիանոսի ժամանակաշրջանից մինչև գործող օրենքները: Եվ, վերջապես, հիշատակման է արժանի Կոնստանտին Արմենոպուլայի օրենսգիրքը 1345 թ., որը կոչվում է «Վեցմատյան»: Վերջինս կոչված էր լրացնելու Պրոխիրոնը: Նշված բոլոր օրենսգրքերի հիմքերի հիմքն էր հռոմեական մասնավոր և հանրային իրավունքը:

Ռեցեպցիայի բյուզանդական տեսակի համար բնորոշ են հետևյալ գծերը.

✓ հռոմեական իրավունքի հանդեպ, սկզբնաղբյուրների նյութի հիման վրա համակարգման աշխատանքների կատարում (հռոմեական իրավունքի կոնսերվացիա), սակայն առանց հռոմեական իրավունքի՝ որպես այդպիսին սկզբունքների խոր հետազոտմամբ. ռեցեպցիայի (և օրինաստեղծության) փիլիսոփայական հենքի սահմանափակում քրիստոնեական ուսմունքով՝ նրա ուղղափառ (արևելաեվրոպական) մեկնությամբ,

✓ ռեցեպցիայի, սեփական մասնավոր իրավունքի ստեղծման հետ կապված համակարգման, հետազոտական աշխատանքների կազմակերպում «վերևների» նախաձեռնությամբ (միաժամանակ իրավունքի դպրոցների կախվածություն կենտրոնական կայսերական իշխանությունից և կայսերական կառավարման այլ մարմիններից),

✓ ռեցեպցիայի գործընթացի տարածքային սահմանափակում՝ վաղ փուլում՝ ոչ միայն կայսրության սահմաններով, այլև նրա կազմակերպումը ընդամենը 2-3

քաղաքներում (Կոստանդնուպոլիս, Բերիթ),

✓ բովանդակության և օրենսդրական տեխնիկայի տեսակետից ոչ վաստմիասնական կողիֆիկացված ակտի (բազիլիկ) ստեղծումը փաստորեն հանդիսացավ հռոմեական իրավունքի եթե ոչ գործողության ոլորտի, ապա գոնե նրա ուսումնասիրման կրճատման սկիզբ, և այն չբերեց հռոմեական մասնավոր իրավունքի երկրորդական ռեցեպցիայի՝ նույնիսկ բյուզանդական քաղաքակրթության սահմաններում:

Ինչպես նշել ենք, հռոմեական իրավունքի ռեցեպցիան Արևմտաեվրոպական երկրներում սկսվել էր դեռևս 11-12-րդ դարերում:

Հռոմեական իրավական հայեցակարգը օգտագործվում է ֆեոդալական ուժեղ պետական իշխանության գաղափարի հիմնավորման և պրակտիկայում այն գործադրելու հասար: Եվ ըստ այդմ ովքեր շահագրգռված էին կենտրոնական իշխանության ուժեղացմամբ՝ իրենց հենարանը գտնում էին կայսրության ժամանակաշրջանի հռոմեական պետական իրավունքի դրույթներում (օրինակ, «կայսրի կամքը օրենք է» և այլն): Ավատատիրական Եվրոպայի բացարձակ միապետությունները խրախուսում էին հռոմեական իրավունքի ուսումնասիրությունը բարձրագույն դպրոցներում և համալսարաններում: Այն իրավաբանները, որոնք քաջածանոթ էին հռոմեական իրավունքին, նշանակվում էին բարձր պետական պաշտոնների, մտնում էին միապետների մերձավոր անձանց շարքը: Իրավունքի դոկտորները (*doctores juris*) իրենց հասարակական դիրքով հավասարեցվում էին ազնվականության ստորին խավերին, օգտվում էին շոայլ արտոնություններից և այլն:

Հռոմեական իրավունքի ընդօրինակման գործընթացում իրենց արտահայտությունն էին գտնում Վերածննդի ու Ռեֆորմացիայի առաջավոր հասարակական-քաղաքական և մշակութային գաղափարներն ու արժեքները:

Ընդօրինակման գործընթացն ուներ նաև իրավաբանական հիմքեր, որը պայմանավորված էր հռոմեական իրավունքի բարձր մակարդակով, նրանում առկա պատրաստի ձևավորված ինստիտուտներով, հստակ և ճշգրիտ իրավական նորմերով, որոնք համահունչ էին ձևավորվող ապրանքային շրջանառության իրավական կարգավորման պահանջմունքներին:

Ավատատիրական սովորութային իրավունքի նորմերը լինելով բազմաթիվ և

բազմազան, չհամակարգված, նորմատիվ բովանդակությամբ ու կառուցվածքով խառնիխուռն, ի վիճակի չէին համարժեք իրավական-լուծումներ տալու նոր զարգացող ապրանքաշրջանառության պահանջմունքներին: Այդ բոլորը օբյեկտիվ նախադրյալներ էին առաջացնում հռոմեական իրավունքի ընդօրինակման համար:

11-րդ դ. վերջին Իտալիայի Բոլոնիա քաղաքի համալսարանում սկիզբ է դրվում հռոմեական իրավունքի ուսումնասիրությանը: Դասախոսություններ են կարդացվում Corpus juris civilis ժողովածուի մասին, մեկնաբանվում են այդ ժողովածուի իրավանորմերը և դրանով հիմք է դրվում գլոսատորների դպրոցին՝ հայտնի իրավաբան Իրներիի գլխավորությամբ:

12-13-րդ դարերում մեկը մյուսին հաջորդում են անվանի գլոսատորներ Բուլգարուսը, Բասունիոսը, Ազգոն և նրանց մեջ ամենանշանավորը Ակկուրդիոսը (մոտ 1182-1260), որը մեկ ժողովածուով (glossa ordinaria) հավաքեց բոլոր մեկնաբանությունները և հրատարակեց այն: Նրանց օգնությանն էին դիմում դատավորները, իրավաբանները՝ հռոմեական իրավունքի այս կամ այն նորմը կիրառելիս:

Գերմանիայի կայսրերն իրենց իշխանությունը ամրապնդելու և հեղինակությունը բարձրացնելու համար դիմում էին հռոմեական իրավունքի օգնությանը: Եվ պատահական չէ, որ նրանք մշակեցին տեսություն, ըստ որի իրենք համարվում են հռոմեական միապետների իրավահաջորդներ:

Դեռևս 12-րդ դարում Ֆրիդրիխ Առաջին Բարբարոսը հռոմեական իրավունքը հայտարարեց որպես համաշխարհային իրավունք: Գերմանիայի միապետներին հատկապես ընդունելի էր Հռոմեական կայսրության ժամանակաշրջանի իրավաբանների մշակած «Ինչ հարմար է կայսրին, ունի օրենքի ուժ» արտահայտությունը: Դրանով նաև ցանկանում էին հիմնավորել իրենց անկախությունը կաթոլիկ եկեղեցու պապական իշխանությունից:

12-13-րդ դարերում հռոմեական իրավունքի ընդօրինակումը Անգլիայում ուներ որոշակի առանձնահատկություններ: Անգլիայի համալսարաններում նույնպես սկսում են ուսումնասիրել հռոմեական իրավունքը: Հատկապես դրա հետ է կապվում Օքսֆորդի համալսարանի հիմնադրումը: Սակայն Անգլիայի աշխարհագրական դիրքը (մայրցամաքից կտրված լինելը) և կայուն ու ամրավորված տեղական սովորության իրավունքի համակարգը հնարավորություն չտվեցին ծավալուն

ընդօրինակմանը: Այդ է վկայում նաև Անգլիայի խոշորագույն իրավաբան Հենրի Բրակտոնի կազմած ժողովածուն «Անգլիայի օրենքների և սովորույթների» մասին⁷³: Ժողովածուի հիմնական բովանդակությունն է նկարագրել Անգլիայի ընդհանուր իրավունքը (Common Law), որը ձևավորվել էր թագավորական դատարանների որոշումների (նախադեպերի) հիման վրա: Միայն ընդարձակ ներածական մասում խոսվում է հռոմեական իրավունքի ընդհանուր դրույթների մասին, որոնք կարող էին նպաստել իրավական նորմերի առավել ճիշտ ձևավորմանը և իրավական մտքի զարգացմանը:

Հռոմեական իրավունքի գիտագործնական ընդօրինակման շարունակողները 13-14-րդ դարերում հանդիսացան, այսպես կոչված, մեկնիչները կամ ետզլոսատորները: Վերջիններս, ի տարբերություն զլոսատորների, ուսումնասիրում էին ոչ թե հռոմեական իրավունքի բնագրերը սկզբնաղբյուրները, այլ բավարարվում էին միայն զլոսատորների աշխատությունների մեկնաբանությամբ (*glossarum glossas scribunt*), ձգտում էին վերարտադրել հռոմեական իրավունքի ոգին, նրա էությունը և դրա համար ստեղծում էին ընդհանրական հասկացություններ, օրինակ սեփականության ընդհանուր հասկացությունը և այլն: Այս դպրոցի երկրորդ կարևոր առանձնահատկությունը կայանում էր հետևյալում հռոմեական իրավունքի ենթարկումը բնական իրավունքի *juris naturale*) պահանջներին: Ըստ այդ դպրոցի ներկայացուցիչների (Բարտոլոուս, Բալդո և այլք) պոզիտիվ իրավունքը պետք է բխի և համապատասխանի բնական իրավունքին:

16-րդ դարում Ֆրանսիայում ձևավորված հումանիստների դպրոցը անտիկ մշակույթի հետ միասին ուսումնասիրում էր նաև հռոմեական իրավունքը: Այդ դպրոցի նշանավոր գիտնականներից էին Կույացիուսը (*Cujacius*) և Դոնելիուսը (*Donelius*): Հումանիստների ուսումնասիրությունները նույնպես խթան հանդիսացան հռոմեական իրավունքի հետագա փոխառման և ուսումնասիրման համար: 17-րդ դարից սկսած, առևտրա-արդյունաբերական տնտեսության զարգացումը խթան հանդիսացավ հռոմեական իրավունքի տարածմանը և ընդօրինակմանը:

18-րդ դարից սկսվում է հռոմեական իրավունքի զուտ գիտական հետազոտությունը այսպես կոչված իրավունքի պատմական դպրոցի ներկայացուցիչների (Գ. Հուգո, Ֆ. Կ. Սավինի) կողմից: Իրավունքի ուսումնասիրման

⁷³ **Stu Bracton H.** Bracton on the laws and customs of England. V. 1-4. - Camb. Mass., 1968, 1977.

այս նոր դպրոցի ներկայացուցիչների համոզմամբ, իսկական իրավական համակարգ կարող է կառուցվել միայն հռոմեական իրավունքի հիմքի վրա, իսկ իրավական գլխավոր ինստիտուտների միակ ճիշտ իմացությունը տալիս է հռոմեական իրավական մշակույթը: Սակայն այդ դպրոցի ներկայացուցիչների աշխատություններում տեղ գտած հասկացությունները խորթ էին հռոմեական դասական և ետդասական իրավունքին, դրանք մշակված էին նրանց սուբյեկտիվ պատմական-տրամաբանական դատողությունների հիման վրա, որոնք ընդունելի էին փիլիսոփայական առումով, սակայն աննշան էր կապը բուն հռոմեական իրավունքի հետ: Դրա հետ մեկտեղ, այդ դպրոցի կարգախոսը «հետ դեպի աղբյուրները», հիմք դրեց հռոմեական իրավունքի պատմության և դոգմաների գիտական հետազոտությանը, որը դարձավ ընդհանուր իրավագիտության ուսումնասիրության բաղկացուցիչ մասը:

17-19-րդ դարերի իրավագիտությունը, որը բարձր էր գնահատում հռոմեական իրավունքի հաստատուն արժեքները, ինչպես նաև զարգացող առևտրատնտեսական հարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտությունը, զգալի ազդեցություն ունեցան հռոմեական իրավունքի ընդօրինակման և եվրոպական միջարք երկրների իրավաստեղծ գործունեության վրա: Այս տեսակետից հռոմեական իրավունքի ընդօրինակման դասական օրինակներ են համարվում Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգիրքը (1804), Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրքը (1896)⁷⁴: Այս օրենսգրքերն իրենց հերթին զգալի ազդեցություն ունեցան հետագայում քաղաքացիական օրենսգրքերի մշակման վրա:

Ռեցեպցիայի արևմտաեվրոպական մայրցամաքային տեսակը բնորոշվում է հետևյալ հատկանիշներով.

✓ ռեցեպցիայի ընդհանուր գործընթացի երկարաժամկետությամբ, որի ընթացքում ամեն նոր պարույրին կատարվում է նյութի կուտակում, ավելի բազմազան են դառնում ձևերը, խորանում հռոմեական իրավունքի էության ըմբռնումը,

✓ հռոմեական մասնավոր իրավունքի տառի և ոգու հիմնավոր տեսական

⁷⁴ Հռոմեական իրավունքի ազդեցությունը Ֆրանսիայի և Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքերի վրա մանրամասն տե՛ս Цвайгерт К., Кетц Х. Введение в сравнительное правоведение в сфере частного права. В 2-х тт., Т. 1. Основы. Пер. с нем. - М.: «Международ. отношения», 2000, с. 118-183, 203-240; Савельев В. А. Германское гражд. Уложение - М., 1983.

հետազոտություններով (բառարաններ, մեկնաբանություններ, բանասիրական, պատմական և այլ դպրոցներ),

✓ փիլիսոփայական հենքի առկայություն (ուսմունք բնական իրավունքի, քաղաքացիական հասարակության, իրավական պետության մասին և այլն),

✓ ընդ այնմ ոչ միայն մոնիստական փիլիսոփայական գաղափարի, այլև անտիկ և այդ դարաշրջանների փիլիսոփայական ժառանգության կիրառում),

✓ ռեցեպցիայի ապրանքային շրջանառության անհետաձգելի պահանջմունքների պայմանավորվածությամբ, այսինքն նրա անցկացումը «ներքինների» նախաձեռնությամբ,

✓ տարբեր երկրներում (իտալական քաղաք-պետություններ, Ֆրանսիա, Գերմանիա, Նիդերլանդներ) ռեցեպցիոն գործընթացների զուգահեռությամբ,

✓ ինչպես տարբեր ժամանակաշրջաններում, այնպես էլ միաժամանակ կիրառվող ռեցեպցիայի տեսակների բազմազանություն,

✓ հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիան մինչև նրա տրամաբանական ավարտին հասցնելը (նրա հենքի վրա քաղաքացիական օրենսգրքերի, սահմանադրությունների, ժողովածուների ստեղծում),

✓ հռոմեական մասնավոր իրավունքի հիմքի վրա Արևմտյան Եվրոպայի տարբեր երկրներում և տարածաշրջաններում կատարված կողիֆիկացիաների հիմնարարությամբ, ինչն ապահովել է նրանց պիտանիությունը երկրորդական, ածանցավոր ռեցեպցիաների համար:

Հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիայի անգլոսաքսոնական տեսակը, թերևս, ռեցեպցիայի առանձնահատուկ ձևն է:

Բոլորի կողմից ընդունված է, համարյա քրեստոմատիական է դարձել այն կարծիքը, թե Անգլիան խույս է տվել հռոմեական իրավունքի ռեցեպցիայից և ուրույն ճանապարհով է շարժվում դեպի համաեվրոպական ինտեգրացում՝ ունենալով այնուամենայնիվ իրավունքի յուրահատուկ համակարգ:

Բերելով այս կարծիքը, սովորաբար նշում են, որ սկզբնական ժամանակաշրջանում հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիան այս երկրներում ընթանում էր առանց էական շեղումների: 12-րդ դ. Անգլիայում առկա էր մեծ հետաքրքրություն հռոմեական իրավունքի հանդեպ, մայրցամաքային Եվրոպայից դասախոսներ էին հրավիրում, ուսումնասիրում էին այն

համալսարաններում և այլն: Սակայն հետո դատական պրակտիկայում հռոմեական իրավունքի կիրառման հակառակորդները հաղթանակ տարան, և նախապատվությունը տրվեց անգլիական սովորական (ընդհանուր) իրավունքին: Շարադրելով իրադարձությունների այսպիսի ընթացքը՝ Ա. Ա. Կոսարևը, օրինակ, վկայակոչում է անգլիական իրավունքի յուրահատկությունը պայմանավորած այնպիսի երկարատև գործոններ, ինչպիսիք են երկրի աշխարհագրական համեմատական կտրվածությունը մայրցամաքից, պատմական ավանդությունը, քաղաքային ու մշակութային զարգացման առանձնահատկությունները⁷⁵: Սակայն այդ փաստարկների նույնիսկ թուուցիկ քննությունը ցույց է տալիս նրանց անհամոզիչ լինելը: Միթե՞ արևմտաեվրոպական այլ երկրներ, որտեղ ռեցիպացվել է հռոմեական մասնավոր իրավունքը, զուրկ էին պատմական ավանդություններից կամ մշակույթի ուրույնությունից: Թե՞ նրանք նվազ հայրենասեր էին: Կամ Շոտլանդիան, որտեղ ռեցեպցիան կատարվել է «դասական» տեսակով, մի՞թե ավելի մոտ էր Հռոմին, քան Անգլիան:

Կարծում են, որ Մեծբրիտանիայի կողմից հռոմեական իրավունքի չընդունման թեզը հանդիսանում է ռեցեպցիայի պարզացված հասկացության հետևանք, ռեցեպցիայի հասկացության հանգեցմանը հռոմեական իրավունքի սուսկ գործնական, անմիջական կիրառման ինչպես դա տեղի է ունեցել միջնադարյան Գերմանիայում:

Ինչպես արդեն ասվել է վերևում, դրա հետ մեկտեղ ռեցեպցիան նախևառաջ հռոմեական իրավունքի ոգու, նրա հիմնական դրույթների, գաղափարների և սկզբունքների ընկալում է: Բացի այդ, գոյություն ունեն ռեցեպցիայի բազմաթիվ ձևեր, որոնք իրագործվում են քաղաքակրթական, պատմական և աշխարհագրական կոնկրետ առանձնահատկություններից ելնելով:

Հիմնվելով հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիայի հենց այդպիսի ըմբռնման վրա, մենք իրավ ենք կարծելու, որ այն տեղի է ունեցել նաև այդ երկրում (տարածաշրջանում), թեև (ավանդական մոտեցման առումով) ոչ այնքան սովորական ձևերով: Ոչ ուղղակիորեն այս տեսակետն աջակցություն է գտնում նաև կոմպարատիվիստների մոտ, որոնք նշում են, թե «որոշ առումներով անգլիական իրավունքն ավելի մոտ է հռոմեական իրավունքին, քան ռոմանագերմանականը: Նրա զարգացումը իր հիմնական գծերում վերարտադրել է վերջինիս զարգացումը,

⁷⁵ См. у Косарев А. И. Римское право. - М., 1986; Он же. Римское право.- М., 1998.

թեն միանգամայն յուրահատուկ ձևով: Դրա մասին են վկայում հայցերի տեսակների առաջնակարգ նշանակությունը, իրավական նորմի կազուիստիկ բնույթը, ընդհանուր բանաձևերի և համակարգման արհամարհումը»⁷⁶:

Հետաքրքիր է, որ անգլիացի հետազոտողները Անգլիայում գործող իրավունքի հիմնական աղբյուրների շարքում դասում են օրենսդրությունը, դատական նախադեպը և Եվրոմիության ակտերը, իսկ լրացուցիչ աղբյուրներն են սովորույթը, հռոմեական իրավունքը (իմիջիայլոց, հռոմեական իրավունքի հատուկ ամբիոնները հիմնվել են դեռևս թագավոր Հենրիխ VIII հողմից 16-րդ դարում), այսինքն այն ապահովում է իրավաբանական աշխարհայեցողության ձևավորումը⁷⁷:

Վերոհիշյալը հաշվի առնելով՝ կարելի է խոսել հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիայի առանձնահատուկ՝ անգլոսաքսոնական տեսակի մասին, որի էությունը հռոմեական մասնավոր իրավունքի ոգու, իրավաստեղծական մոտեցման, վերջապես, պոզիտիվ իրավունքի նորմերի ստեղծման հայեցակետի ընկալումն ու ըմբռնումն է: Ռեցեպցիայի այդ տեսակի գոյության արդյունքը եղավ առաջին հերթին այն, որ անգլիական իրավունքի զարգացումն իր հիմնական գծերով արտացոլել է հռոմեական իրավունքի զարգացումը:

Նկատի ունենալով այս հանգամանքը՝ կարելի է տարանջատել մասնավոր իրավունքի ենթահամակարգերը.

✓ անգլոսաքսոնականը, որը ծագել և զարգացել է որպես արևմտաեվրոպական քաղաքակրթության տարր իր առանձնահատկություններով, որոնք պայմանավորված են այս համակարգի վրա հռոմեական իրավունքի և անտիկ աշխարհի արժեքների ազդեցության բնույթով,

✓ արևմտաեվրոպական քաղաքակրթության շրջանակներում գոյություն ունեցող մասնավոր իրավունքի ռոմանական և գերմանական ենթահամակարգերը, որոնք ձևավորվել են ազգային իրավունքի և հռոմեական մասնավոր իրավունքի փոխգործողության ճանապարհով:

Ըստ այդմ, այս և այն ենթահամակարգերի առանձնահատկությունները պայմանավորված են ռեցեպցիայի այս կամ այն տեսակի գերակշռումով: Հատկապես, գերմանական ենթահամակարգի դրույթները հռոմեական իրավունքի

⁷⁶ Давид Р., Жоффре-Спинози К. Основные правовые системы современности.- М., 1996, с. 29.

⁷⁷ St u Правовая система Англии.- М., 2000, с. 128-129.

տեսական առումների բժախնդիր մշակման արդյունքում արտաքնապես ավելի մոտ են թվում հռոմեական իրավունքին: Սակայն գերմանական քաղաքացիական սահմանադրությունը այլ կառուցվածք ունի, մասնավոր անձանց իրավունքներն այստեղ ավելի սահմանափակ են, պետության միջամտության աստիճանը քաղաքացիական-իրավական հարաբերությունների մեջ ավելի մեծ է:

Ինչ վերաբերում է ռոմանական ենթահամակարգին, ապա այն և՛ կառուցվածքորեն, և՛ էությամբ առավել մոտ է հռոմեական մասնավոր իրավունքին:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիան, անկախ իր տեսակներից և ձևերից, հանդիսացել է եվրոպական երկրների մեծ մասի մասնավոր իրավունքի ստեղծման հենք և ծառայում է որպես ժամանակակից Եվրոպայի մասնավոր իրավունքի ստեղծման հիմք:

Սակայն չպետք է կարծել, թե հռոմեական իրավունքի ընդօրինակումը Եվրոպայում ունեցել է միայն կողմնակիցներ, համախոհներ: Ընդհակառակը, այդ գործընթացն ընթանում էր ավատատիրական հասարակական կյանքի մի շարք կողմերի հետ խիստ հակասություններով: Այն իրավունքը, որ պարունակվում էր Հուստինիանոսի օրենքների ժողովածուի մեջ (վերջինս հանդիսանում էր ընդօրինակման հիմնական աղբյուրը), չափազանց բարդ էր և, հետևաբար, գործնական տեսանկյունից նվազ կիրառելի, քանզի ֆեոդալական ոչ զարգացած բնատնտեսությունը կարգավորվում էր տեղական սովորույթային իրավունքի նորմերով: Եթե հռոմեական զարգացած իրավական համակարգը խորթ էր ֆեոդալական հասարակության լայն շրջանակներին (գյուղացիությանը, արհեստավորներին, առևտրականներին և այլն), ապա իրենց տեղական սովորույթային նորմերը, որոնք ձևավորվել էին դարերի ընթացքում, պարզունակ և մատչելի էին նրանց համար: Սրան էլ որ ավելացնենք այն հանգամանքը, որ հռոմեական իրավունքի իմացության մենաշնորհը կենտրոնացված էր իրավաբանների նեղ շրջանակում և որոնք իրավակիրառ պրակտիկայում թույլ էին տալիս բազմաթիվ չարաշահումներ, ապա բազմության կողմից համակրանքը հռոմեական իրավունքի և այն գործադրողների նկատմամբ ավելի էր սրվում: Եվ պատահական չէ, որ այն ժամանակվա ժողովրդական բանահյուսությունը խոսում էր երեք կարգի թալանչիների մասին ավազակների, վաճառականների և իրավաբանների:

Այս դիրքերից հռոմեական իրավունքը քննադատում էին նաև լուսավորության

և ռեֆորմացիայի ներկայացուցիչները: Այսպես, գյուղացիական պատերազմների շրջանում, 1525 թվականին, ռեֆորմացիայի նախագծերից մեկում պահանջվում էր, որպեսզի «իրավունքի դոկտորներին արգելեն դատարանում, որևէ իշխանական կամ այլ խորհուրդներում հանդես գալուն: Այսուհետ իրավունքի դոկտորները, - նշված է այդ նախագծում, - երբեք չպետք է խոսեն դատարանի առաջ, չպետք է գրեն և խորհուրդներ տան դատական գործերի վերաբերյալ: Ժողովրդին պետք է վերադարձվի նրա հին հայրենական իրավունքը»:

Այսպիսով, վերոշարադրյալից կարելի է ենթադրել, որ հռոմեական իրավունքի ընդօրինակումը չի ընթացել հարթ ճանապարհով, այն ունեցել է ինչպես կողմնակիցներ, այնպես էլ հակառակորդներ:

Գլուխ 6

Հունա-հռոմեական (բյուզանդական) իրավունքի աղերսը հայ իրավունքի հետ

Հունա-հռոմեական (բյուզանդական) զարգացած իրավական մշակույթը որոշակի ազդեցություն է ունեցել նաև հայ միջնադարյան իրավունքի վրա, հատկապես հռոմեական արևելյան կայսրության օրենսդրությունը: Այս առումով առանձնանում է Խավրյան հարստության ժամանակաշրջանում ընդունված իրավական ակտերը, որոնք հետագայում թարգմանվել և խմբագրվել են հայերեն և որոշակի գործնական նշանակություն են ունեցել և՛ պատմական Հայաստանում և՛ Կիլիկյան հայկական թագավորությունում:

Հունա-հռոմեական իրավունքը միջնորդավորված, ուղղակի հունա-բյուզանդական իրավունքի միջոցով, որոշակի ազդեցություն է ունեցել նաև հայ իրավունքի վրա⁷⁸:

⁷⁸ Հայ իրավունքի վրա օտար իրավունքի ազդեցության և ընդօրինակման (ռեցեպցիայի) մասին տե՛ս Ն. Կարապետ վ. Ամառունի, «Ազդեցություն Յուստինեան-հռոմեական օրինաց հայկական իրավունքի վրայ եւ աստիճան այդ ազդեցութեանն // «Բազմավէպ», 1935, էջ 131-188; Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմությունը, հատոր 1, էջ 54-73; Bibliographie zur Rezeption des byzantinischen Rechts im alten Russland sowie zur Geschichte des armenischen und georgischen Rechts Unter Mitwirkung von Azat Bozozjan, Igor Gourov, Sulchan Goginava, Kirill Maksimovic und Jaroslav Scapov zusammengestellt von Ludwig Bargmann und Hubert Kaufhold, Frankfurt am Main, 1992, s. 91-187; А. Г. Сукиасян. Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма.- Ереван, 1963, с. 429-449; Նույնի,

Այսպես, բյուզանդական իրավունքը հարկադրաբար գործել է Հուստինիանոսի ժամանակաշրջանի Հայաստանում և մասամբ՝ Բագրատունիների օրոք⁷⁹:

Բյուզանդական իրավունքը նշանակալի ազդեցություն ունեցավ Կիլիկյան հայկական պետությունում, որը մինչև հայկական պետության հաստատվելը, գրեթե հարյուր քսան տարի շարունակ Բյուզանդական կայսրության պրովինցիա էր: Բյուզանդական փոխառնված իրավունքը Կիլիկիայում պահպանվեց նաև Ռուֆինյանների օրոք: Կիլիկիայի նշանավոր եկեղեցական և քաղաքական գործիչ Ներսես Լամբրոնացին 1196 թվականին գործնական նպատակներով հունարենից թարգմանեց «Լևոնի և Կոստանդինի օրենքները», այսինքն՝ «Էկլոգա»-ն և «Ջինվորական օրենքները» ու դրանց հիման վրա իր կազմած ժողովածուն նվիրեց նրանց, ովքեր սիրում են ղեկավարվել օրենքներով⁸⁰: Հավանաբար նույն հեղինակի թարգմանությամբ մեզ են հասել կայսրուհի Իրինայի (797-802) «Վկաների և վկայությունների մասին օրենքը, «Պրոխիրոն»-ից մի շարք հողվածներ ազգակցության աստիճանների մասին և այլ օրենքներ:

Բռնության եղանակով հռոմեական իրավունքը սկսեց տարածվել 4-րդ դարից սկսած և հատկապես Հուստինիանոս կայսեր օրոք (527-565): Հետամտելով քաղաքական նպատակներ, Հուստինիանոս կայսրը հրապարակեց մի շարք օրենքներ («Նովելներ» և «էդիկտներ») հռոմեական իրավունքը գործադրելու համար: Նշենք դրանցից մի քանիսը. 528 թ. դեկրետով վերացվում է նախարարների զինվորական իշխանությունը և այն կենտրոնանում է կայսրի կողմից նշանակվող զինվորական հրամանատարի (magister militum) ձեռքում: 536 թվականի մարտի 18-ին հրապարակվեց 31-րդ նովելը «Հայաստանի չորս կառավարիչների (արքունտներ) նշանակման մասին», որի համաձայն Հայաստանը բաժանվում է չորս նահանգների (պրովինցիաների)⁸¹: «Այս ակտերով,- նշում է պրոֆ. Ի. Սամվելյանը,- Արևմտյան Հայաստանը մտնում էր հռոմեական իրավունքի և օրինադրության շրջանակների մեջ

Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 182-201:

⁷⁹ Հայաստանում Բյուզանդական իրավունքի ազդեցության մասին մանրամասն տե՛ս Խաչիկ Սամուելյան, «Հայ հին իրավունքի պատմություն», հտ. 1, Երևան, 1939, էջ 63-73; Սուքիասյան Ս.Գ., «Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն», Երևան, 1978, էջ 184-186:

⁸⁰ Տե՛ս ներսես Լամբրոնացի, Քաղաքային օրենք, Փարիզ, 1907, էջ 6: 72

⁸¹ Նշված նովելների հայերեն և ռուսերեն թարգմանությունը տե՛ս Նիկողայոս Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1937, էջ 295-311; Հակոբ Սանանդյան, Երկեր, հատ. Դ, Երևան, 1981, էջ 483-497; Վ. Կ. Իսկանյան, Հայ-բյուզանդական հարաբերությունները 4-7-րդ դդ., Երևան, 1991, էջ 184-187:

և վերացվում էր տեղում գործող դարավոր նախարարական իրավունքը»⁸²:

Հուստինիանոսի 535 թ. «Հայ ժառանգական իրավունքի մասին» և 536 թ. «Հայերի մասին, որ նրանք այսուհետև ամեն բանում ղեկավարվեն հռոմեական օրենքներով» նովելներով Հայաստանում միակ գործող իրավունքը ճանաչվում է հռոմեականը:

Հուստինիանոսի նովելները քաղաքական նպատակներ էին հետապնդում և, ինչ խոսք, նա բոլորովին էլ մտահոգված չէր ժառանգական հարցում հայ կանանց «իրավահավասարության» հիմնախնդրով: Խնդրո առարկայի քաղաքական, շարժառիթների մասին նշել են մեծանուն գիտնականներ Ն. Ադոնցը և Հ.Մանանդյանը: Ըստ Ն. Ադոնցի, Հուստինիանոսի միջոցառումներն ուղղված էին նախարարական վարչակարգը խարխլելուն, նրանց կալվածքներն ու հողային ամբողջականությունը մասնատելուն⁸³: Հ. Մանանդյանը ընդունելով նովելների քաղաքական նպատակաուղղվածությունը, մինևույն ժամանակ նշում է, որ նովելները տոգորված են եղել բյուզանդացիների կենսական շահերով, որոնք խառնամուսնակալ կապի մեջ էին մտնում հայուհիների հետ և այդ ձևով փորձում էին տիրանալ կամ ձեռք է բերել հայ նախարարական տոհմային կալվածքները⁸⁴: Խնդրո ժամանակաշրջանում «հայկական նախարարությունը, որ բովանդակությամբ ֆեոդալական էր, իսկ էությամբ տոհմային, կանանց կամ կոգնատական գծի նկատմամբ բռնեց այնպիսի դիրք, որ բխում էր նրա էությունից, այսինքն՝ հողատիրության իրավունքը չպետք է տարածվեր կանանց վրա»⁸⁵:

Ուրեմն, վերևից իջեցված օտարածին հրահանգ-նովելը չէր կարող միանգամից և, այդպես էլ չկարողացավ, ամբողջովին խարխլել նախարարական կարգերը, ժառանգական սովորութական իրավունքը, քանզի նշված կարգը Հայաստանում ձևավորվել և սովորութական իրավունքի ուժով ամրապնդվել էր բազմադարյա պատմական զարգացման ճանապարհով: Եվ ինչպես պնդում է ակադ. Հ.Մանանդյանը, «Հռոմեական իրավունքը ունեցել է ազդեցություն հայերի ժառանգական իրավունքի մի քանի երկրորդական երևույթների վրա, ժառանգման հիմնական սկզբունքը նրանց մոտ մնացել էր համարյա անդրդվելի»⁸⁶:

⁸² Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 223:

⁸³ Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 65:

⁸⁴ Հ. Մանանդյան, նույն տեղը, էջ 495-496:

⁸⁵ Ն. Ադոնց, նույն տեղը, էջ 222: Համանման կարծիքի է նաև Հ. Մանանդյանը, նույն տեղը, էջ 494:

⁸⁶ Հ. Մանանդյան, նույն տեղը, էջ 497:

Ինչպես նշում է հայ իրավունքի պատմության խոշորագույն մասնագետ Խ.Սամվելյանը, Բագրատունյաց թագավորության օրոք (887-1045) հունա-բյուզանդական իրավունքը «Բյուզանդիայի սահմաններից սկսում է թափանցել Հայաստան և հետզհետե դառնում է ռեցեպցիայի առարկա»⁸⁷: Այդ փոխառության (ռեցեպցիայի) առարկա են հանդիսանում Բյուզանդիայի Իսավրյան թագավորների (717-867 թթ.) օրենսդրական ակտերը⁸⁸:

Ահա այդ Իսավրյան հունաբյուզանդական իրավունքն է մուտք գործում Հայաստան, հետագայում, Կիլիկիայի հայկական պետություն և, հետևաբար, դառնում նաև հայ իրավունքի աղբյուր: Օրենսգրքերի հայկական ձեռագրերում առայժմ հայտնաբերված են հետևյալ հունա-բյուզանդական օրենքների ժողովածուները.

1. «Օրենք յաղթող թագաւորացն Կոստանդիանոսի, Թէոդորոսի և Լեւո-նի» կամ «Ասորա-հռոմեական օրենսգիրք»:

2. «Ընտրութիւն հաւատոյ արիւնացն քաղաքական Լևոնի և Կոստանդեայ իմաստուն և բարեպաշտ թագաւորացն, զոր և մեծն Յուստինիանոս նորոգեաց զկարգն ի բարեպաշտութիւն»:

3. «Արիւնադրութիւն Եռինեայ թագուհւոյ, մօր Կոստանդեայ վասնէ զգուշանալոյ երդմանց ըստ պատուական Տեառն հրամանի»:

4. «Համառաւտ ժողովումն արիւնաց վերստին»:

5. «Վասն զինուորաց սահմանադրութիւն»:
Հայագիտությունը վաղուց է ապացուցել, որ վերոնշված օրենքների թարգմանության հեղինակն է Ներսես Լամբրոնացին⁸⁹:

Նկատի ունենալով վերոնշված իրավական հուշարձանների անմիջական աղբյուրը հայ իրավունքի հետ, նպատակահարմար ենք համարում հա-մառոտակի վերլուծել դրանց բովանդակությունը:

Ա. Ասորական կամ Ասորա-հռոմեական կոչված դատաստանագրքի մասին, որ ձեռագրերում կրում է սովորաբար. «Օրենք յաղթող թագաւորացն Կոստանդիանոսի, Թօդորոսը և Լևոնի»⁹⁰ և նման խորագրեր, հայագիտության մեջ առաջին

⁸⁷ Պրոֆ. Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմությունը, հատոր 1, Երևան, 1939, էջ 68

⁸⁸ Տե՛ս Կուլտուրա Византии: вторая половина VII-XII вв.- М., 1989, с. 216-240.

⁸⁹ Տե՛ս Գր. Հակոբյան, Ներսես Լամբրոնացի, էջ 318-328:

⁹⁰ Syrisch-Romisches Rechtsbuch, aus dem funften Sahrhundert von dr. Karl Georg Bruns und dr. Eduard Sachau. Leipzig, 1880, այստեղ՝ ասորերեն, արաբերեն և հայերեն համեմատական տեքստերը,

տեղեկությունը տրվում է մի հիշատակարանի հրատարակությամբ, որ տպագրվել է «Հայաստան» լրագրում 1847 թ., քաղված մի ձեռագրից, որ պարունակել է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը և Ներսես Լամբրոնացու թարգմանած օրենքները⁹¹: 1848թ. անդրադառնալով այդ հիշատակարանին, Ղ. Ալիշանը ցույց է տվել, որ նրա մի մասը Մխիթար Գոշի Դատաստանագրքի հիշատակարանն է, մյուսը՝ Ներսես Լամբրոնացունը: Ձեռագրերի ուսումնասիրության և Լամբրոնացու հիշատակարանի հիման վրա Ալիշանը եզրակացնում է. «Լամբրոնացույն թարգմանութիւնն է, նախ Կոստանդնի և Լևոնի անունով հիշված օրենքները, որոնք Հուստինիանոսն ալ հաստատած է, և աւ է 152 գլուխ բան. Բ. այն օրենքներուն համառոտ բովանդակությունը 85 գլուխ բան. Գ. Լևոնի և Կոստանդյա կայսերաց քաղաքական օրենքներ են ընտրած և համառոտած կանոնները, այս գրվածքին մասերը տիտղոս կըսվին... Դ. Նույն գրվածքեն կամ թե ուրիշ գրվածքե թարգմաներ է Հուստինիանոս կայսեր և Եռինե թագուհվոյն օրենքներն ալ. Ե. Զինվորաց օրենքը կամ սահմանադրությունը, 56 գլուխ բան, որ նույն քաղաքական օրինաց գրքեն է. Զ. Մովսիսի օրենքները, որ հունարեն գատ հավաքմունք եղած ըլլալով, Լամբրոնացին ալ ազատ թարգմաներ է»⁹²:

Սրանցից առաջինը «Կոստանդինի և Լևոնի անունով հիշված օրենքները, 152 գլուխ բան» է հենց Ասորա-հռոմեական դատաստանագիրքը⁹³:

Դոկտոր Բրունսը և Զախաուն, որ առաջին անգամ 1880 թ. հրատարակել են քննարկվող Դատաստանագիրքը («Syrisch-romisches Rechtsbuch», Leipzig, 1880), այն համարում էին ասորա-հռոմեական և, այսպես կոչված, արիական իրավունքի արտահայտություն:

Գերմանացի իրավագետներ Լինգենթալը, Մյուլլերը, Յոհլերը, Կարայը, Ապտովիտցերը գտնում էին, որ այն փոքրասիական, ասորական է և արտահայտություն սեմական իրավունքի:

Ռուս գիտնականներից Մ. Կովալևսկին և Ա.Վ. Յուշկովը սխալմամբ կարծում

գերմաներեն թարգմանությամբ և ուսումնասիրությամբ: Նան՝ «Քաղաքային օրենք Ներսիսի Լամբրոնացույ», հրատարակեց Կ. Բասմաջյան, Պարիս, 1907; Մ. Ղլտճյանց, Ասորական դատաստանագիրք, 1917:

⁹¹ Տե՛ս էմ. Ա. Պիվագյան, Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» բանասիրական քննություն, Երևան, 1987, էջ 172-173

⁹² «Բագմավեյ», 1848, էջ 41-42: Ալիշանը «Միսուանե»-ում նույնպես հաստատում է այս թարգմանությունների Լամբրոնացունը լինելը («Միսուան», Վենետիկ, 1885, էջ 91, ծան. 7):

⁹³ Հայագիտության մեջ «Դատաստանագրքի» վերաբերյալ տարբեր կարծիքների և տեսակետների քննական վերլուծությունը տես էմ. Ա. Պիվագյան, նշված աշխատ., էջ 174-207:

էին, թե Ասորա-հռոմեական «Դատաստանագիրքը» հայկական է: Այստեղից էլ նրանք հանգեցին մի ամբողջ շարք սխալ եզրակացությունների Գոշի Դատաստանագրքի և հայ իրավունքի վերաբերյալ: Այդ բանը տեղի է ունեցել մի թյուրիմացության հետևանքով: Գոշի Դատաստանագրքի թարգմանության հեղինակները հայերենից վրացերենի են թարգմանել նաև Ասորա-հռոմեական դատաստանագիրքը և այդ բոլորը մտցրել Վախթանգ 6-րդ թագավորի օրենքների ժողովածուի մեջ սխալմամբ վերնագրելով «Հայկական օրենքներ» (1-430 հոդված), մինչդեռ առաջին 150 հոդվածները ասորա-հռոմեական օրենքներ են, այլ ոչ թե հայկական: Ընդ որում, քանի որ Վախթանգ 6-րդ թագավորի օրենքների ռուսերեն թարգմանությունը կատարվել է վրացերենից, հետևաբար նշված սխալը տեղ է գտել նաև ռուսերեն թարգմանության և, այնուհետև, իրավաբանական գրականության մեջ:

Տարբեր այս կարծիքները անհիմն չեն. բանն այն է, որ այդ «Դատաստանագրքում» կան թե՛ փոքրասիական (սեմական) ժողովուրդների և թե՛ հունա-բյուզանդական իրավունքի նորմեր: Ըստ ռուս հայտնի իրավաբան Ի.Պոկրովսկու, նշված «Դատաստանագիրքը» կազմված է հռոմեական իրավունքի զարգացման հետդասական ժամանակաշրջանում մոտավորապես 478 թվականին և լայն տարածում է գտել նաև Ասիայում Հայաստանից մինչև Եգիպտոս⁹⁴:

Դատաստանագիրքը հիմնականում քաղաքացիական օրենսգիրք է և հոդվածների ճնշող մեծամասնությունը նվիրված է գույքային հարաբերություններին: Դատաստանագրքի համակարգը հետևյալն է. առուծախի պայմանագրեր, քաղաքացիական գործարքների վաղեմություն, պարտավորություններ և գրավի իրավունք, ժառանգական իրավունք, ստրկատիրական իրավունք, հոգևորականների, բժիշկների և գիտնականների ապահարկության և այլ գույքային արտոնություններ, ամուսնություն և ապահարգան, ամուսինների գույքային հարաբերություններ, ծնողների և զավակների փոխհարաբերություններ, քրեական և դատավարական իրավունք:

Բ. «Ընտրութիւն հաւատոյ աւրինացն քաղաքական Լևոնի և Կոստան-դեպ իմաստուն և բարեպաշտ թագւստրացն, զոր և մեծն Յուստինիւսնոս նո-րոգեաց զկարգն ուղղեալ ի բարեպաշտութիւն»: Սա Իսավրյան Լևոնի և Կոստանդինի օրենքների ժողովածուն է, այսինքն «Էկլոգա»-ն (հունարեն ծաղկաքաղ), որը Ներսէս

⁹⁴ См. у Покровский И. Лекции по истории римского права.- СПб., 1907, с. 96.

Լամբրոնացին թարգմանեց 1196 թվականին գործնա-կան-կիրառական նպատակով: «Էկլոգա»-ն հունա-բյուզանդական օրենքների ժողովածու է, որը կազմվել է 726 կամ 741 թվականներին: Այն պարունակում է օրենքների յուրահատուկ ընտրանի քաղված Հուստինիանոսի «Corpus juris civilis» ժողովածուից⁹⁵: Այս ժողովածուի բնագիրը քաղկացած է 18 տիտղոսից, որոնք ընդգրկում են ամուսնա-ընտանեկան, նվիրատվության, ժառանգական իրավունքի, որդեգրման և խնամակալության, ստրուկների իրավական դրության, առանձին պայմանագրերի (առուվաճառքի, վարձույթի, վարձակալության, ընկերության, փոխատվության), ինչպես նաև հանցագործության և պատժի վերաբերյալ նորմեր: «Էկլոգա»-ում ամբողջությամբ արտահայտվել է քրիստոնեական կրոնի և բարոյականության ազդեցությունը: Եվ պատահական չէ, որ մի շարք իրավունորմերի բովանդակությունը հիմնավորելու համար, հեղինակները բազմիցս օգտագործել են «Ավետարանի» համապատասխան դրույթները: Այդ ցայտուն կերպով դրսևորվել է հատկապես ամուսնա-ընտանեկան նորմերը սահմանելիս: Այսպես, քրիստոնեական կրոնի և բարոյականության ազդեցության շնորհիվ ամուսնական տարիքը տղաների համար սահմանվեց 15, իսկ աղջիկների համար 13 տարեկան հասակը և միայն ամուսնացող զույգերի փոխադարձ համաձայնությամբ: Կրճատվեց նաև ամուսնալուծության հիմքերը: Կինը, ի տարբերություն հռոմեական դասական իրավունքի, ընտանիքում ձեռք բերեց պատվավոր դիրք: «Էկլոգան» արտահայտում էր տղամարդու և կնոջ գույքային իրավահավասարության շեշտված միտում: Այսպես, օրինակ, կնոջ գույքն ու ունեցվածքը (օժիտը, նվիրատվությունները, ժառանգությունը) այլևս չէր համարվում ամուսնու սեփականություն, այլ վերջինս միայն կառավարում էր այն: Ապահարզանի դեպքում դրանք վերադարձվում էին կնոջը, որպես սեփականություն:

Հետագայում «Էկլոգան» հետզհետե լրացվում է զանազան հավելվածներով և այն գործում է մինչև մակեդոնյան կայսրերի օրենսդրական գործունեության ծավալումը (9-րդ դ. երկրորդ կեսը):

Գ. Լամբրոնացու մյուս թարգմանությունն է. «Առինադոութին Եռինեայ թագուհույ, մօր Կոստանդեայ, վասն զգուշանալոյ երդմանց ըստ պատուական Տեառն

⁹⁵ Ст и Медведев И.П. Развитие правовой науки Византии. Культура Византии.- М., 1989, с. 216; История государства и права зарубежных стран. Учебник для вузов. Часть 1.- М., 1996, с. 362. 76

հրամանի»⁹⁶, որը թարգմանությունն է կայսրուհի Իրինայի (797-802) «Detestium juramento» «Վկաների և վկայությունների մասին» նովելը:

Դ. «Համառատ ժողովումն արինաց վերստինե՝ բաղկացած է 68 հոդվածից, բնագիրը դեռևս անհայտ է»⁹⁷:

Ե. «Վասն զինուորաց սահմանադրութիւն» կամ «Զինվորական օրենքներ»⁹⁸: Լամբրոնացու թարգմանած այս օրենքը համարվում է որպես «էկլոգա»-ի 3-րդ հավելված⁹⁹ և բաղկացած է 56 հոդվածից: Այս օրենքների ժողովածուն հին ծագում ունի և կիրառվել են դեռևս Հին Հռոմում: Այնուհետև դրանք մտել են Հուստինիանոսի 533 թ. հրատարակված օրենքների ժողովածուի մեջ («Դիգեստներ», 49-րդ գիրք, 16-18 տիտղոսներ զինվորական գործի մասին):

Հետագայում, 8-9-րդ դդ. զինվորական օրենքները կազմել են «էկլոգա»-ի երրորդ հավելվածը և կիրառվել ոչ միայն Բյուզանդիայում, այլև Կիլիկիայում, մինչև այստեղ հայկական պետականության կազմավորումը:

Ներսես Լամբրոնացին այդ օրենքները թարգմանելով հունարեն բնագրից, նպատակ է ունեցել հայոց պետության բանակի համար անհրաժեշտ զինվորական կանոնադրություն ստեղծել: Հավանաբար այդ օրենքների թարգմանության մասին տեղյակ է եղել Լևոն Բ թագավորը, որի հավանությամբ էլ այն գործադրության մեջ է դրվել:

«Զինվորական օրենքները» նախ և առաջ կանոնադրություն էր, որը կարգավորում էր զինվորական ծառայությունը ընդհանրապես, այսինքն՝ սահմանում էր ծառայության ժամկետները, հրամանատարական կազմը, զինվորական ծառայողների իրավունքներն ու պարտականությունները: Այն պարունակում էր նաև բազմաթիվ հոդվածներ հանցագործության և պատժի մասին:

Հունա-բյուզանդական (հռոմեական) օրենքների թարգմանությամբ և խմբագրությամբ Ներսես Լամբրոնացին ձգտել է բավարարել առօրյա իրավական պահանջները Կիլիկյան հայկական պետությունում և, որոշակի վերապահումով (օրենքների գործադրման մասին պատմական աղբյուրների բացակայությունը) կարելի է պնդել, որ այդ օրենքները այս կամ այն չափով գործադրվել են մինչև Սմբատ

⁹⁶ Հրատարակվել է «Բանասեր» ամսագրում, Փարիզ, 1907, էջ 14-18:

⁹⁷ Ն. Գ. Զարբհանայան, Թարգմանութիւնք նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 755:

⁹⁸ Հայերեն բնագիրը հրատարակվել է .Բանասերե ամսագրում, Փարիզ, 1902, էջ 321-328:

⁹⁹ St u Медведев И. П. Развитие правовой науки Византии. Культура Византии,- М, 1989, с. 222-223.

Մպարապետի օրենսդրական գործունեությունը:

Եվ ինչպես նշում է գերմանացի գիտնական Հուբերտ Կաուֆհոլզը. «Ձեռագրերի մեծ թիվը խոսում է այն մասին, որ «Համառոտ ժողովումն»-ը, ինչպես նաև Ասորահռոմեական դատաստանագիրքը և Բյուզանդական ծագման մյուս բնագրերը գործնականում մեծ դեր են խաղացել»¹⁰⁰:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ հռոմեական իրավունքը անմիջականորեն չի ընդօրինակվել հայ իրավական համակարգում, այլ միջնորդավորված ձևով, հիմնականում հունա-բյուզանդական օրենքների թարգմանությամբ որոշակի ազդեցություն է ունեցել հայ ազգային օրենսդրության ձևավորման վրա:

Հավելված

Ծրագիր

«Հռոմեական իրավունք» դասընթացի

¹⁰⁰ Տե՛ս .Պատմա-բանասիրական հանդես, N 2,1997, էջ 204: 78

**Թեմա 1. Հռոմեական իրավունքի առարկան, մեթոդը, համակարգը
և զարգացման հիմնական փուլերը**

1. Հռոմեական իրավունքի պատմական և ժամանակակից նշանակությունը:
2. Հռոմեական իրավունքի առարկան, մեթոդաբանության հիմունքները և զարգացման հիմնական փուլերը:
3. Հռոմեական իրավունքի համակարգը:

Գրականություն 1-ին թեմայի համար.

1. Римское частное право. Отв. ред. И. Б. Новицкий и И. С. Перетерский, Москва, 1948. с. 3-19.
2. **Новицкий И. Б.** Основы римского гражданского права. Москва, 1972, с. 3-18.
3. **Новицкий И. Б.** Римское право. Москва, 1993, с. 6-13.
4. **Гримм Д. Д.** Лекции по догм римского права. Санкт-Петербург, 1909, с 1-19.
5. **Покровский А.** Лекции по истории римского права. Санкт-Петербург, 1907, с. 1-6.
6. **Косарев А. И.** Этапы рецепции римского права. - Советское государство и право, 1991, N 7, с. 123-128.
7. **Косарев А. И.** Римское право. Москва, 1986, с. 3-16.
8. **Хаусманигер Г. О.** О современном значении римского права. - Советское государство и право, 1991, N 5, с. 88-104.
9. **Берман Г. Дж., Рейд Ч. Д.** Римское право и общее право Европы. - Государство и право. 1994, N 12, с. 103-109.
10. **Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна.** Римское право. Москва, 1999, с. 1-5.
11. **Дождев Д. В.** Римское право. Учебник для вузов. Москва, 1996, с. 1-12.
12. **Хвостов В. И.** Система римского права. Москва, 1996, с. 11-15.
13. **Косарев А. И.** Римское право. Москва, 1998, с. 7-68.

Թեմա 2. Հռոմեական իրավունքի աղբյուրները և համակարգումը

1. Իրավունքի աղբյուրի հասկացությունը և տեսակները:
2. Սովորույթ և օրենք:
3. Կայսերական սահմանադրություններ:
4. Մագիստրատների էդիկտներ:
5. Իրավաբանների գործունեությունը:

6. Հոռմեական օրենսդրության կոդիֆիկացիան:

Գրականություն 2-րդ թեմայի համար

1. Римское частное право. Москва, 1948, с. 20-49.
2. **Новицкий И. Б.** Римское право. Москва, 1993, с. 13-33.
3. **Новицкий И. Б.** Основы римского гражданского права, Москва, 1972, с. 19-41.
4. **Кипп Т.** История источников римского права, СПб., 1908.
5. **Синайский В. И.** История источников римского права. Варшава, 1911.
6. Перетерский И. С. Дигесты Юстиниана. Москва, 1956.
7. Дигесты Юстиниана. Избранные фрагменты в переводе и с примечаниями И. С. Перетерского. Москва, 1974.
8. **Муромцев С.** Рецепция римского права на западе. Москва, 1886.
9. **Мидерман В.** Рецепция римского права. Перевод с немецкого. СПб., 1986.
10. Хрестоматия по истории государства и права зарубежных стран. Под ред. З. М. Черниловского. Москва, 1984, с. 43-72.
11. **Косарев А. И.** Римское право. Москва, 1986, с. 19-23.
12. **Косарев А. И.** Римское частное право. Москва, 1998, с. 7-68.
13. **Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна.** Римское право. Москва, 1999, с. 21-24.
14. Дождев Д. В. Римское частное право. Учебник для вузов. Москва, 1996, с. 13-75.
15. **Хвостов В. М.** Система римского права. Москва, 1996, с. 30-51.

Թեմա 3. Հոռմեական պետության զարգացման շրջանները

1. Պետականության ձևավորումը և զարգացումը Հին Հռոմում:
2. Հռոմի պետական կարգը:
 - ա) Թագավորության շրջան:
 - բ) Հանրապետական կարգերը:
 - գ) Միապետության ժամանակաշրջան:

Գրականություն 3-րդ թեմայի համար

1. **Покровский А. И.** История римского права. Санкт-Петербург, 1998, с. 25-116.
2. **Омельченко О. А.** Римское право. Учебник. М., 2000, с. 38-87.
3. **Кучма В. В.** Государство и право Древнего мира. Изд. во «ОФСЕТ», 1998, с. 113-122.

**Թեմա 4. Քրեական իրավունքի և
քրեական դատավարության հիմնական գծերը**

1. Հանցագործության հասկացությունն ըստ հռոմեական իրավունքի և նրա հիմնական տեսակները:
2. Պատիժները և դատավարության հիմնական գծերը:

Գրականություն 4-րդ թեմայի համար

1. **Покровский А. И.** История римского права. Санкт-Петербург, 1998, с. 55-58.
2. Омельченко О. А. Римское право. Учебник. М., 2000, с. 67-87.

Թեմա 5. Հայցեր

1. Պետական դատարանի առաջացումը:
2. Քաղաքացիական դատարանի բաժանումը jus և iudicium-ի:
3. Ընդհանուր հասկացություն լեգիսակցիոն, ֆորմուլար և էքստրաօրդինար դատավարությունների մասին:
4. Հայցերի հասկացությունը և տեսակները:
5. Պրետորական պաշտպանության հատուկ միջոցները:
6. Հայցային վաղեմություն:

Գրականություն 5-րդ թեմայի համար

1. Римское Частное право. Москва, 1948, с. 52-93.
2. **Новицкий И. Б.** Основы римского гражданского права. Москва, 1972, с. 42-58.
3. **Новицкий И. Б.** Римское право. Москва, 1993, с. 33-61.
4. **Гримм Д. Д.** Лекции по догм римского права. Санкт-Петербург, 1909, с. 126 - 147.
5. **Покровский А.** Лекции по истории римского права. Санкт-Петербург, 1907, с. 106-108.
6. **Косарев А. И.** Римское право. Москва, 1986, с. 39-42.
7. **Хвостов В. М.** Система римского права. Москва, 1996, с. 212-222.
8. Косарев А. И. Римское частное право. Москва, 1998, с. 101-165.
9. Дождев Д. В. Римское частное право. Учебник для вузов. Москва, 1996, с. 168-227.
10. **Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна.** Римское право. Москва, 1999, с. 164-

Թեմա 6. Անձինք

1. Անձի իրավունակության հասկացությունը:
2. Հռոմեական քաղաքացիների իրավական դրությունը:
3. Լատինների և պերեգրինների իրավական դրությունը:
4. Ստրուկների իրավական դրությունը:
5. Կոլոնների իրավական դրությունը:
6. Իրավաբանական անձինք:

Գրականություն 6-րդ թեմայի համար

1. Римское частное право. Москва, 1948, с. 34-130.
2. **Новицкий И. Б.** Основы римского гражданского права. Москва, 1972, с. 59-75.
3. **Новицкий И. Б.** Римское право. Москва, 1993, с. 47-61.
4. **Гримм Д. Д.** Лекции по догм римского права. Санкт-Петербург, 1909, с 20-50.
5. **Покровский А.** Лекции по истории римского права. Санкт-Петербург, 1907, с. **148-165.**
6. **Косарев А. И.** Римское право. Москва, 1986, с. 25-29.
7. **Косарев А. И.** Римское частное право. Москва, 1998, с. 101-104.
8. **Дождев Д. В.** Римское частное право. Учебник для вузов. Москва, с. 228-278.
9. **Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна.** Римское право. Москва, 1999, с, 71-95.

Թեմա 7. Ընտանեկան իրավունք

1. Ընտանիքը Հին Հռոմում: Ազնատական և կոզնատական հարազատություն:
2. Ամուսնություն:
3. Ամուսինների անձնական և գույքային հարաբերությունները:
4. Հայրական իշխանություն:

Գրականություն 7-րդ թեմայի համար

1. Римское частное право. Москва, 1948, с. 131-155.
2. **Новицкий И. Б.** Основы римского гражданского права. Москва, 1972.
3. **Гримм Д. Д.** Лекции по догм римского права. Санкт-Петербург, 1909, с. 339 - 360.
4. **Новицкий И. Б.** Римское право. Москва, 1993, с. 62-73.

5. **Покровский А.** Лекции по истории римского права. Санкт-Петербург, 1907, с. 219-230.
6. **Косарев А. И.** Римское право. Москва, 1986, с. 29-37.
7. **Косарев А. И.** Римское частное право. Москва, 1998, с\ 178-190.
8. **Хвостов В. М.** Система римского права. Москва, 1996, с. 361-406.
9. **Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна,** Римское право, Москва, 1999, с. 96-101.
10. **Дождев Д. В.** Римское частное право. Учебник для вузов. Москва, 1996, с. 279-302.

Թեմա 8. Գույքային իրավունք

1. Գույքային և պարտավորական իրավունք:
2. Տիրապետության հասկացությունը և տեսակները:
3. Սեփականատիրական իրավունք:
4. Սերվիտուտների հասկացությունը և տեսակները:
5. Գրավի իրավունք:

Գրականություն 8-րդ թեմայի համար

1. Римское частное право. Под ред. проф. И. Б. Новицкого и проф. И. С. Перетерского. Москва, 1996, с. 145-218.
2. **Дождев Д. В.** Римское частное право. Учебник для вузов. Москва, 1996, с. 303-426.
3. **Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна.** Римское право. Москва, 1999, с. 128-194.
4. **Хвостов В. М.** Система римского права. Москва, 1996, с. 361-406.
5. **Косарев А. И.** Римское частное право. Москва, 1998, с. 104-126.

Թեմա 9. Պարտավորական իրավունք (Ընդհանուր մաս)

1. Պարտավորության հասկացությունը և տեսակները:
2. Պարտավորությունների ծագման հիմքերը:
3. Պայմանագրի տեսակները:
4. Պայմանագրի իսկության պայմանները, նրա բովանդակությունը և պայմանագրի կնքումը:
5. Պարտավորության կատարումը և պատասխանատվությունը չկատարման համար:

Գրականություն 9-րդ թեմայի համար

1. Римское частное право. Москва, 1948, с. 264-276.
2. **Новицкий И. Б.** Основы римского гражданского права. Москва, 1972, с. 140-188.
3. **Новицкий И. Б.** Римское право. Москва, 1993, с. 116-156.
4. **Гримм Д. Д.** Лекции по догм римского права. Санкт-Петербург, 1909, с. 232-290.
5. **Покровский А.** Лекции по истории римского права. Санкт-Петербург, 1907, с. 190-218.
6. **Косарев А. И.** Римское право. Москва, 1986, с. 60-70.
7. **Косарев А. И.** Римское частное право. Москва, 1998, с. 127-168.
8. **Хвостов В. М.** Система римского права. Москва, 1996, с. 326-360.
9. **Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна.** Римское право. Москва, 1999, с. 195-311.
10. **Дождев Д. В.** Римское частное право. Учебник для вузов. Москва, 1996, с. 427-560.

Թեմա 10. Պարտավորությունների առանձին տեսակներ

1. Բանավոր կոնտրակտներ:
2. Գրավոր կոնտրակտներ:
3. Իրական կոնտրակտներ:
4. Կոնսենսուալ կոնտրակտներ:
5. Պակտերը և դրանց տեսակները:
6. Մասնավոր իրավախախտումներից բխող պարտավորություններ:

Գրականություն 10-րդ թեմայի համար

1. Римское частное право. Москва, 1948, с. 381-557.
2. **Новицкий И. Б.** Римское право. Москва, 1993, с. 157-222.
3. **Новицкий И. Б.** Основы римского гражданского права. Москва, 1972, с. 189-251.
4. **Гримм Д. Д.** Лекции по догм римского права. Санкт-Петербург, 1909, с. 292-320.
5. **Покровский А.** Лекции по истории римского права. Санкт-Петербург, 1907, с. 190-218.

Թեմա 11. Ժառանգման իրավունք

1. Ժառանգման իրավունքի հասկացությունը և նրա զարգացումը հռոմեական իրավունքում:

2. Ժառանգությունն ըստ կտակի և ըստ օրենքի:

Թեմա 12 Հռոմեական իրավունքի փոխառումը

Գրականություն 12-րդ թեմայի համար

1. **Косарев А. И.** Римское права. М., 1986, с 113-145.
2. **Муромцев С.** Рецепция римского права на западе. М., 1886.
3. **Виноградов П. Г.** Очерки по теории права. Римское право в средневековой Европе. М., 2010, с. 186-261.
4. **Томсинов В.А.** О сущности явления, называемого «рецепции римского права в западной Европе в средние века» // Նույն տեղը, էջ 262-279.

Գրականություն 11-րդ թեմայի համար

1. Римское частное право. Москва, 1948, с. 236-264.
2. **Новицкий И. Б.** Основы римского гражданского права. Москва, 1972, с. 269-290.
3. **Новицкий И. Б.** Римское право. Москва, 1993, с. 223-240.
4. **Гримм Д. Д.** Лекции по догм римского права. Санкт-Петербург, 1909, с. 360-408.
5. **Покровский А.** Лекции по истории римского права. Санкт-Петербург, 1907, с. 231-244.
6. **Косарев А. И.** Римское право. Москва, 1986, с. 97-102.
7. **Косарев А. И.** Римское частное право. Москва, 1998, с. 185-190.
8. **Дождев Д. В.** Римское частное право. Учебник для вузов. Москва, 1996, с. 561-610.
9. **Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна.** Римское право. Москва, 1999, с 212-331.
10. **Хвостов В. М.** Система римского права. Москва, 1996, с. 421-514.

Գրականություն բոլոր թեմաների համար

1. Սաֆարյան Գ. Հռոմեական մասնավոր իրավունք, Երևան, 1996:
2. **Андреев М. Н.** Римское частное право. София, 1971.
3. **Аннерс Э.** История европейского права (пер. со швед.), М., 1996.
4. **Бабалян Л.** Римское частное право, Ереван, 1998.
5. **Барон Ю.** Система римского гражданского права (пер. с нем.), М., 1909.
6. **Бартошек М.** Римское право. М., 1986.
7. **Беккер К. Ф.** Мифы древнего мира. Всемирная история. Саратов, 1995.
8. **Бирюков Ю. М.** Государство и право древнего Рима. Москва, 1969.
9. **Боголепов П. П.** Учебник истории римского права. М., 1900.
10. **Бокщанин А. Г.** Источниковедение Древнего Рима. М., 1981.

10. **Виноградов П. Г.** Римское право в средневековой Европе. М., 1910.
11. **Галанза П. Н.** Государство и право Древнего Рима. Москва, 1963.
12. **Гримм Д. Д.** Лекции по догм римского права. Санкт-Петербург, 1909.
13. **Гай.** Институции. Пер. Т. Дыдинского. М., 1997.
14. **Дернбург Г.** Пандекты. Пер с. нем., СПб. 1905-1911.
15. Дигесты Юстиниана (Пер. и коммент. И. С. Перетерского). М., 1984.
16. **Дождев Д. В.** Основания защиты владения в римском праве. М., 1996.
17. **Дождев Д. В.** Римское частное право (Под ред. В. С. Нерсисянца). М., 1996.
18. **Иоффе О. С., Мусин В. А.** Основы римского гражданского права. Л., 1974.
19. История государства и права зарубежных стран (Часть I). Под ред. Н. П. Крашенинниковой, О. А. Жидкова. М., 1996.
20. **Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна.** Римское право, Москва, 1999.
21. История политических и правовых учений. Древний мир. Отв. ред. В. С. Нерсисянц. М., 1985.
22. **Кипп Т.** История источников римского права. СПб., 1908.
23. **Кучма В. В.** Государство и право Древнего Рима. Волгоград, 1990.
24. **Косарев А. И.** Римское право. М., 1986.
25. **Косарев А. И.** Римское частное право. М., 1998.
29. **Кофанов Л. Л.** Обязательственное право в архаическом Риме. Долговой вопрос (VI-IV вв. до н. э.). М., 1994.
30. Культура Древнего Рима. Т. 1-2. М., 1985.
31. Латинская юридическая фразеология. Сост. Б. С. Никифоров. М., 1979.
32. **Муромцев С. А.** Гражданское право Древнего Рима. Москва. 1883.
33. **Муромцев С.** Рецепция римского права на западе. Москва, 1886.
34. **Моммзен Т.** История Рима. Т. I-IV. М., 1995.
35. **Новицкий И. Б.** Основы римского гражданского права. Москва, 1972.
36. **Новицкий И. Б.** Римское право. Москва, 1993.
37. **Новицкий И. Б.** Римское частное право. Москва, 1972.
38. **Омельченко О. А.** Римское право. Учебник. М., 2000.
39. **Омельченко О. А.** Всеобщая история государства и права. Том I. М., 1999.
40. **Перетерский И. С.** Всеобщая история государства и права. Ч. I, Древний мир. Вып. 2, Древний Рим. М., 1945.
41. **Подопригора А. А.** Основы римского гражданского права. В 2-х т. Киев, 1990, 1994.
42. **Покровский А.** Лекции по истории римского права. Санкт-Петербург, 1907.

43. **Покровский А.** История римского права. Санкт-Петербург, 1917.
44. Римское частное право. Под ред. И. Б. Новицкого, И. С. Перетерского. В 3 т., М., 1948, 1994, 1997.
45. **Савельев В. А.** Римское частное право. Проблемы истории и теории. М., 1995.
46. **Салогубова Е. В.** Римский гражданский процесс. М., 1997.
47. **Синайский В. И.** История источников римского права. Варшава, 1911.
48. **Скрипилев Е. А.** Основы римского права. М., 1998.
49. **Харитонов Е. О.** Рецепция римского частного права. Одесса, 1996.
50. **Хвостов В. М.** История римского права. М., 1910.
51. **Хвостов В. М.** Система римского права. М., 1996.
52. **Хутыз М. Х.** Римское частное право. М., 1994.
53. **Цвайгерт В., Кетц Х.** Введение в сравнительное правоведение в сфере частного права. В 2 т. Т. 1, Пер. с нем. М., 1995.
54. **Черниловский З. М.** Всеобщая история государства и права. М., 1973.
55. **Черниловский З. М.** Лекции по римскому частному праву. М., 1991.
56. **Черниловский З. М.** Римское частное право: Элементарный курс. М., 1997.
57. **Санфилиппо Чезаре.** Курс римского частного права. Учебник. Перевод с итальянского. Под ред. Д. В. Дождева. М., 2000.
58. **Mommsen T.** Romisches Strafrecht, 1899.
59. **Mommsen T.** Romisches Staatsrecht, I-III, 1887-1888.